Մի անգամ Էլլիից մի սարսափելի նամակ ստացայ:

«... Ես ո՛չ միայն այլեւս ի վիճակի չեմ պայքարել կեանքի համար, այլեւ գտնում եմ, որ այդ պայքարը ուղղակի անիմաստ է: Ինչի՞ համար ապրել, ո՞ւմ համար ապրել: Կեանքը ինձ համար կորցրել է իր ամրողջ իմաստը...»:

Ես ամէն կերպ աշխատում էի մխիթարել նրան: Գրում էի, որ նա ճիշտ չէ, որ կեանքը չի կարող անիմաստ լինել, որ հարկաւոր է գինուել համբերութեամբ, սիրոյ քեամբ եւ պայքարել:

Ես գրում էի. «Համբերիր, Էլլի, մի յուսահատուիր, մենք գեռ կ'ապրենք իսկական կեանքով...»:

Բայց իմ նամակները մնացին անպատասխան:

Նամակագրութիւնը դադարեց:

Ես նրա ազջկան ոչինչ չգրեցի: Դրանում չէի տեսնում որեւէ իմաստ:

Չաւանարար, Էլլին այլեւս գիմադրելու ուժ չգտնելով իր մէջ, համաձայնուել, որ կեանքն անիմաստ է, իր համար արձակել է սարսափելի վճիռ:

Ես այնչափ ուրախ կը լինէի, եթէ ենթագրութիւններս սխալ լինէին եւ մի օր, թէկուզ եւ հեռուներից, լսէի նրա ձայնը.

— Ես այստեղ եմ... («Սովետական գրականութիւն», *1988, թիւ 6* — հատուած)

ՍՈՒՐԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ



Սերօ Խանզադեան

«Սովետական գրականութիւն» ամսագրում (№ 5–6) հրատարակուած Սուրէն Զագարեանի «Գա չակաք է կրկնուի» յուշապատումը ստալինեան բռնութիւնների ճշմարտացի պատկերը ներկայացնող բարձրարժէք սաեղծագործութիւն է եւ առանձնակի հետաքրքրութիւն է առաջացրել ընթերցողների մէջ: Այդ գործի շուրջն է ծաւալում ներկայացուող զրոյցը, որ վարում է գրիսարնակ արձակագիր-լրագրող Էդուարդ Զոհրաբեանը («Գրական թերթ», 1988, թիւ 49):

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«Այո, դա զպէտք է կրկնուի»

Տուածդ հարցերի պատասխանները — Հէրս ծայր չհաւոր է եղել. սկզբում էի մտմտում: Երեկոյ էր: Անցնում էի Գորիսի Ֆրունզէ փողոցով: Հանդիպեցի Ղարաբաղի ծծարերդ գիւղացի Գրիշա Բաբայեանին: Հարցրի գիւղից:

— Էլ գի՞ւղ է մնացել, դպրոցում բնդամէնը հսաւն աշակերտ ունեմ... Էս վաթսուն տարում ջնջել են է, հեռացել են... 1939ին դպրոցում 300 աշակերտ է եղել:

— Բա դուք ո՞նց մնացիք գիւղում,— հարցրի:

չեն ջնջել: Յետոյ 1932–33ին ոնց է լինում, մի տեղ ասում է՝ ախր մեր Ղարաբաղն էլ Հայաստան է: Կուլակ հոչակեցին ու տարան-կորցրին,— պատմեց նա:

Տրամադրութիւնս ընկաւ: Ախր 1937ին ինձ էլ հեռացրին ուսուցչութիւնից, կոմսոմոլից՝ «իդիոլոգիապէս անհարազատ էլեմենտ»: Կր բռնէին, եթէ փախած չլինէի: Փախայ Միջին Ասիա, ութ ամիս անտուն, թափառա-

կան էի: Այնտեղ էլ լսեցի, որ հօրս՝ Նիկոլայ Խանգպուեանին դնդահակարել են՝ որպէս կուլակ, ժողովրդի թշնամի, տրոցկիստ, հակայեղափոխական...

— Վերակառուցման եւ հրապարակայնութեան մեր օրերում հնարաւորութիւն է առիթ ունենալ իմանալու, պրելու նրանց մասին, ովքեր դոն դնացին անհաւասար պայքարում ստալինիզմի բռնապետութեան դէմ: Ինչպիսի՞ պարբերական մամուլ յաճախ է հանդիպում այդ հարցի շուրջ: Ձէ՞ք կարծում, որ հայ գրողների եւ հրատարակիչների ներդրումը երկիրը ստալինիզմից ազատագրելու, ճշմարտութիւնը ներկայացնելուն դործում բաւարար չէ:

— Այո, չափազանց քիչ է մեր արածը... Կային, հիմա էլ, ի հարկէ, կան հատուկենտ լաւ հրապարակումներ, բայց, կրկնում եմ, արուածը քիչ է:

— Մի չատ պղնիս, ճշմարիտ չափազանցում է հրապարակել «Սովետական գրականութիւն» ամսագրի այս տարւայ 5–6 համարներում՝ «Դա չպէտք է կրկնուի» խորագրով: Հեղինակին՝ Սուրէն Ղազարեանին չեմ ճանաչում, բայց գրուածը չատ հետաքրքիր է, ճշմարտացի ու պղնիս...

— Ի՜նչ լաւ կը լիներ, որ Անդրպետֆաղվարչութեան բաժնի վարիչ Սուրէն Ղազարեանը եւս վախչէր, ազատուէր բանտից, բայց դէ հաւատացել է արդարութեանը... Ընթերցողին խորհուրդ կը տամ կարդալ նախկին ազնիւ չեկիստ (մի բան, որ հազուադէպ էր) Ղազարեանի յուշերը: Դա մեր կեանքի 30–40ական թուականներուն ստալինեան ոճրագործութեան համաժողովրդական դժբախտութեան հանրագիտարան է: 19 տարի այդ մարդը, նրա հետ նաեւ չորս-հինգ միլիոն անմեղ-ազնիւ մարդիկ, մարդակեր Սաալինի եւ նրա ոճրագործ կամակատարների «էն աշխարհում» է եղել:

Ընթերցողը թող կարդայ այս գիրքը, սթափանայ եւ մի քիչ օրհնանք ապրելու օրերին, յատկապէս XXVII համագումարից յետոյ... Դեմոկրատիան, վերակառուցումը լայն դարպասներ են բացում նշմարտութեան ու արդարութեան առաջ: Շատ անգամ եմ ասել, հիմա էլ ասեմ՝ բոլոր գաղափարներից ինձ համար սրբազանը ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ է: Այդ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ սեւ էջերն է մեր առջեւ բացում Ղարսի գաւառակ, հին բոլշեւիկ, չեկիստ Սուրէն Ղազարեանը: Նրա յուշերը կարդալիս մտովի տեղափոխուեցի 50–55 տարի առաջ...

Քսանմէկ տարեկան պատանի, նայում եմ չորս կողմս: Անլեզու էակներ ենք տնով-տեղով, ժողովրդով: Յիշում եմ, գլխիս մէջ մուրճի հարուածի նման գրնգում էր· «Ա՛յ անիծուած աշխարհ, ախր ես չեմ ուզում սարուկ դառնալ, չե՛մ ուզում...»:

Դէ, ինչպէս փառք չտաս դեմոկրատիային, վերակառուցմանը, որ 280 միլիոն ժողովրդին, տառապած ժողովրդին ուզում է դնել մարդավարի կեցութեան մէջ:

— Դուք, Սերօ Նիկոլաեւիչ, կրել էք դժոխային այդ ժամանակի ականատեսը: Ինչո՞ւ ժողովրդի դլխավերեւում կապարի ծանրութեամբ քանձրացաւ օդը, որո՞նք էին Սաալինի կողմից իրականացուող վայրագութիւնների դրդապատճառները:

— Չգիտեմ ինչպէ՞ս ներկայացնեմ այդ իրօք դժոխային ժամանակը, որ հասկանալի լինի ինձնից յետոյ եկած սերնդին, ասենք՝ որդիներիս ու թոռներիս: Դրա պատկերը կայ համաշխարհային գրականութեան մէջ: Դանթէն, մեր Նարեկացին... Սակայն դրանք էլ հազիւ թէ տան այն սարսափների հոգեբանութիւնն ու պատկերը, որ ապրեց իմ սերունդը: Չալածանքներ ասելը քիչ է, տաժանակրութիւնը գուցէ սպի գրան: Եւ դա անհատի, այս դէպքում Իոսիֆ Ջուղաշուիլի-Ստալինի սարքածն ու արածն էր: Նա նոյնիսկ Մոլոտովի ու Կալինինի կանանց էլ ախոր էշեց՝ իբրեւ ժողովրդի թշնամիներ: Մոլոտովն իր կնոջ՝ Ժեմչուժինայի մասին ասում է՝ «Թշնամի է, ուրեմն պէտք է ոչնչանայ»: Թշնամի է իր երեխաների մայրը... Դագանն անդամ տէր է կանգնում իր պատուին, իր էգին:

Յիշում եմ 30ականների ստալինեան լոգունգը՝ «Մարդը ամենաթանկ կապի-

տալն է»: Սա դիւական ծագր էր մարդ արարածի դէմ. եւ ճանի որ մեծ պետութ կոթծանէին կապիտալիզմը, նա էլ սկսեց կոթծանել իր հոչակած կապիտալի մի հատուածը՝ մեր երկրի ժողովուրդներին: «Կապրերն են որոշում ամէն ինչ», սա եւս ստալինեան կոչ էր: Ակսպէս էր ասում ու ոչնչացնում իրեն դուր չեկող կապրերին:

Ստալինիզմը հոչակուեց Հոկտեմբերեան յեղափոխութեան ծնունդ... Դէ ինչ, հին. բարի աստուածներն էլ երբեմն եօթ գլխանի հրէշ էին ծնում: Միայն թէ. անկեղծօրէն ասած. զարմանում եմ, թէ 30-40ական թուականների մեր սերունդը. նաեւ մեր աւագ սերունդը ինչպէս էր ոչխարի հնազանդութեամբ ենթարկում գայլին: Ստալինի բռնապետութեան ընթացքն էլ՝ ահ ու սարսափ տարածելով. «ժողովրդի թշնամի» պիտակի տակ գիտնական ու հոգեպորձ. գրող ու զօրավար ոչնչացնելով. պահպանել իր արիւնոտ գահը. կուռքի պաշտամունք ստեղծել իր անձի շուրջը:

— Մեր երկրի բոլոր ժողովուրդներին էլ անձի պաշտամունքը արհաւիրքներ բերեց: Սակայն, իմ կարծիքով, ամենից շատ մեզ՝ հայ ժողովուրդը: Ինչ կարող էք պատմել Հայաստանում, նաեւ Ձեր հայրենի Գորիսում այդ ժամանակի դէպքերի, անցուդարձերի մասին: Որքան գիտեմ, դուձի մարդկը դիպած նաեւ ձեր բնակիչներին:

— Ամենաահաւորը. ամենաանմարդկային դատաստանի ենթարկուեց հայ ժողովուրդը: Դա սկսուեց Լենինի ծանր հիւանդութեան օրերին: Հայերը պէտք է իմանան, որ Վլադիմիր Ահիանդն ու Սուրմալուն օսմանեան թուրքին յանձնողը Ստալինն էր. չպէտք է մոռանան, որ Նախիջեւանը, Վարաբաղը եւ Արցախի այլ շրջանները Բագիրով-Ալիեւ սեւ եռեակի ճիրանների մէջ գնողը Ստալինն էր:

Հիմա իմ հայրենի Գորիսում կատարուածի մասին: Ստալինի հրամանով Զանգեզուրի դաւաճի կէսից աւելին եւս կտրուեց ու յանձնուեց օտարի: Զանգեզուրում 1918-19 թուականներին ժողովուրդը վերջին ճիգերը գործադրելով, բաւարար կոուեց թուրքական (Քինչիկ Նուրի փաշա. Նախիջեւանի) բարբարոս զօրքերի դէմ: Զանգեզուրը եւս 1920ին հայոց Վարդգեսի ու Նախիջեւանի հետ յանձնուած էր Օորաթուի Ադրբեջանին: Զանգեզուրցիները չընդունեցին այդ բարբարոս որոշումը եւ ապստամբելով. բազմաթիւ փոքր Սարդարապատներ ստեղծեցին մեր լեռների մատոյցներում ու Զանգեզուրը պահեցին Հայաստանի մէջ. Հայաստանի համար: Մազերս փշահատում են. երբ յիշում եմ գիշերային համազարկերը մեր աստուածապաշտ ձորերում. անհամար կախաղանները Գրիգոր Տաթեւացու եւ Մովսէս Գորիսեցու շիրիմների մօտ: Բաքուից եկած Ձեկայի զօրամասերը (մէջները՝ նաեւ հայ կոմունարներ) ոչնչացրին բոլոր նրանց, ովքեր երեք տարի շարունակ զէնքը ձեռքին կոուել էին օսմանեան. նաեւ մուսաւաթական քաղաքների դէմ, պաշտպանելով իրենց գաւակներին, իրենց տուն:

Նոյնը արեցին նաեւ իմ ազգիս տոհմի մարդիկ: Բայց արդէն 21ի աշնանից մեր տոհմատուն գլխին իջաւ «բոլշեւիկեան» խաւարը: Բոլոր այն տոհմակիցներս, ովքեր կոուել էին օսմանեան եւ ադրբեջանական նուաճողների դէմ. ոչնչացուեցին: Այն ժամանակ Ստալինը պետական սկզբունք հոչակեց՝ Թուրքիային չնեղացնել. իբր թէ Թուրքիան Արեւելքի յեղափոխական շարժումների ոգին է: Պիտի ոչնչացնել նրանց, ովքեր թէկուզ կէս բերան դառն խօսք են ասում Թուրքիայի մասին:

«Իմաստուն առաջնորդի» այս դատահանական վերաբերմունքը Ռուսաստանի կատարի թշնամի Թուրքիայի նկատմամբ պատմութիւնը հերքեց: Այդ Թուրքիան գաչնակից դարձաւ Հիտլերին՝ ՍՍՀՄի դէմ:

Ցիշենք. մեր ժողովրդի հոգեվարքի ժամանակ. Ստալինի յանձնարարութեամբ, Ֆրունզէն մեկնեց Թուրքիա. հայերի. յոյների. ասորիների. արաբների եւ հրեաների դահիճ Մուսաֆա Քե-

մալ փաշային ճուէր տանելով վիթխարի բանակութեամբ ռուսական զէնիֆ, սովից տառապող Ռուսաստանի բերնից խլելով 300 միլիան ոսկի, հաց ու հանգերձանիֆ, իսկ Թուրքիան դրանիֆ օգտագործեց՝ լիակատար հաչուեյարդար տեսնելու հայերի, յոյների եւ էլի ուրիշ ժողովուրդների հետ:

Իմ ազգատոհմի գլխին բախտած աղէտը շարունակուեց մինչեւ 1929–30ական թուականները: Մեր տոհմի բազմաթիւ ընտանիքներ, կուլակաթափ անելու պատրուակով, բշուեցին իրենց հողից ու օջախներից: Ստալինեան սրով արդէն գլխատուած էր լենինեան ՆԷՊը, մի գործադուրթիւն, որ, ինչպէս Մ. Ս. Գորբաչովն է ասում, գիւղացրկեց մեր երկիրը: Այն, ինչ կատարուեց իմ տոհմակիցների նկատմամբ, կատարուեց նաեւ մեր երկրի ողջ բնակչութեան նկատմամբ: Գիւղացրկուած երկիրը կանգնեց սովի ահաւոր աղէտի առաջ: Համատարած եւ ոչ համատարած կոլեկտիւացումն այդ գիւղացրկման սկիզբն էր, որ շարունակուեց էլի մի երկու տասնամեակ: Եւ, ո՛վ սոսկալիֆ, գնդակահարուած, սոսորուած միլիոնաւոր մարդկանց գաւակները (նրանց թում նաեւ ես ու եղբայրս) բացարձակ կոուեցին Հայրենական պատերազմի ռազմանախատներում եւ երկիրը փրկեցին հիտլերեան ֆաշիզմի ոչնչացնող հեղեղից: Միայն իմ ազգատոհմից այդ պատերազմին մասնակցել են գնդակահարուածների եւ սոսորուածների 38 գաւակներ, որոնցից 16ը զոհուել են յանուն խորհրդային հայրենիքի:

Բայց սրանով չսահմանափակուեց ստալինիզմի ոճրագործութիւնները հայերիս նկատմամբ: 1949ին Ադրկովկասից բռնութեամբ Ալթայ ու Սիբիր քշուեցին 150 հազար հայեր, ոտքր կոտրուած բանաստեղծ Վեսպերից, 104 տարեկան հողագործ Գալուստ Դադալեանից սկսած մինչեւ չոր կանայք եւ մի շաբաթուայ նորածին մանուկներ: Մեր տոհմից՝ երեք ընտանիք: Ինչպէ՞ս մոռանաս սա…

— *Կարապետ ձեր «Ինչպէս յիշում եմ» յուշերի նոր գիրքը, որ սկսում է «Բակունցի հետ» խորագրով: Մեր մեծ հայրենակիցը նոյնպէս գոհ պարձաւ ստալինիզմին: Նշանաւոր գրողի հետ պատրաստել էք մեծ նոյն փոդոցում, ծանօթներ էք եղել… Գրքում ստալինիզմն ամբողջանո՞ւմ է, թէ՞ էլի յուշեր ունէք՝ կապուած Բակունցի եւ նրա ընտանիքի ողբերգական հակասութեան հետ:*

— Յուշերիս նոր գիրքը իմ չեմ համարում: Այն ամբողջական չէ: Դա ամբողջովին խեղուած է, խուզուած, եւ այդ խեղումը կատարեցին առանց ինձ տեղեակ պահելու՝ մեր նախկին գաղափարական ղեկավարների ցուցումով: Իմ նպատակն է նորից իր նախնական վիճակով հրատարակուած տեսնել գիրքս: Կր յաջողուի՞, չգիտեմ: Դեռեւս գոյատեւում են ստալինիզմի հաշիշով մթագնուած պետական եւ կուսակցական ուղեղներ:

— *Իսկ կոնկրետ ի՞նչ են կրճատել գրքից:*

— Ստալինիզմի ամենեղ գոհ Սուրէն Զազարեանն իր գրում ցաւով ու մրմունով է յիշում նաեւ Բակունցի ապաստութիւնը: Ես էլ յիշեցի այդ սեւ օրը: Մէկը Բակունցի մօրը՝ Բոխչագիւլ մայրիկին ասաց.

— Որդուդ բերդում կրակել են էս գիշեր:

Բոխչագիւլ մայրիկն ասաց.

— Էդ իմ տղայի *«Վանպատնց բաղին»* գրուածքից ես կարդում:

— Չէ, է՛, չէ. Ակսելին բերդում կրակել են էս գիշեր:

Բոխչագիւլ մայրիկի ճիչը փոթորկեց Մրնաձորը, Գրնգանը, նաեւ վանդուն Բադու ֆարայրը:

Զազարեանը վերգիլիոս դարձած մեզ տանում է ստալինեան ժամանակների դժոխքի խորխորատներով: Բայց այդ դժոխքն ինձ ծանօթ էր, չեմ մոռացել: Զազարեանի դժոխքում հրեշտակացման տիկիններ, «ժողովրդի թշնամի» տիկիններ կան՝ ոտն, վրացի, ուկրաինացի, հրեայ, ամէն մէկը մօպասանեան, չեխովեան մի կերպար: Ես այդ կերպար-հրեշտակներից մէկին տեսել

եմ, դողացող աջր համբուրել: Դա Ակսել Բակունցի կինր՝ տիկին Վարվառան էր: Հենց տիկին Վարվառայի պատմած դժոխային պատկերներից մէկր ես դրեցի յուշերիս գրքի մէջ 1983ին, սակայն, ինչպէս ասացի, այն կրճատեցին վերուների մեր «զգօններր»: Այդպէս վարուեցին նաեւ Մահարու մասին գրածիս հետ: 1935ին ես նրան տեսել էի, 1947ին նորից տեսայ. ոտքերից յետոյ փշրուած էր, ջարդուած, բայց ոչ խեղուած: Հոգին սպանելն անհնար է: Բայց դէ ինչ ասեմ, Մահարու դժոխքին կարող էի ծանօթանալ նրա յետմահու հրատարակուած գործերում:

Առանց ինձ տեղեակ պահելու մի բան էլ կրճատեցին Մահարու մասին իմ գրածից: 1968 թուականն էր՝ ստալինիզմի բակարդային ատուերր բրեժնեւեան լճացման ճահճի վրայ: Մահարին ինձ մի դիմում տուեց (ես գրողների միութեան կուսքիւրոյի քարտուղարն էի), ընդամէնը մի նախադասութիւն. «Քանի որ իմ եւ կոմունիստական կուսակցութեան միջեւ տարաձայնութիւնները վերացել են, խնդրում եմ ինձ ընդունէք կուսակցութեան մէջ»: Բայց բրեժնեւեան մկրատր դա էլ կտրեց յուշերիս գրքից: Նոյն կերպ վարուեցին Սեւակի մասին գրուած յուշերիս հետ: Ջնջեցին անմեղ շատ մարդկանց կորստեան մատնած ցնծալի Շոլոխցի, Գուրգէն Հայկունու եւ էլի անուններ... Իսկ ահա Ղազարեանի յուշերում թուարկում են ժամանակի «խոշոր եղջերաւոր» մարդակերների տասնեակ անուններ...

— Դժուար չէ պատկերացնել, թէ սահմանադրական տարիներին ինչ վիճակում էին հայ գրականութիւնը, հայ գրողները...

— Այո... Դրա պատկերն է հենց վերջերս հրապարակուած Ռափայէլ Աբրահամեանի բանտային յուշերը: Ցիսուն տարի շարունակ մեր գրականութիւնը դարձրել էին կորամէջք սպասարկու: Արգելուած էր տալ «Արեւմտեան Հայաստան», «Հայկական Վարաքաղ», «Հայկական Նախիջեւան» անունները: Ցիսուն տարի մեր բերանը ծեփել էին, ոչ չբացուի «ենիճոն» քաոի համար: Մեր գործերից ջնջում, դէն էին նետում ահսոր, բանտ, Սիբիր հասկացութիւնները: Եւ ի՜նչ հրաշալի է, որ Սուրէն Ղազարեանն իր գիրքն անուանել է «*Դա չպէտք է կրկնուի*»:

Այո, դա չպէտք է կրկնուի:

Ս. Ղազարեանի յուշերում այսպիսի տող կայ. «*Հիանդ ոտքս վիրակապն էլ արեակիզին բռնում*»: Ի՜նչ գազանութիւն հիւանդի նկատմամբ: Բայց ինձ համար սա եւս նորութիւն չէ: 1949ին մեր ազնիւ բանաստեղծ վեսպերին ահսորեցին: Երբ վերադարձել էր, ինձ ասաց.

— Ոտներս մէկ օր առաջ բնկել էի, ոտքս կոտրել: Այդպէս էլ ոտքս կոտրուած ինձ հարշ տուեցին, գցեցին «աուոլիպինեան» բանտ-վագոնը:

Բարբարոսութիւն է գործադրուել ոչ միայն գրողների նկատմամբ: Մեր երիշէն գիւղացի 104 տարեկան հսոգործ Դադալուցց Գալուստ պապին 1949ի Յուլիսին պոկում են ադհատիկ անկողնուց, գցում Չեկայի ատոմեքենայի մէջ: Հետագայում նրա փոքր տղան, ահսորից ազատուած հողագործ Յակոբն ինձ հաղորդեց իր հօր խօսքերր. «*Ա՛յ բալա, վերցրու ինձ մաշինից գոնէ գնար, քոդ մեր հոգում մնանէմ*»:

Այսպիսի շատ պատկերներ կր տեսնենք բարեկամիս, հօրս ահսորական ճակատագիրր կիսող Ս. Ղազարեանի յուշերում: Դրանք համոզում են, որ ճամբարային-բանտային վիճակի մէջ էր ո՛չ միայն գրականութիւնր, այլեւ՝ գրեթէ ողջ երկիրր:

— Եւ նոյնիսկ նման պայմաններում չատերը հաւատարիմ մնացին իրենց պատփարին, չատրացան...

— Այո: Սուրէն Ղազարեանր գրում է. «*Բայց մենք չարունակում էինք մնալ համարել կոմունիստ*»: Շատ տարիներ յետոյ, ձերբակալուած հօրս շղթայած երեան տանող շարֆային ազնիւ միլիցիոներ Տիգրան Ղազարեանր (հիմա էլ փառք Աստծու, ողջ է) ինձ ասաց. «*Հայրդ երեւանի բանտի բակում քարէն*

ինձ ասաց՝ որդիներիս ասա Հայաստանի լինեն խորհրդային կարգերին...»:

Եւ այսօրանից յետոյ մարդ ուզում է թի այն ժամանակուայ «ժողովուրդների հայր» ասուած հրէշի պատկերին:

1944ի փետրուարին Նարուտ գետի պուգդարմում ես մի քանի վիճուտ համալրում ստացայ իմ վաշտում: Մէկը կին էր. բուժքոյր. անուն՝ Լիդիա: Ասաց. *«Ամուսինս եղել է Ուկրաինայի կոմունիստական կուսակցութեան հիմնադիրներից, նրան գնդակահարեցին 37ին: Ինձ աքսորեցին: Կոմունիստ եմ: Հայաստա՛ն, եղբայրս, ես չարունակում եմ ճամբարներում ու բանակում մնալ կոմունիստ»:*

— Բերիայի պիտային կերպարը յայտնի է բոլորին: Յայտնի է, որ նրա անձնական պահակախմբի պետ եղել է ատոր մի հայ՝ ոմն գնդապետ Սարկիսով Ռուֆայել Չարթարեմի, որի մասին իր յուշերում նշել է նաեւ Արբէն Ղազարեանը... Այդ սրիկայի մասին ես կարդացի գինուորական լրագրում, պահեստի գնդապետ Եֆիմ Ռայզոնրոզենկու «Ինչպէս բացուեց կրպակը» խաւտապրտկան պատմուածքում...

— Այո: Նա դժոխային ժամանակի ասածս «խոշոր եղջերաւոր» մտրդակերներից էր... Յուսալի է, թէ հարկ է, բայց փաստ, որ նման ստոր հայեր եղել են: Յիշեմ նաեւ մի բարձրապաշտօն հայի՝ Արզանեան: Սա Նարիմանովի աջ բեւն էր: Սա ու Արմենակ Ղարագէօզեան հայր ամէն ինչ արին, որ Լեռնային Ղարաբաղը անջատուի Հայաստանից ու յանձնուի Ադրբեջանական ՍՍՀին՝ ստրկութեան: Անիծուած անուններ...

— Լսել եմ, որ մեր Գորիսում ժողովրդի հանդէպ ոճրագործութիւնն իւանձնաժողովում էր ինչ-որ Արամ Յարութիւնեան...

— Երբ Ղազարեանի յուշերում կարդում էի Բերիայի հայ թիկնապահի մասին, ինձ թւում էր, թէ տեսնում էի ասածդ Արամ Յարութիւնեանին: Այդ չեկիստ Յարութիւնեանը անբերի կազմուածքով մարդ էր՝ բարձրահասակ, ճերմակած մազերով, գրաւիչ արտաքինով, խաղցրալեզու: Նա, որքան գիտեմ, Ջանգեզուրի պետհաղվարչութեան նախագահն էր, յաճախ էր ասպետօրէն եկմուկ Գորիսի փողոցներում: Մեզ, յատկապէս պատանիներս, հրմայուած էին ներանով: Այդպէս հրմայում են նապաստակի ձագերը ոսկեթագ եւ չնաշխարհիկ գոյներով վիշապ օձից: Այս չեկիստը կայուն էր դանդաղ. գլուխը բարձր: Նրան հետեւում էին մանր-մունր վիշապիկներ, եւ եթէ նա հպեցքը թեքում էր դէպի ուուց չինող կամ հող մշակող որեէ անմեղ մարդու, ապա այդ մարդը նոյն գիշեր կուլ էր գնում նրա վիշապային երախին: Նա դարձաւ Հայաստանի դատախազ, եւ մեր բանտերը լցուեցին անհամար անմեղ մարդկանցով: Մեր Հրազդան գետը կարմրեց Բակուցի, Ջարեցի. նաեւ հօրս արիւնով: Արարատեան դաշտի Արաքսամերձ ափի երկարութեամբ, էջմիածնի մօտերից մինչեւ Նախիջեւան, երկաթուղու աջ ու ձախ կողմերին մորթուած եւ հողով ծածկուած են տասնեակ հազարաւոր հայ մարդիկ, բանտերում տեղ չի եղել նրանց համար, «ստուիպինեան» ախտորավագոնները եւս տեղ չի գտնուել: Այս դժոխային պատկերները եւս իր գործի մէջ յստակօրէն տալիս է նոյն Ս. Ղազարեանը: Աւերուեց նաեւ Ղարաբաղը, մարգի տարեց բնակչութեան երեխից մէկը ոչնչացուեց իբրեւ ժողովրդի բջնամի, նացիոնալիստ, դաշնակցական: Բայց, ի հեճուկս նրանց, Ղարաբաղն ապրում է եւ սկսել է ազատագրական, արդար գործ, յենարան ունենալով մեր օրերում հռչակուած վերակառուցման յեղափոխական շարժումը:

— Սերօ Նիկոլաեւիչ, ես եղել եմ Սիբիրում, Ալթայի երկրամասի մի չարք շրջաններում եւ ասելս այդ «չեչոտ, նեղնական կինոյի» արիւնոտ քաքի հեւաքր. պրանք անակր-անաիրական հայոց գերեզմաններ են: Եւ իմ մէջ այն ապաւորութիւնը մնաց, թէ հայից բացի ոչ ոք չի աքսորուել...

— Ի հարկէ, բոլոր ազգերից էլ աքսորականներ կային, բայց, կրկնում եմ, ամենաահաւոր, ամենաանմարդկային

— Լուսո իրատուն չունենք, գոնի խոսելու հնարաւորութիւն կայ... Գիտի յատուկ կրթաւութեամբ բացայայտել անցեալի յանգգատրծներին, երկաթէ ու վարագոյրների եաեւից լոյս աշխարհ հանել անմեղ զոհաւորաւած մարդկանց անունները... Իսկ դուք, Սերօ Նիկոլաեւիչ, որեւէ նոր գրաւածք ունէ՞ք այդ թեմայով

— Նոր բան չունեմ: Բայց այդ ժամանակների մասին ունեմ 1949–50 թուականներին գրուած մի քանի գործեր, որոնք, պարզ է, անտիպ են: Աւելի հիշո՝ մերժուել են ժամանակին: Բայց դրանք պահել եմ իրրեւ իմ հոգու ամենաթանկ գանձերը, իրրեւ ժողովրդական ողբերգութեան ճշմարիտ պատկերներ: Այսպէս՝ տակաւին 1952ին հրատարակչութեանը ներկայացրի *«Քարերը լիսու ունեն»* պատմուածքիս շարքը, որտեղ կարողացածիս չափ տուել եմ Հայոց Նախիջեւանի գաւառի հայութեան բոնի տեղահանութեան ու ոչնչացման (1921–50 թթ.) պատկերը: Ջտպագրուեց: Երկար ժամանակ մերժըւեց տպագրուել իմ *«Գերեզմանափորի յիշատակարանը»* վիպակը: Դա *«Սովետական գրականութիւն»* ամսագիրը տպագրեց միայն մէկ տարի առաջ, վերակառուցման ու հրապարակայնութեան մեր օրերում: Եւ, վերջապէս, շատերին է յայտնի, որ իմ *«Անդրանիկ»* վէպը արդէն 10 տարի է, ինչ գտնւում է հրատարակչութիւնների ընթերցող ճամբին:

— Սերօ Նիկոլաեւիչ, թոյլ տուէք չնորհակալութիւն յայտնել ձեզ այն ընթերցողների անունից, որոնք միշտ էլ «իրով ու ճամբեր» թեմայով սպասում են ձեր խօսքին («Գրական թերթ», 1988, թիւ 49):

Զրոյցը վարեց՝
ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲԵԱՆ

տառապանքների ենթարկուեց հայ ժողովուրդը... Այթայի Զնամենկա շրջանում չտեսա՞ր իմ ազգակուն, «ժողովրդի թշնամի» Հոկտեմ Խանգամղեանի վերդի թշնամի» Հոկտեմ Խանգամղեանի գերեզմանը: Աֆսորական պատանի եղբայրս առոել է ձիւնիների մէջ: կիսաշուն տարել են հիւանդանոց: Բժիշկ չի մօտեցել 20 տարեկան տղային, ու նա մնացել է նկուղում, սառոյցի վրայ...

Նշումներ արե՞լ ես այդ անտէր-լքված գերեզմանների վերաբերեալ:

— Սրել եմ, Սերօ Նիկոլաեւիչ... Մի պապանիք ասեմ. պիրք եմ գրում Նայ աքսորանքների մասին, չգիտեմ ինչ կարտոնաններ՝ վիպա՞կ, թէ՞ վէպ... Իսկ Հոկտեմի մի գերեզմանը չասնայ... Սակայն յիշում եմ նրա աքսորը, այդ մասին էլ կը գրեմ...

— Շնորհակալ եմ, կեցցես...

— Մի հարց եւս. սաալինիզմից մաքրուելու այս օրերին էլ կան մարդիկ, որոնք «ժողովուրդների հօր» նկարը փակցնում են իրենց տան, աշխատասենեակի պատից, պահում սաքսոկ ծոցերում, չեն կարողանում կամ չեն ուզում բմբռնել նրա հասցրած վնասները: Ձանախ կարելի է լսել. «Սաալինը չլինէր, պատերազմը տանուլ կր տայինք», *կամ՝* «Մոսկուայում ձա մնաց մենակ՝ բիկուճի ուղարկելով Քաղբիւրոյի ամբողջ կազմը...»:

— Այն, որ եթէ Սաալինը չլինէր, յաղթանակ չէր լինի, միամիտ պատկերացում է: Ասեմ: Ստալինը չլինէր, գուցէ թէ պատերազմ էլ չլինէր: Եւ ասա՝ Ստալինի ռազմական համեստ բնդունակութիւնների, նոյնիսկ անկարողութիւնների մասին յստակ պատկերացում են տուել մեր շատ զօրահրամանատարներ, սկսած Ժուկովից... Պատերազմում յաղթեց ժողովուրդը՝ միլիոնաւոր զոհեր տալով, եւ ոչ թէ «ժողովուրդների հայրը»:

Ե. ԽԱԶԱՏՐԵԱՆ

ԴԱՀԻՃՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Սուրէն Ղազարեան, *«Դա չպէտք է կրկնուի»*, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երեւան, 1989:

«Կանխաւ ընտրուած դոհը այլեւս չէր կարող դուրս պրծնել սուրբ դատարանի ճիրաններից. նրան չէր փրկի ոչ պետութեան մէջ կամ եկեղեցում ունեցած բարձր դիրքը, ոչ գիտնականի կամ արուեստագէտի փառքը, ոչ անբիծ ու բարոյական կեանքը»:

«Ինկվիզիցիա», Բրոկհաուզի եւ Էֆրոնի հանրագիտական բառարան

Էգգար Պոն կեանքի վերջին տարիներին գրած խորհրդաւոր ու առեղծուածային գործերից մէկում պատմում է սահմռկեցուցիչ, գրեթէ ցնորական մի պատմութիւն. Ֆրանսիայի հարաւում ճամբորդելիս պատմուածքի հերոսները այցելում են մի նշանաւոր հոգեբուժարան, որ Եւրոպայով մէկ հռչակուած էր հիւանդներին բուժելու նորագոյն մեթոդներով ու համակարգով: Բայց չաս չուառով այս այցելութիւնները յայտնւում են բաւական տարօրինակ, քիչ է՝ ասել, թէ՝ զարմանալի, մթնոլորտի ու հոգեվիճակների, անսովոր ու քաոսնելի միջավայրի մէջ: Անելանելիութեան ու զարհուրանքի զգացումը պատում է նաեւ ընթերցողին: Պարզւում է, որ հոգեկան հիւանդները պարզապէս գրաւել են իշխանութիւնը, հոգեբուժարանի բժիշկներին ու միւսներին՝ բոլորովին առողջ մարդկանց, արգելափակել են հիւանդասենեակներում, նրանց հռչակել վտանգաւոր ու անբուժելի խելագարներ եւ հիմա եկուորների առաջ փորձում են հիմնաւորել ո՛չ միայն «հիւանդների» խելագարութիւնը, այլեւ՝ իրենց հաստատած կարգ ու կանոնը, մինչ այգ աշխարհում չեղած իրենց «արդարութիւնը», «օրէնքը», «համակարգը»...

Էգգար Պոյի պատմուածքի սարսափն է համակում ընթերցողին, երբ կարգում ես Սուրէն Ղազարեանի «Դա չպէտք է կրկնուի» գիրքը: Սուրէն Ղազարեանի գրողական սաղանգը չէ, որ սախպում է յիշել աշխարհի մեծագոյն գրողներից մէկին, այլ այս գրքում պատկերուած սոսկալի կեանքի սոսկալի ժամանակը: Եւ թէեւ Էգգար Պոյի պատմուածքում իշխանութեան (եւ գրութեան) աէրերը հոգեկան հիւանդներն են, իսկ Սուրէն Ղազարեանի գրքում՝ յամենայնդէպս առողջ մարդիկ (համաձայն սադիզմ չի լինում, ապա դա արդէն հիւանդութիւն չէ, այլ՝ ուրիշ մի բան), այնուամենայնիւ այդ զգացումը չի լքում ընթերցողին մինչեւ այս ազնիւ ու անկեղծ գրքի աւարտը: Այս գիրքը գրուած է մեր կեանքի ամենագաժան ժամանակի՝ 1937 թուականի մասին, 1937 թուականի առիթով: Այն գրուած է իբրեւ մանրամասն պատմութիւն մի մարդու, որ անցել է ոչ թէ գանթէական ինչ-որ գրքային գժոխքի պարունակներով, այլ՝ սաալինեան բռնապետութեան բանաերով ու համակենարոնացման ճամբարներով, անցել է, եւ իբրեւ բացառութի՞ւն, թէ՞ պատահականութիւն, ողջ է մնացել...

Իրաւացի է Սուրէն Ղազարեանը, երբ իր գրքի «վերջին գլխում» գրում է, որ «1937 թուականը օրացուցային մէկ տարի չէր...»: Այն չի սկսուել միանգամից ու յանկարծակի, եւ միանգամից էլ չի վերջանում: Դա ահաւոր ու մթացած մի ժամանակ էր, որ մղձաւանջային անլոյս գիշերուայ պէս ծանրացել էր ողջ կեանքի վրայ: Երկրում մոլեգնում էր գաժան աեւորը, բանաերը լի էին ազնիւ ու արդար մարդկանցով... Ամէնուրեք ձերբակալում էին խաղաղ ու անմեղ մարդկանց, ձերբակալում էին՝ առանց որեւէ հիմքի, ձերբակալում էին քաղաքներում ու գիւղերում, լեռներում ու հեռաւոր, անբնակ վայրերում: Ձերբակալում էին առողջներին ու հիւանդներին, ծերերին ու երեխաներին, ուժեղներին ու թոյլերին, նոյնիսկ հաշմանդամներին ու անդամալոյծներին... Ջէին խնայում ոչ ոքի, ձերբակալուածին չէին փրկում ո՛չ նրա փառաւոր, հերոսական անցեալն ու պատմական վաստակը, ո՛չ գիտնականի փառքն ու արուես-

ապգէտի ասղանդը, ո՛չ անբիծ ապրած կեանքը:

Ահաւոր հոգմը իր մէջ էր առել ամէն ինչ ու ամէն բան... Գետուքեան մէջ աճում էր մի վիթխարի աչխարհամաս՝ մարդաստանների ու գահիճների, խոչտանգողների ու սանջարարների վիթխարի բանակով, գժոխանման բանտերով, տաժանավայրերով, համակենտրոնացման ճամբարներով... Մարգկանց ձերբակալում են անսպասելի ու անակնկալ, առանց մարկայնութեան գոնէ նուազագոյն նչոյլի... Մոսկուայում գանուող Սուրէն Ղազարեանը, պետական անուր, միլիոնաւոր մարդկանց ներկայացուած 1937 թուականի Յուլիսի 7ի երեկոյեան, «մի չատ կարեւոր եւ անյետաձգելի գործով», կանչւում է ժողկոմատ եւ ձերբակալւում հարիւր հազարաւոր, միլիոնաւոր մարդկանց ներկայացուած նոյն անհեթեթ ու անհիմն մեղադրանքով՝ պետական դաւաճանութեան մեղադրանքով՝ նրան նետում են մոսկովեան նչանաւոր բանտերից մէկի նկուղային մի գնդանը՝ քսանեօթ մարդ մի քանի քառակուսի մետրի վրայ, առանց օդի ու լոյսի, առանց հացի ու ջրի, առանց մարդկային նուազագոյն իրաւունքների... Սուրէն Ղազարեանի, ինչպէս եւ նրա նման բազմաթիւ մարդկանց համար, սկսւում է մի նոր թուարկութիւն, բացայայտւում է մի ուրիչ կեանք, պարզւում է իրականութեան հրէչաւոր դէմքը, ճչմարտութիւնը երեւում էր իր ողջ մերկութեամբ:

Ի զարմանս իրեն, ձերբակալուածների մէջ Սուրէն Ղազարեանը ճանաչում է չատ յայտնի մարդկանց, պետութեան ու մչակոյթի, գիտութեան եւ գրականութեան բազմաթիւ նչանաւոր գործիչների, նուիրական անունների... Մեծ մասին թւում է, թէ թիւրիմացութիւն է կատարուել եւ չատ չուտով կը չտկուի, որովհետեւ կատարուածը այնքան անհեթեթ է, որ չի կարող չարունակուել... Սուրէն Ղազարեանին կանչում են հարցաքննութեան, եւ նա չուտով համոզւում է, որ հարցաքննութեան կանչուածները գնում են իրենց ոտքով մինչդեռ հարցաքննութիւնից յետոյ նրանց բերում են: Այսպէս է սկսւում ճչմարտութեան բացայայտումը, ճչմարտութեան ճանաչումը: Սուրէն Ղազարեանի գրքի, նրա պատմութեան կարեւոր արժանիքներից մէկը մարդկանց՝ առանձին անհատների ու ամբողջ խաւերի, զոհերի ու նրանց գահիճների հոգեբանութեան բացայայտումն է՝ ճչդրիտ, մանրամասն ու համոզիչ ու հաւաստի չարադրանքով:

Սուրէն Ղազարեանի գիրքը գրուել է 60ա-կան թուականների մեր կեանքի համեմատական դեմոկրատացման եւ ազատութեան ժամանակներում: Գրքի հեղինակը իր չաբադրանքի մէջ բաւական զուսպ է, անկողմնակալ ու հաւասարատես: Գիրքը ոչ թէ յանիրաւի ձերբակալուած՝ ու դատապարտուած մարդու պաժանօրէն յուրացուած կեանքի պատմութիւնն է միայն, այլեւ՝ մի ամբողջ ժամանակաչրջանի ու իրականութեան գեղարուեստական պատկերը: Իրօք, որ նրա մէջ թաքնուած է եղել գրողը, կեանքի երեւոյթների յարահոս ու խուռներամ ընթացքի մէջ նա կարողանում է որսալ էականը, տիպականն ու բնութագրականը: Նրա խօսքը սեղմ է, չարադրանքը՝ ամբողջական ու արտայայտիչ, առանց կենցաղային աւելորդ մարմնամասների եւ պատմական նկարագրութեան... Աննկատելիօրէն նրա պատմութիւնը ընկնում է կեանքի իսր հունը, մի վիճակին փոխարինում է միւսը: Հարցաքննութեանը հետեւում են նոր հարցաքննութիւններ, փոխւում են գործիչները, փոխւում են քննիչները, փոխւում են բանտի խցիկներն ու ձերբակալուածները... Գատմութեան ընթացքին խառնւում են նոր մարդիկ, նոր կերպարներ, նոր գործող անձեր...

Բացւում են կեանքի ու հոգերանութեան, իրականութեան ու ճչմարտութեան նորանոր չերտեր... Սուրէն Ղազարեանին յուզում է ոչ միայն իր անձն ու իր ճակատագիրը, նրան յուզում է յանիրաւի դատապարտուած, մօտենող գազանութեան սարսափներն ու խոչտանգումները տանող բոլոր մարդկանց ճակատագիրը: Ահաւորը ոչ միայն նկարագրուող սարսափներն են ու ֆիզիկական խոչտանգումները, այլեւ այն, թէ ի՛նչ ջանագրութեամբ, ի՛նչ նախանձախնդիր գաժանութեամբ են վերաբերում իրենց զոհերին: Գահիճները՝ մեծից մինչեւ վերջին [redacted]ինանուորն ու վերջին մահակաւորը: Առաւել սարսափելին այն էր, որ նրանցից ոչ մէկը որեւէ կերպ չի արտայայտում իր կասկածը կատարուող երեւոյթների հանգէպ, չի վարանում գոնարար խոչտանգելու հերթական զոհին: Ով գիտէ, դուցէ չեն մտածել, որովհետեւ պարզապէս ընդունակ չեն եղել մտածելու: Նրանք մարդկանց հրամցնում են կեղծ, անհեթեթ մեղադրանքներ, արդէն գրուած, պատրաստի ցուցմունքներ եւ հարկադրում են սարսափել, հարկադրում են մարդկային ու անմարդկային բոլոր միջոցներով: Նրանց գազանային երեւակայութիւնը յօրինում է սանջանքի ու կատանքի նորանոր ձեւեր:

«Սեւ գործի հեղինակները իրենց հրէշաւոր

ճպատակների համար հաւաքագրում էին մարդկային տակաճմճներին, գինում կըտաւաճմի գործիքներով, հրահրում ցրաց մէջ վայրենի բնազդներ»: Համեմատելն անգամ սարսափելի է, բայց իսպանական առաջապելական ինկվիզիցիան, սկսած 1481 թուականից, ինչպէս պատմութիւնն ու պատմականից, ինչպէս պատմութիւնն ու պատմական փրներն են վկայում, հետապնդել է 341021 մարդու, որոնցից մահուան են դատապարտել 31912 մարդ: Եւ այսքանը՝ աւելի քան չորս հարիւր տարում: Մինչդեռ մեր Հայրենական «մաղացը» մի քանի տարում ոչնչացրել է միլիոնաւոր մարդկանց... Տեսնես, ո՞ւր էր «դարաշրջանի խելքը, պատիւը եւ խիղճը», ո՞ւր մնացին պայծառ ու երջանիկ կեանքի մասին փայլուն ճառերը...

Հարցաքննութիւններին ու կատանքներին յաջորդում է այսպէս կոչուած դատավարութիւնը, երեք – չորս րոպէանոց մի բալագան, մինչնադարեան միսաերիաներից առնուած գրառեակ ու դաւեչա... Տասը տարուայ աքսորի վճիռը պէտք է ընդունել իրրեւ երանութիւն, իրրեւ անձնական երջանկութիւն, մնացածներին դատապարտում են գնդակահարութեան, իսկ քանի՛ – քանիսը մեռնում են բանտում, հարցաքննութիւնների ժամանակ:

«Մաղացից» հրաշքով փրկուած մարդուն սպասում են զանազան բանտերը՝ Թբիլիսիի, Մուկսալմա կղզու, Սոլովեցկի, Օրիոլի, Սուխանովկայի, Տորոլսկի, Վլադիմիրի, մէկը՝ միւսից զաղիր, մէկը՝ միւսից դաժան, մէկը՝ միւսից դժոխային..

Սուրէն Ղազարեանը հրաշալի տարրալուծումով բացայայտում է այն դժոխային հոգեբանութիւնը, որ իշխում է կառավարող շրջաններում, իշխանութեան գլուխ կանգնած մարդկանց մէջ, մարդիկ, որոնք կառափնարան են քշել եւ տաժանավայրերն են քշում միլիոնաւոր մարդկանց: Նոյնիսկ դժուար է դրանց մարդ կոչելը. երեւի թէ դրանց մարդ կարելի է կոչել միայն բնագիտօրէն... Սիւժետային պատմութեան մէջ են ներհիւսւում կենսագրութիւններ, գէպքեր, երեւոյթներ, որոնք բնորոշում են երկրի կեանքը... Սուրէն Ղազարեանը պատմում է մարդկութեան երբեւէ ծնած ամենաարիւնարբու ճիւաղի՝ Ստալինի, եւ նրա նոյնքան արիւնարբու վոհմակի մասին (բառեր ու անուններ կան, որոնց գրելն ու կրկնելն անգամ նողկանք է պատճառում), հրէշներ, որոնք ստեղծեցին ու կառավարեցին ստալինեան բռնապետութիւնը...

Սուրէն Ղազարեանի գիրքը մինչեւ վերջին էջը կեանքի անդադար ճչմարտութեամբ լեցուն գիրք է: Այն շատ աւելի բարձր երեւոյթ է, քան սովորական յուշագրութիւնը: Ըստ էութեան, դա մի ամբողջ դարաշրջանի հատկագրած մեղադրական խօսք է, մարդկային ու բարոյական մեծ ուժի խօսք... Մինչեւ յոյս տեսնելը այս գիրք կարդացել – «գրախօսել են» երկու նշանաւոր մարդիկ, երկու բացառիկ անհատներ՝ Ալեքսանդր Տվարդովսկին եւ Վարոյր Սեւակը, մարդիկ, որոնց կեանքը, ըստ էութեան, եղել է պայքար ամէն տեսակ բռնութեան դէմ, յանուն բարութեան, լոյսի, ազատութեան ու ճշմարտութեան: Այլ ելք չունենալով, նրանք նամակ են գրել գրքի հեղինակին: Տվարդովսկու նամակը ապագրուել է իրրեւ գրքի նախաբան, Վարոյր Սեւակի նամակը՝ իրրեւ վերջարան: «Ձեր գիրքը պարտքի հատուցում է, վաստակ, իրապատուկ արխրութիւնը, որովհետեւ գրելու համար միայն ցանկութիւնը բաւարար չէ, պէտք է եղել ահռելի կենտրոնացում, նամք, պատրաստակամութիւն, ներից հոգու ծալքերով անցկացնելու այն ամէնը, ինչն արդէն ներանում այդպիսի դաժան հետքեր է թողել, ի վերջոյ ջանք, հոգեկան եւ ֆիզիկական ուժերի վատնում-լարում»,— գրել է Ալեքսանդր Տվարդովսկին: «Այս գիրք էք գրել, եզակի արժէք ունեցող գիրք, Ձեր մէջ ամբողջ ժամանակ թաքուն ապրելիս է եղել գրողը: Սուր, կրճատ, առնական ոճ ունէք, զարմանալի յիշողութիւն, ներք դիտողականութիւն, ազնիւ մարդուն յատուկ անկեղծութիւն»,– գրել է Վարոյր Սեւակը: Քիչ հեղինակներ կան, որ գրականութեան հարցերում գժուարահաճ ու խստապահանջ այս երկու անձանց կողմից երբեւիցէ արժանացել են նման գնահատականի: Սուրէն Ղազարեանի գիրքը խղճի ու արդարութեան վկայագիր է, որ շատ դժուար է ասելու իր գալիք ընթերցներին թէ՛ մեր ժամանակի, թէ՛ մեր կեանքի, թէ՛ այս գրքի հեղինակի մասին:

Սուրէն Ղազարեանի գիրքը ծնունդ է մարդկային մեծ ողբերգութիւնից: Եւ իր այդ բնութագրով, այս գիրքը կարող է դրուել վաւերագրական նոյն աստակի գրականութեան քարձր ու բացառիկ այլ գրքերի՝ Վաւլամ Շալամովի, Լեւ Ռազգոնի, Աննա Լարինա-Բուխարինայի եւ այլոց յուշագրութիւնների կողքին:

Այս գրականութիւնը բարոյական մեծ ուժի գրականութիւն է, եւ անհրաժեշտ սերունդներին: Այս գրքերի մէջ պատասխանել դահիճներ իրենց դէմքը պիտի տեսնեն, եւ մենք էլ ճանաչենք մեզ, մեր ժողովրդին, այս իրականութիւնն ու այս կեանքը («Նորք», 1989, թիւ 5):

ԵՈՒՐԻ ՄԱՋԱՏՐԵԱՆ



ՎԱՀՐԱՄ
ԱԼԱՋԱՆ

ՎԱՀՐԱՄ ԱԼԱՋԱՆ

Բանաստեղծ, արձակագիր և պրակտն — հասարակական գործիչ Վահրամ Ալազան (ասպանի անունով՝ Վահրամ Գարագաշեան, նաեւ՝ Գարագաշեան) ծնած է 19 Մայիս 1903ին, Արեւմտեան Հայաստանի Վան քաղաքը։ 1915ին կը պատքէ Երեւան։ 1918–1922 տարիներուն կ՚աշխատի Երեւանի տպարաններուն մէջ՝ իբրեւ պրոֆեսիոնալ տպագրիչ։ 1922ին մուտք կը գործէ մամլոյ ասպարէզն նախ եւ 1922–1930 կը տառնձնէ «Տպագրական բանուոր», իսկ 1932–1936՝ «Գրական թերթ»ի խմբագիրի պաշտօնը։


Իբրեւ պրակտն — հասարակական գործիչ՝ 1923–1932 վ. Ալազան կը պատնայ Հայաստանի պրոլետարական ասոցիացիայի նախագահ, իսկ 1933–1936՝ Հայաստանի Գրողներու միութեան վարչութեան ատենի քարտուղար։

Վ. Ալազան կը հրատարակէ 34 անուն արձակ, չափածոյ եւ հրապարակագրական հատորներ ու գրքոյկներ, որոնց գլխաւորներն են՝ «Մահառումներ», «Բանաստեղծի սիրտը», «Յուշեր» եւ «Յիշողութիւններ եղիշէ Չարենցի մասին» չափածոյ եւ յուշագրական հատորները։

Վ. Ալազանի գործերն ամբողջ քարգմանուած էն ուսերէնի եւ խորհրդային այլ լեզուներու, իսկ ինք հայերէնի քարգմանած է ռուս եւ վրացի կարգ մը գրողներու բանաստեղծութիւններն ու արձակ գործերը։

Վահրամ Ալազան կը մահանայ 17 Մայիս 1966ին, Երեւանի մէջ։

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ



ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ 40 ՄԻԼԻՈՆ ՋՈՀԵՐԻՑ ՄԵԿԸ ԴԱՐՁԱՎ ՎԱՀՐԱՄ ԱԼԱՋԱՆԸ, ՈՐԻ ՀՈՒՇԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ։ ԴՐԱՆՑՈՒՄ ՈՄԱՆՔ, ԹԵՐԵՎՍ, ԳՏՆԵՆ ԻՐԵՆՑ ԿՈՐԱԾ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ։

Վ. ԱՒԱՁԱՆ

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Յուլիսի 19ին ինձ կարպատրնցին պուրս պալ իջից: Կամերականներէ հետ համրուրուելու ցնեաց պուրս ևկայ, այն հասատա համոզմամբ, որ պիտի ևմ պղպակահարուելու:

Հանիչի ուղևկցութեամբ անցանք բանտի նեղ միջանցքով եւ մտանք պարեատուն: Այստեղ բանտային մի պաշտօնեայ կարծես թէ ինձ էր սպասում: Նա անմիջապէս իրերս վերցրեց եւ չատպեց պարեատանի դռնից ներս: Այս արարքը ինձ հասատա համոզեց, որ տանում են պղպակահարութեան:

Այդ պահին ինձ մօտեցան Ն. Գ. ժողկոմատի համապետնատ հատած երկու երիտասարդներ, դոյդ քեւերից բռնած, ինձ քարշ տալով բարձրացրին սատիճաններն իվեր: Այդպէս քաշքշելով ինձ տարան չէնքի երրորդ յարկը եւ մտցրին մի սենեակ:

Սենեակում, սեղանի մօտ նստած էր Ն. Գ. ժ.ի համապետնատով մի պաշտօնեայ: Սենեակի երկու անկիւններում դրուած էին երկու պահարաններ, ինձ պցեցին թեք դրած պահարանների մէկի յետեւ, որը վանդակի տպաւորութիւն էր թողնում:

Ծալապատիկ նստեցի յատուկին. դրպանիցս հանեցի էժանագին «չախմատ» ծխախոտի մի տուփ եւ սկսեցի ծխել: Զարհնցի խօսքերով տատծ՝ ծխում եմ, ծխում ու մուժով լցուում: Մտածում եմ՝ ինչու են ինձ պցել այս վանդակը, կամ ինչ են անելու ինձ հետ: Մինչ այս մտքերի մէջ էի, մի մարդու էլ բերին ու պցեցին միւս պահարանի յետեւը: Ո՞վ էր այդ գժրախտը՝ չիմացայ:

Երբ լրիւ ցուատցաւ՝ ներս մտաւ բանտի աշխատակիցը, ձեռքին բռնած իմ օրապահիկը՝ 600 գրամ սեւ հաց, 20 գրամ չաքար, եւ մի բաժակ եռացրած ջուր: Դրանք վերցրեցի եւ մի կողմ դրեցի. նոյն աշխատակցին գրամ տուի եւ խնդրեցի, որ ինձ համար վեց տուփ «չախմատ» գլանակներ գնի: Կէս ժամ չանցած ուզածս բերեց:

Նոր քաֆով սկսեցի ծխել: Անորոշութիւններից գլուխս պայթում էր: Վերջապէս ոխակ արեցի դիմել սեղանի մօտ նստած պաշտօնեային.

— Ներեցէք, դուք չգիտէ՞ք՝ ինչու համար են ինձ պցել այս անկիւնը:

— Վախար կը պայ, կ՝իմանաս,— պատասխանեց նա խորհրդաւոր տոնով:

Վերջապէս այդ «վախարը» եկաւ: Ներս մտաւ դինուորական համապետնատով մի մարդ, իմ անկեանը մօտենալով՝ ատաց.

— Ձեզ դատելու է Միութենական Գլխաւոր դատարանի դինուորական կոլեգիայի չրջիկ սեսիան: Ստորագրեցէք ձեր ծանօթագիրը եւ վերցրէք ձեր մեղադրական եզրակացութիւնը:

Ես ատրապրնցի այն եւ վերցրնցի մնպատրաստներ: Այն կարդալով մա-
պնտ բիզ-բիզ կանգնեցին: Այնտնզ պրատած էր մատաս արտպզս հետնւնալ.

«1936 թուին, ն. Գ. ժ. կ-ի արպատնվրը Հայաստանում ժ բոլշնվիկն ար-
տարկիատական, ատտարիատական, վնատատարատական, պրնլետարն-
կան, ապատատմրատկան բնդյատատկնտ մր կատմատկերպտ թիւն, որը պրատա-
րատ էին Սահակ Տէր-Գատրիէլնանը եւ Ատատի Յատնջնանը: Այդ կատմատկեր-
պտ թիւնը նպատատակ էր պրնլ ատտորի, վնատատարտս թնատն, պրնլետարյի, բոլ-
տս թնատն եւ պինատած ատպատատմրտս թնատն միջոցով Հայաստանում ատատալիզ
տվնտատական իշխանտս թիւնը եւ վերատկատնպնլ կատպրատլիտատական իրատ-
կատրգը:

«Այդ կատմատկերպտ թիւնը լրտնտատկան նպատատակով օպատպրծում էր
Հնկի լայն ցանցը: Այդ կատմատկերպտ թիւնը կատրտած էր կատպրատլիտատական
մի պնտտ թնատն հետ:

«Մնզապրնտ Գատրտպետն (Ալտպան) վահրամ Մատրիրոսովիչը հան-
պիտանում է այդ կատմատկերպտ թնատն ակտիւ անդամներից մնկը»:

Ինձանից յետոյ նոյն մարդը պնտց պիմացի անկիւնում նատած մարդու
մօտ եւ նրան յանձնեց նոյնը, ինչ որ ինձ: Ինչ յետոյ յանցը պժգոհ տոնով հե-
տեւեալ խօսքերը.

— Ես կուտակցական չեմ, ինչո՞ւ էք այտտեղ պրել կուտակցական: Ջանի
ատտաս էի՝ որքան պիմում մտի՝ ինձ կուտակցու թնատն մէջ չէին ընդունում, իսկ
հիմա պրել էք կուտակցական, որ տանէք պնզատատարէ՞ք:

Ես ձայնից ճանաչեցի՝ դա Գուրգէն Մահարին էր: Ամրողջ պիշեր իրար
մօտ հարեւան վանդատկներում տատատել նանք եւ չնանք իմացել իրար ով լինելը:
Ինչպէ՞ս կարող էինք իմանալ, երբ մնզ հսկում էր մի պատիւ:

Մնզապրատկան նպրատկացու թիւնը յանձնելուց մի ժամ չանցած, ինձ մօ-
տեցան Ն. Գ. ժ. կ-ի համատպնտում նրկու նրիտատարդներ. նրանք ատու պնցին
անուն-ազգանուն, ապա գոյք թնւ նրիցս բռնած, ինձ գուրս ատրան աննատ-
կից: Անցանք նրկար մի միջանցքով: Մի փոքր պնում էինք, ինձ չուս էին ատլիս
պնպի պատր կանգնեցնում: Այտպէս ինձ մի քանի անգ կանգնեցնելով ատրան
ու մացրին մի մնծ աննատկ, ուր սնգտանի չուրջը նատած էին բարձրատտիճան
նրկու պինու որականներ:

Ինձ կանգնեցրին աննատկի մէջտեղը, նրկու կողմում կանգնեցին ինձ
բերող «քիկնատատնները»: Գատատրանի նախագահ Օտլովը ինձ ծանօթացրեց
պատարանի կազմի հետ: Ատուցից անուն-ազգանուն, ծննդնան թիւր եւ
ապա հարցրեց.

— Դուք ձնզ մնգատոր ճանաչո՞ւմ էք:

— Նախքան ձեր հարցին պատատխանելը՝ թոյլ ատէք յայտնելու, թէ
ինչ պայմաններում եմ հարցաքննել ինձ եւ ցուցմունքներ վերցրել:

— Չի կարելի,— պատատխանեց պատարանի նախագահը:

— Թոյլ ատէք գէթ տատ բոպէ խօսեմ:

— Չի կարելի:

— Գէթ հինգ րոպէ:

— Չի կարելի:

Գատատրանի նախագահի եւ իմ «տակարկու թիւնը» գնաց չէր ատրում էլ,
երբ գոյք թիկնատատնները թնւ նրիցս քաշելով ինձ գուրս ատրան աննատկից:

Ահա թնզ պատավատրս թիւնը...

(Ի գէպ. 1954 թուականին Մոսկուատյում, երբ պինու որական կոլեկտիւն
վերատնայում էր իմ գործը, ինձ ատրամատրուեց կարդալու իմ «քննչական» պա-
տական նիւթերը: Ես զարմանքով կարդացի, որ իբր պատարանում ինձ մե-
ղադրում էին հանդնչել):

Ջայլ թիկնապահներս ինձ կանոնեցնելով, երևաս վնասի չդիմելով՝ հասցրեցին իմ սենեակը եւ, ինչպէս մի անդէմ իր, չղրաեցին նոյն պահարանի ետեւը:

Թէ ինձ ինչ էր սպասում՝ չգիտէի: Մի՞թէ պնդակահարու թիւն... Նկատեցի, որ ինձ հակող պաշտօնեայի սեղանի վրայ կար «Խորհրդային Հայաստան» թերթի մի համար: Մատնեցի ճակատագիրս որոշել: «Եթէ առեց, ուրեմն ինձ պնդակահարելու են, իսկ եթէ չառեց, ուրեմն խուց եմ վերադառնալու»:

— Քաղաքացի հակիչ, քանի սարի է՝ թերթ չեմ կարդացել, կարելի՞ է ձեր թերթը կարդալ:

— Վերցրէք,— ասաց պաշտօնեան՝ թերթը ինձ մեկնելով: Ես իմ փորձիս սարսափեցի եւ մտածեցի. «Եթէ ընդհանուր խուց պնդայի, ինձ թերթ չէր տայ, ուրեմն հաստատ պնդակահարում են»: Փոխանակ թերթը կարդալու, ես սկսեցի իրար եւս ետ ծռել ու ծռել, բայց հետաքրքրու թիւնս ինձ սիրեց թերթը կարդալ: Թերթի առաջին էջի վրայ տպագրած էր Մայակովսկու «Լենին» բանաստեղծու թիւնը՝ Դէմյան Արամի թարգմանու թեամբ: Հակիչը նկատեց, որ ես բանաստեղծու թիւնը կարդում եմ, հարցրեց.

— Չը, ո՞նց է թարգմանուած:

— Վատ,— ասացի ես,— Գէմյան Արամը անտաղանդ գրող է:

— Իսկ ձեր կարծիքով՝ ովքե՞ր են տաղանդաւոր գրողները:

— Եղիշէ Չարենցը, Ակսել Բակունցը, Դուրգէն Մահարին, Մկրտիչ Արմէնը,— պատասխանեցի ես:

— Ուրեմն, ըստ ձեզ, դուրս է գալիս, որ բոլոր տաղանդաւոր գրողներին բանտարկել են, իսկ անտաղանդները գրում են:

— Ոչ, գրում էլ տաղանդաւոր գրողներ չատ կան:

— Օրինակ,— հարցրեց նա:

— Դերենիկ Դեմիրճեան, Սեւակ Զօրեան, Նայիրի Չարեան, Գեղամ Սարեան, Յովհաննէս Շիրազ, եւ էլի չատ ուրիշներ:

Մեր գրոյցը նոր էր աւարտել, երբ երկու հոգի ներս մտան եւ քեւերից բռնած դուրս տարան գիմացի անկիւնի բնակչին: Նա պահր որսալով՝ ասաց.

— Ես գնացի, Ալօ ջան, մնաս բարով, դուցէ այլեւս չհանդիպենք:

Դա Դուրգէն Մահարին էր:

Մօտաւորապէս կէս ժամ յետոյ ներս մտան իմ «թիկնապահները», ինձ առաջնորդեցին «պատուրան» լսելու պատուիրեցին: Տարան եւ մի բնդարձակ սենեակի մէջտեղում կանգնեցրին:

Դատարանի նախագահ Օլովը սկսեց գաւաճերը կարդալ, բայց ես մչուշտ էի եւ ոչինչ չհասկացայ նրա կարդացածից: Ականջներս սրած սպասում էի «պնդակահարու թիւն» բառին, բայց այդ բառը ականջիս չհասաւ: Դատավճռի վերջում ականջիս հասաւ «հինգ տարուայ ձայնազրկումով»: Ուրեմն, եթէ ձայնազրկում կայ, ինձ չեն պնդակահարում:

Ապա գաւաճրանի նախագահին հարցրի.

— Ներեցէք, ես լաւ չլսեցի, որքա՞ն է վճռել ինձ:

— Հնանք-պնանք, տասը տարի,— ասացին թիկնապահները ինձ դէպի միջանցքը չրջելով, ուր ինձ կարծես սպասում էր մի այլ հակիչ: «Թիկնապահները» ինձ յանձնեցին նրան:

— Քանի սարի տուին, բնկեր Ալոպան,— հարցրեց հակիչը:

— Տասը,— պժգուհու թեամբ պատասխանեցի ես:

— Էլի լաւ էք պրծել,— ասաց հակիչը եւ ապա չարաճճի նայեց,— եթէ դուք իմանայիք՝ ինչե՛ր կատարուեցին այս երեք օրում:

Նա ինձ մի ուրիչ խուց տարաւ, ուր ներս էին բերում վաղարչակ նո-

բենցին: Ես հենց պրան մէջտեղում պրկախատնուեցի եւ համրատուեցի նրա հետ: Այսպէս պրկախատնուած մենք խուց մտանք:

Այստեղ պետին նստած աւտայ հարստատութեամբ Միքայէլ Մտրմանեանին եւ Գէորգ Քոչարին: Քիչ յետոյ ներս բերին Արամ Եգիազարեանին, ժողկոմխորհի գործերի վարիչ Արմենակ Թոքմաջեանին, Գուրգէն Մահարուն, քիմիկ ինժեներ Վասիլի Շահնազարեանին, Քանաքեռ-Զէմ գլխաւոր ինժեներ Սահարնիկովին, ցեմենտի գործարանի պրեզկատոր Վանիա Շամչեանին, Ապարանի հրջկոմի նախագահ Վասիա Մալխասեանին, ինժեներ Գրիգոր Շիրմանդանեանին, կուսակցական աշխատող, Էջմիածնի հրջկոմի քարտուղար Համազասպ Համբարձումեանին, խորհրդային ապարատի աշխատող Յովակ Գարգեանին, պետպլանի աշխատող Հայկ Զալաթեանին եւ Լենինականի մի քանի պատասխանատու աշխատողների:

Իրար գլխի հաւաքուած, ամէն մէկը պատմում էր մինչ պատահելը եւ պատահելուց յետոյ իրենց յոյզերի ու ապրումների մասին: Բոլորն էլ ստացել էին տասը-տասնհինգ տարի: Ամէնից չորայլ պահում էին Վասիլի Շահնազարեանի, Վանիա Մալխասեանի նկատմամբ՝ իւրաքանչիւրին տալով 20ական տարի:

Նատած հաշուում էինք, թէ որ խցից քանի հոգի էր պնացել «պատարան». դուրս եկաւ 400 հոգի, իսկ կենդանի էին վերադարձել 40 մարդ. ուրեմն 10 տոկոսը:

Ջէ, շատ խղճով են եղել մեր «պատարանները» («Գարուն», 1989, թիւ 3 — հատուած):

ՎԱՀՐԱՄ ԱԼԱՋԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ՈՐՏԵ՞Ղ Է Յ. ՇԻՐԱԶԻ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ»

Երեսնական թուականների վերջերին, երբ տօնւում էր հայ ժողովրդի հանճարեղ էպոսի հազարամեակը, Յ. Շիրազն իր ընկերներից մէկին՝ Վարդան Շահխաթունուն դրում է. «Իմ մէջ ոլորւում է «Սասունցի Դաւիթ» ուրուականը, եւ լցւում եմ նրանով: Իմ դրական մեծ գործը գա է լինելու: Ապրում եմ դրանով ու չնչում եմ Դաւթի հետ»:

Էպոսով այսպէս հրապուրուած բանաստեղծը չէր կարող նրա մասին չգրել: Այդ համոզմունքը մեզ սաիպեց որոնել նրա «Սասունցի Դաւիթ»ը: Սակայն արխիւներում հետք չկար: Գոհար քոյրը նոյնպէս յայտնեց, որ ձեռագիր չէ: Հարկադրուած էինք դիմել ընկերներին, երկրպագուներին: Բոլորն էլ համարեա՛ միաբերան ասում էին.

— Ձենք հանդիպել:

Սի պահ թուաց, թէ բանաստեղծը միայն հրապուրուել է այդ թեմայով, նոյնիսկ դրել բնկերոջր, բայց յետոյ հրաժարուել է նրանից: Բայց մենք լաւ իմանալով մեծ բանաստեղծի բնաւորութիւնը, չարունակեցինք որոնումները:

— Ես ձեզի կ'օգնեմ,— մի օր ասաց Ց. Շիրազի երկրպագուներից մեկին Միրաքը,— տեղը գիտեմ...

— Որտե՞ղ է...

— Առաջ ինձ մօտ էր: Ցետոյ պրպնդի պրոդների միս թխեց: Հիմա էնտեղ էլ չկայ...

— Ինչպե՞ս թէ,— զարմացայ ես,— ինչո՞ւ էիր ուրախանում...

— Փուչմանել եմ, շատ եմ փուչմանել, որ Շիրազի ձեռագրերը փուշտով էի պրկէ: Մինչեւ պլիսի բնակայ, արդէն ուշ էր,— պատասխանեց Միրաքը,— որ Շիրազը կենդանի էղնէր կ'ըսէր. «Ախերախտ, ատէ օր ապաշով պահէիր, ես չէի՞ կրնայ կորցնել»:

Բայց նայուածահաճ չեղաւ: Մէկ փուռ էր պնում, մէյ' պրոդների միս թխեր: Եւ մի օր էլ ուրախացած նեղս մտաւ ու սեղանիս դրեց մի կանուչատուն ծրար:

— Գուռայ,— այնպէս ուրախացած ասաց, որ թուաց, թէ պանել է երկրաչարժի օրերին կորցրած Հարազատին,— պատայ ու բերինձի, հոդիս Երբապի առաջ հանդիստ է...

Ծրարում կային երեք բանաստեղծութեան, մէկ երկտողի եւ պոեմի չիրագեան ձեռագրեր:

. . . . . .

Վերջինը պոեմի ձեռագիրն է, որը մեզ է հասել «Սանասար եւ Բաղդասար» վերնագրով: Սակայն այդ վերնագիրը Ց. Շիրազի ձեռագրով չէ: Միրաքը պոեմը անուանել է «Ծովինար»: Կարծում ենք, որ նա ճիշտ է վարուել, քանի որ պոեմի այս հատուածի հէնքը Ծովինարի սխրանքն է՝ անձը զոհելով կատրածից փրկել հազարաւոր անմեղ մարդկանց: Ծովինարին տիրելու համար խալիֆը յարձակւում է Հայաստանի վրայ ու սկսում մարդկանց կոտորել:

Շատ որ ննեց խալիֆը խօլ,
Ինչպէս հեղեղն իր ափերին,—
Շատ որ բնկաւ զօրքերն հայոց,
Կանչեց աղջիկն հայր արքային.
— Հայրիկ, տուր ինձ այդ խալիֆին,
Բարձր մնայ բերդդ կապոյտ,
Լաւ է կորչի մի կոյս աղջիկ,—
Քան արեգակ մի ժողովուրդ:

Հաւատարիմ մնալով հայոց էպոսի աւանդութիւններին, Ց. Շիրազը ստղ առ ստղ կերտում է հայրենասէր կնոջ կերպարը, կին, որը չաս է մահուանից իր ժողովրդի ազատագրման հարցով: Ջրից ծնուած Սանասարն ու Բաղդասարը կատուցում են իրենց բերդը, պաշտպանում հայրենիքը:

Պահպանուել է նաեւ պոեմի այս մասի առաջին տարրերակի ձեռագիրը, որը կազմում է բուն սաեղծագործութեան մէկ երրորդը՝ չուրջ երկուսուկէս տասնեակ քառեակ:

«Ծովինար»ը, մեր կարծիքով, համարում է «Սասունցի Դաւթի» առաջին հատուածը: Ց. Շիրազն այն տուել է Միրաքին, որ նա ապագրէր Լենինգրադի «Բանուոր»ում: Բայց ժամանակին չի հարատարակուել: Իսկ թէ որտեղ կը լինեն պոեմի մնացած մասերը, գուցէ ասեն բանաստեղծի այն երկրպագուները, որոնց նա շատ էր վստահում եւ անընդհատ ձեռագրեր էր ի պահ տալիս... («Վանգարդ», 22 Հոկտեմբեր 1989):

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՀԱՅԿ հրատարակոմի գլխաւոր խմբագիր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶԻ «ԾՈՎԻՆԱՐ» ՊՈԵՄԸ

Շիրազի հետ մտերմական յարաբերութիւնների մէջ եմ եղել դեռեւս այն ժամանակ, երբ նա ապրում էր Լենինականում:

Տարիներ առաջ երեւանում էի: Փողոցում հանդիպեցի Շիրազին: Նա սովորութեան համաձայն հետաքրքրեց Լենինականի գրական կեանքով, ապա ինձ հրաւիրեց տուն: Այն ժամանակ նա դեռ չէր ամուսնացել եւ ապրում էր մօր հետ: Շիրազը ինձ մի հանի բանաստեղծութիւն տուեց եւ *«Ծովինար»* պոեմը՝ խնդրելով, որ տպագրութեան ներկայացնեմ Լենինականի *«Բանուոր»* թերթում: Խմբագրութեան որոշ րնկերներ պատճառաբանեցին, թէ «Սասունցի Դաւթի» յոբելեանական օրերն անցել են եւ այժմ նպատակայարմար չէ պոեմը տպագրել: Այդ մասին տեղեակ պահեցի Շիրազին եւ նա ասաց, որ պոեմը պահեմ ինձ մօտ, վստահում էր ինձ:

Մոռացել էի դրա գոյութեան մասին: Աղէտաւոր երկրաշարժի պատճառով տակնուվրայ էր եղել արխիւս եւ այնտեղից գտնուեց պոեմը, որը ներկայացնում եմ տպագրութեան:

Յ.Գ. Շեռազրի վրայ կատարել եմ շատ անհրաժեշտ ճշտումներ, հանի որ նա պոեմը գրել է հին ուղղագրութեամբ (*«Նորք»*, 1990, թիւ 1):

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻՐԱՍ

ԾՈՎԻՆԱՐ

(Սանասար եւ Բաղդասար)

Հին ժամանակ, հին դարերում,
Մեր հինաւուրց երկրի վրայ
Ելնում էին եւ արշաւում
Բիւր հորդաներ հագած զրահ:

Ահա եւ մեր չնաշխարհիկ
«Սասնայ Դաւիթն» այդ օրերի,
Պատմութիւնը այդ շառաչուն,
Այդ բիւրաւոր կռիւների:

Եւ ես պիտի պատմեմ հիմա՝
Համառօտած, յանգ ու չափով,
Մեր պայքարի էպոսն անմահ,—
կամ թէ մի մաս երգից այդ ծով:

...կար հնաւանդ արքայ մի չար
Արաբների հեռու երկրում,—
խալիֆն էր դա՝ սիրտը խաւար·
խաւար գիշեր կար աչքերում:

Նա արշաւեց խօլ բանակով
Հայոց Գագիկ արքայի դէմ,
Հարկեր առաւ զօր ու զօրմով,
Առաւ կանայք չհնազադէմ:

Երկրորդ անգամ խալիֆը դեւ
Ծով բանակով սպառնական
Ելաւ եկաւ Գագիկի դէմ,—
Ուզեց նրա լոյս աղջկան:

Ասաց,— հարկ չեմ ուզի ֆեզնից,
Ֆո աղջիկը տուր ինձ խաթրով,—
Թէ չէ կաթիլ ֆո աշխարհից
կ'առնեմ ոսկի հարկերն իմ ծով:

— Չեմ տայ,— ասաց Գագիկն
ահեղ,—
Դու կռապաշա, դու գայլ անհաշտ,
Ես մի խաղաղ բերդ եմ շֆեղ,
Ես անկռիւ, ես խաչապաշտ:

Ու կատաղեց խալիֆն այստեղ,
Եւ հրաման տուեց կռուի,—
Մթնեց երկնում արիւնահեղ
կռուի փոշուց դէմֆն արեւի:

Արշաւեցին իրար վրայ
Հայոց զօրերն ու արաբի,
Զարկին, զարկուան ու եօթն
օրուայ
Մարտն էր նման ծով տարափի:

Բերդի բուրգին կանգնած էր դեռ
Ծովինարը այն սիրասուն,
Սիրտը վշտի մշուշ ծով էր,
Տեսնում էր ջարդն ու
արտասուում:

Շատ որ նեղեց խալիֆը խօլ,
Ինչպէս հեղեղն իր ափերին,
Շատ որ ընկաւ զօրքերն հայոց,
կանչեց աղջիկն հայր արքային.

— Հայրիկ, առ ինձ այդ
խալիֆին,
Բարձր մնայ բերդդ կապոյտ,
Լաւ է կորչի մի կայծ աղջիկ,
Քան արեգակ մի ժողովուրդ:

Ու խորհուրդ է անում մոայլ,
Գագիկն իրա համհարզներով,
Ու որոշում,— աղջիկը տալ,
Որ չդառնայ հողն արեան ծով:

Դադար տուեց խալիֆն ագահ
Իր արշաւող հորդաներին,
Եւ խոնարհուեց լոյս աղջկայ
Աչքերի վառ նիզակներին:

Խաղաղութիւն եւ դաշն հիւսուեց
Սրերի մէջ խաչածեւուած,
կապոյտ բերդին արեւ ծագեց,
Օրը խնդաց, օրը թնդաց:

Քաշուեց զօրքը երկրից հայոց,
Գնաց խալիֆն ուղտի վրայ,
Տառաւ ախրած Ծովինարին
Դէպի հեռու երկիրն իրա:

Բայց հայրենի ճանապարհին
Ծովինարը շատ ծարաւեց,
Իջաւ, նայեց Ծովասարին,
Դէմը մի լոյս ադբիւր բացուեց:

— Դուք գնացէք,— ես ջուր խմեմ՝
Ձեզ կը հասնեմ հաւքի թեւով·—
Ասաց հայոց դուստրը խոհեմ,
Գնաց խալիֆն իր զօրքերով:

Ծովինարը ֆայլամոլոր
Իջաւ դէպի խորքն աղբիւրի,
Պարզեց ջահել սիրտը պղտոր,
Ինչպէս գուլալ ջուրն աղբիւրի:

Եւ այն ջրից կոյսը ծարաւ
Մի լիքը բուռ խմեց շոգած,
Ու... Մի կիստա բուռ էլ խմեց
Ու ցամաքեց աղբիւրն յանկարծ:

Խմից, գնաց, բայց կոյս սրտին
Արկն ծակում էր ինչ-որ բան,
Ինչպես գօդը իջնի վարդին,
Կամ ինչպէս սասոյ ծագի անծայն:

Ու կոյան արդէն յղիացել
Ի գարմանիք էր ախտում չորս դին.
— Ո՞ւմ առջեւ է սիրար բացել,
— Ո՞նց է խարել գօո խալիֆին:

— Ոչ, չի խաբել նա ոչ ոքի,
Նա ջրից էր յղիացել,
Հրաշալոյս ջրից ճամբի,
Որից խմեց կոյսը ջահել:

Բայց գարմանիքն էր խօսում չորս դին,
Չէ որ հարսր դեռ չէր ապրել,
Դեռ չէր գրկել գայլ խալիֆին,
Դեռ չէր ջահել բոցր մարել:

Ու իմացաւ խալիֆը դեւ.
— Դահիճ, բեր ինձ գանգը նրա.
Դահիճն իջաւ, որ գլխատէ
Ծովինարին մեր ծովաչեայ:

— Թէ սպանես հիմի դու ինձ,
Երկու մարդ ես սպանելու,—
Խենթ է խալիֆն,— ասա իրեն,
Չէ որ մանուկ եմ ծնելու:

Գնաց դահիճն ասաց ախրած
Արաբների թագաւորին.
— Խալիֆ, հարսը դեռ չի ծնած,
Մեղք է մորթելը ծոցուորին:

— Լաւ, թող ծնի՝ նոր սպանիր,—
Ասաց խալիֆն,— օրեր անցան.
Ծնեց կոյսը այն լուսակիր
Երկու կորիւն արիւծածայն:

Մէկը լիճն էր ու խօլական,
Նա ծնուել էր այն լիճ բոից,
Որ խմել էր մայրը ծարաւ
Հրաշալոյս այն աղբիւրից:

Մէկը մի ինչ թոյլ էր ու չար,
Նա էլ կէս-բուռ ջրից ծնուեց,
Մէկը՝ արծաթ գաւաթ գոհար,
Մէկը՝ ոսկի գաւաթ մի մեծ:

Անուն պրին մանուկներին.
— Մեծր լինի թող Սաւասար,
Լաւ է,— ասին Ծովինարին,—
Փոքրն էլ լինի թող Բաղդասար:

Ու մեկնաւոր խալիֆր դեւ,
Ու չպատնեց մօրր նրանց
Ու հաւատաց, որ ծովից են,
Սուրբ ջրից են նրանք ծնուած:

... Արշաւում էր խալիֆն անդուլ
Բանակներով հարկապահանջ,
Օտարների բերդեր քանդում,
Հարկ էր առնում մեծաշառաչ:

Հոնդում էր փառքը նրա
Երկրէ երկիր՝ իր դրօշին,—
Ու փշրում էր զէնք ու զրահ,
Փարում փառքի վագրի բաշին:

Աղջիկներ էր բերում-հանց հարկ,
Սեւաչ, ծովաչ, խաժաչ, սիրուն,
Ու իր օձէ նիզակի առկ
Թօշնում էին կեանք ու գարուն:

Բայց ու հասաւ վիշտը նրա,—
Իր նիզակը փշրեց մի օր
Քարթվելների ժայռի վրայ
Ու յետ փախաւ բայլամոլոր:

Եկաւ Բաղդատ-աղօթք արաւ
Մահամմայ հին կուռքերին.
— Ինձ արեցին բթագրաւ,
Ոտս փշրի մահուան բարին:

Ու գիշերը երազ տեսաւ,
Իբրեւ կուռքը խօսեց սիրով.
— Թէ մատաղես,— կուռքը ասաւ,—
Եղբայրներին հենց ըն ձեռովդ՝

Չի պարտուի այսուհետեւ
Քո տէգը սէգ, վահանը ըն,
Դու կը դառնաս երկնից արեւ
Աշխարհն էլ նորա՝ ձեռքիդ ներքոյ:

Լուսաբացին խալիֆր չար
Ելաւ ասաւ Ծովինարին.
— Մատաղ պիտի անեմ գոհար
Մեր աչքի լոյս մանուկներին:

— վա՛յ, խոյ չկա՞յ, երինջ չկա՞յ,
Նախիր չուներ՞ս, մատաղ աներս,
Մեզ ես աղում, կեանքս վկայ,
Թէ որբերիս դու սպաներս:

Եւ կատաղեց խալիֆը խեւ,
— Հէ՛յ, Սաճասար մատաղացու,
Հէ՛յ, Բաղդասար, աղաւնու թեւ,
Դուք մատաղն էք իմ աստծու:

Լաց լացեցին–ծովի լացով,
Լաց լացեցին մօր ջերմ գրկում,
Մայրը լացեց գաղտնի մի ծով,
Բայց խալիֆը չէր էլ սգում:

— Թող, թագաւոր ու հայր դու մեր,—
Մանուկները աղերսեցին,
Գնացէք ելնենք լեռ ու սարեր,
Կարօտն առնենք մեր ծովածին,

Նոր գաՙք կը գաՙք, մեզ հաւատա՛,
Երդում կը տաՙք fո կուռքերին,
Կը գաՙք, ու մեզ մատաղ արա՛,
Դու մեր տէրը, մե՛նք fո գերին:

— Հա, գնացէք,— խալիֆն ասաց,—
Բայց թէ չեկաք, սիրաս վկայ,
Ձեր մօր վիզը պիտի կտրեմ,
Իմ երդումին զղջում չկայ…

Եւ գնացին երկու եղբայր,
Ընկան ճորեր, սարեր սիրուն,
Նրանց սրտում վիշտ կար ածայր,
Պաղ էր նրանց սիրտը գարուն:

Տեսան ծովում կանգնած մի ձի,
Մօսիկ գնաց վախվխելով,
Որ ձին բռնի, յանկարծ հէնքն ի
Ու դուրս ելնի լոյս հրաշքով:

Ձին վրնջաց.— Ո՞վ ես, հէ՛յ-հէ՛յ.
— Ծովածինն եմ ես Սաճասար.
Եւ ինչ-հեծաւ ձիուն այն վեհ,
Ծովից թռաւ՝ ելաւ աշխարհ:

Զրահ ուներ նա իր հագին,
Թուր — կայծակին ձեռին առած.
— Եղբայր,— կանչեց Բաղդասարին,—
Արի գնանք, կռուենք ասաց:

Ու գնացին խալիֆի դէմ,
Մոխիր արին երկիրն արաբ,
Եւ թողեցին մնայլադէմ
Հողն ու հանդը նրանց պարապ:

Եւ Սաճասարն արիադէմ
Մօրը առաւ ու միասին
Դուրս գնացին, որ փնտռէին
Մի հայրենիք, արեւ, լուսին:

Եւ եղբօր հետ ոլորուեցին
Լեռներ, ճորեր, fար ու կապան,
Ազատ մի հող որոնեցին,
Որպէս իրենց բախտի ճամբան:

Տեսան մի ջինջ գուլալ առուակ,
Վերից գալիս գետն էր հեղում,
Եւ աննման էր գետից արագ
Նորից գուլալ վճիտ երգում:

— Այս առուակի գլխին շինենք
Մեր տուն ու բերդ, մեր հայրենիք:
— Հա, շատ լաւ է, թէ որ դնենք
Հիմքը նրա ակին մօտիկ:

Եւ գնացին առուակն ի վեր
Եղբայրները fաջակորով,
Գտան՝ դրին իրենց բերդը,
Երկիրն իրենց՝ խօլ ժայռերով:

Բերդը դրին–բերդ ու երկիր
Եկաւ մի ծեր հովիւ հսկայ,
Նայեց, նայեց խոժոռ բերդին
Եւ ահ առաւ սիրտը նրա:

— Այս ինչ սասուն ժարեր են մեծ,
Այս ինչ սասուն ժլերը նի պատ,—
Ասաց ծերը ու խոժոռեց
իր հայեացքը բերդի վրայ:

— Հա, ղող մնայ մեր այս բերդի
Անուճն, ասին, Սասուն մնայ,
Հանց ծերուճին—էլ սուրը չկայ,
Ասին նրանք—ծեր է անմահ:

Այսպէս դրին հիմքը վսեմ
Սասնայ բերդի, երկրի Սասնայ,
Եղբայրները առիւծադէմ,
Իրենց բերդի նման անմահ:

Ե՛ւ տուն դրին, ե՛ւ հայրենիք,
Ծուխը ելաւ, ծուխը կեանքի,
Եւ ծնուեցին Սանասարից
Որդիներն իր՝ զանձը սրտի:

Մէկը ծնուեց Միհրր մեծ,
Անուշածաճ Միհրն անմահ,
Մէկն էլ Դաւիթն առիւծահեծ,
Նայ-պատարագին կրծքի վրայ:


Եւ հօր նման յաւերժացող
Դաւիթը սէգ առաւ անգին
Թշնամու դէմ կայծակնացող
Իր հայրերի բուր-կայծակին:

Զարկեց Մսրայ Մելիքին չար,
Փշրեց նրա գանգը մոխիր,
Եւ համբաւը իր հոդմավար
Ջուեց, գնաց երկրէ երկիր...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

«ՀԱՅՈՑ ԴԱՆԹԷԱԿԱՆԸ»

«ՀԱՅՈՑ ԴԱՆԹԷԱԿԱՆ»Ի ՁԱԿԱՏԱԳԻՐԸ



«Խորհրդային պրոզը», ինչպէս հաղորդել էինք թերթի նախորդ համարում, լոյս ընծայեց Յովհաննէս Շիրազի «Հայոց դանթէականը»: Առաջին անգամ պոեմը հրատարակուում է ամբողջութեամբ: Գրքում վեհերուած են Մեծ եղեռնը պատկերող փաստագրական լուսանկարներ եւ բանաստեղծի որդու Սիփան Շիրազի նկարագրականները: Պոեմի վերջարանը գրել է հանգուցեալ երախտաւոր գրականագէտ Սուրէն Աղաբաբեանը, իսկ «Ամբողջի կոմիցը» խօսքը՝ Ց. Ֆելեքեանը:

Ներկայացնում ենք մեր հարցազրոյցը Սիփան Շիրազի հետ («Գրքերի աշխարհ», 1990, թիւ 6):

— Շիրազի «Հայոց դանթէական»ի ժամանակ այսօր բոլորը կարող են խօսել: Ինչո՞վ, Սիփան, որո՞նք էին այսման ուշ հրատարակելու պատճառները:

— «Հայոց դանթէականը» *ունեցաւ իր՝ Յովհաննէս Շիրազի ճակատագիրը (ինչպէս շատ մեծ արուեստագէտների գլուխ-գործոցների ճակատագիրը): Յիշենք, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը»: Ժամանակ է ասել, թէ ինչն էր կամ ով էր աւելի շատ մեզաւոր գրանում: Եթէ մեր ընդհանուր հասարակական կառուցուածքը «անքննելի է ու անգննելի», հնարաւոր չէ յաւակնէն առանձնացնել ժամանակի եւ կոնկրետ մարդկանց մեղքի բաժինները: Աւելի լաւ է չպզտորենք մեր միաքը եւ յիշենք այն մարդկանց անունները, որոնք միշտ քարեր են շարել մեծ գրողների ստեղծագործութեան ճանապարհին: Նրանք շատ-շատ են: Տարիներ առաջ, Մեծ եղեռնի յուշահամալիրում, նօթս լուսանկարելու համար լուսանկարչին 15 օրով բանտարկել էին, ափսոս, լուսանկարչի անունը չգիտեմ:*

Շիրազը բազմիցս պոեմը ներկայացրել է պետական հրատարակչութիւն եւ միշտ մերժուել է, պատճառը՝ «նացիոնալիստական գործ է»: Պատճառներից մէկն էլ տարիների ընթացքում մեծ դժուարութեամբ հաւաքուած եղեռնի հազուագիւտ լուսանկարներն էին, որոնք հայրս ուզում էր զետեղել գրքում, բայց հրատարակիչները չէին համաձայնում:

Նրան առաջարկում էին հատուածներ հանել, ասելով, թէ այս հատուածը հիւսիսին է կպնում, այս մէկը շատ սուր է, եւ այդպէս շարունակ: «Եթէ ձիու ոտքը կտրես, կրնայ մի կերպ քայլել, բայց ողնաշարը հանես, ո՞նց կը քայլի. հիմի ուզում են ողնաշարը հանել», իրեն յատուկ ոճով ասում էր նա:

— Բայց պոեմը արագ տարածւում էր, չնայած արգելքներին, արդէն դարձել էր ժողովրդի սեփականութիւնը: Շիրազը իր աշխատանքը համարո՞ւմ էր աւարտուած:

— Ի հարկէ, ոչ: Պոեմի առաջին տարբերակը Շիրազը գրել է 1941ին, կոչւում էր «Դանթէական էպոպէա»: Հետագայ տարիներին նա մի քանի անգամ մշակել է այն: Ներկայ հրատարակութիւնը պոեմի վերջին տարբերակն է:

— Անխաթա՞ր է տպագրուել:

— Այո: Ամբողջը, ինչ հանել էր նախկինում, հրատարակութեան ժամանակ նորից վերականգնել է:

— Ի՞նչ տեղ էր տալիս պոեմին Շիրազը իր ստեղծագործութիւնների շարքում:

— «Հայոց դանթէականը» նա համարում էր իր ստեղծագործութեան կլուխ – կործոցը եւ գրական հոգեպաւակներից չատ աւելի այս պոեմն էր սիրում, որովհետեւ այն իր նման հալածուած էր: Ծայրաստիճան ուշագիր էր պոեմի իւրաքանչիւր բառի նկատմամբ: Յիշում եմ, երբ արտասանութեան ժամանակ չանկարծ սխալ բառ էինք օգտագործում, անմիջապէս «բունեցնում էր»:

— Ե՞րբ է լոյս տեսնելու «*Անի*» պոեմը:

— «Անի»ն հիմա ինձ մօտ է: Ունի մի քանի տարբերակներ, ես համեմատում եմ գրանք, որպէսզի հնարաւորութիւն լինի վերջնական տարբերակով ներկայացնել «Խորհրդային գրող» հրատարակչութիւն, որը խոստացել է մօտ ապագայում լոյս ընծայել այն: Առաջին տարբերակը Շիրազը գրել է 1951ին, 55ին մշակել է, հետագայ տարիներին ծնուել են նոր տարբերակներ: «Անի»ն ունեցաւ նոյն ճակատագիրը, ինչ «Հայոց դանթէականը»: Յանկալի կը լինի հրատարակել գունաւոր պատկերներով, լուսանկարներով, ինչպէս «Հայոց դանթէականը» լոյս տեսաւ: Մի ցանկութիւն էլ կայ, որը մեր՝ հրատարակչութեան տնօրէն Յ. Ֆելեքեանի եւ իմ մտայղացումն է, կիրքը վաճառքի հանել իր արժէքի կրկնակի գնով՝ յաւելեալ եկամուտը յատկացնել երկրաշարժից աւերուած Գիւմրիի մայր տաճարի վերականգնմանը: Դա կը լինի Յովհաննէս Շիրազի օգնութիւնը ազէտեալ հայրենիքին:

Յ. ՇԻՐԱԶ

ՀԱՅՈՑ ԴԱՆԹԷԱԿԱՆԸ

(Հատուած)

Ագգե՛ր, թէ հայոց այս եղեռնը մեծ
Ձեր մէկն ու մէկին խոշտանգէր յանկարծ՝
Իմ սիրտը, որպէս հայոց բանաստեղծ՝
Չէր լռի ձեզ պէս, պիտի մռնչար այսպէս ահագնած:
Ես կը դառնայի սուրբ ահազանգի զանգահար մի նոր՝
Կ'ահագանգէի իմ խղճի զանգով, տագնապով իմ հօր,

Իմ տագնապահար ազգի մոունչով կը մոնչայի,
Ինչպէս Տէր-Զօրում՝ ձեր մահերով էլ պիտի նչայի:
Իրաւ եմ ասում, ես չէի թողնի իմ ուխտն անկատար,
Մի ազգ խոցուելիս՝ ես կը դառնայի մի նոր զանգահար,
Ես կը զանգէի բոլոր քիւր զանգերն հայոց վանքերի,
Թէ որ տեսնէի բլուրուելն այսպէս ձեր խեղճ զանգերի:
Թէ մէկն ու մէկդ իմ ազգի նման եղեռնահարուէր,
Ես չէի լռի՝ համակուած ձեր սուրբ վշտով կարեվէր,
Թէ ձեր ժողովուրդն հազարաբարուան արուէր տեղահան՝
Ես կը գոռայի՝ «Պատեա՛ղդ չհուիր, ո՛վ ժանտ եաթաղան»:
Թէ ձեր մանուկներն իմոնցի նման մորթուէին անվերջ՝
Ես կը թխէի անգամ երկնքի բիւր աչերի մէջ:

Եւ Նարեկացին խօսխ համեմեց,
Նա, որի հաւատն, ասես, կարկամեց…
Երես դարձրեց տրտում՝ երկնքից,
Փրկել չանալով ազգին… դժոխքից·
— Թէ ձեր ծերուկներն՝ իմոնցի նման թաղուէին կենդան՝
Ես թաղողներին պիտի թաղէի, ո՛վ մահազդաղ:
Թէ ձեր մայրերը՝ իմոնցի նման կախաղանուէին՝
Կը կայծակէի ժանտ ոսոխների անմայր աչերին:
Թէ ձեր հոյրերն էլ՝ իմոնցի նման պղծուէին մահով՝
Ես ըմբոստացած կուռի կ'ելնէի զէնք ու զրահով:
Թէ եղբայրներդ՝ իմոնց պէս անգէն՝ խեղդուէին այսպէս՝
Ես պատերազմի կ'ելնէի իսկոյն, կը փրկէի ձեզ:
Թէ ձեր անհամար գիւղերն այրուէին՝ իմոնցի նման,
Ես հրդեհամար ծով կը դառնայի՝ հրդեհում համայն:
Թէ ձեր բաղաքներն՝ իմոնցի նման՝ ամայացուէին՝
Այնպէս կ'անէի, որ մոխիրներից վարդեր բացուէին…—
Եւ խօսքը խլեց մեծ Նարեկացուց
Մեծ խորենացին, որպէս Աստղծուց·
— Թէ մէկնումէկիդ գենոցիդ բերէր ոսոխը մթար՝
Ես նոյնը նրան պիտի բերէի՝ խղճով իմ արդար:
Ես այնպիսի խօսք կ'ասէի, որ ծով զօրքը խարխլուէր,
Օձի գլխում էլ թոյնը մեղրանար, ժանիքը փլուէր,
Խօսքն ի՞նչ… Ո՛վ ազգեր, ես կը գոռայի բազկիս բերանով,
Ձեր բարէ խիղճը խմոր կ'անէի՝ խղճիս մերանով,
Իմ կողոսկրն էլ թուր կը դարձնէի՝ ձեռքին իմ արդար,
Օրօցքի ընդդէմ ելնող գօրքի դէմ գօրք կը հանէի՝
Ցեղաբնպանին ողջ հողագնդից դուրս կը վանէի,
Ես չէի լռի՝ մգկիթ կը պոկէր վրէժիս համին,

Այնպէս՝ որ խելքի կը գար մարդկութեան այս թուր թշնամին,
Թէկուզ միչեւ վեր՝ մահախօս լուսնի ծոցը արնաբամ,
Որ ոչ մի ազգի ոչ մի մատն անգամ
Ոչ մի թրով էլ չընկնէր հայոց պէս:

.....

Ո՛վ լուած մեծեր, նզովո՞ւմ եմ ձեզ...

* * *

Եւ անցնում էինք ժայռէ մուննչով
Հայ դանթէական դժոխքի միջով,
Եւ քանի գնում՝ չէինք հաւատում,
Որ թշնամին էլ մօրից է ծնուած,—
Ինչպէ՞ս հաւատաս, երբ ամէն հովտում
Մանուկներ էինք տեսնում յօշոտուած.
Մէկի գլխի մօտ մարմինը չկար,
Մէկի մարմինը գլուխն էր փնտռում,
Մէկից՝ իր վկան մի թաթիկը կար,
Մէկի հանուած աչքն Աստծուց էր խնդրում
Իր մորթուած մօրը, ու թափուած անտէր
Ոտիկներ մանկանց, մանկական մատներ,
Որ չէին սրել եղունգն էլ մեղքի,—
Մեղսո՞ւ են միթէ մատները ծաղկի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ



ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

Բանաստեղծ, արձակագիր եւ գրականագէտ Գուրգէն Մահարի (ազգանի անունով՝ Գուրգէն Ագէմեան) ծնած է 1 Օգոստոս 1903ին, Արեւմտեան Հայաստանի Վան քաղաքը:

Նախնական կրթութիւնը կը ստանայ Վանի նորաշէն եւ Երեմեան վարժարաններուն մէջ: 1915ին, մօր եւ եղբայրներուն հետ կ'ապաստանի Արեւելեան Հայաստան եւ կը

պատսպարուի Երեւանի ու Գիւմրիի բանտարկեալներուն մէջ: Ապա կը հետեւի Ազգային պետական Համալսարանի պատմա-բանասիրական ճիւղի դասընթացքներուն եւ այնուհետեւ գրական տարբեր գործակալներու մէջ: 1920ական թուականներուն, գրական Հարի իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Հայաստանի գրական կեանքին. Մկրտիչ Արմէնի հետ կը կազմակերպէ «Հոկտեմբեր» գրական խմբակը, որ հետագային կը միանայ Եղիշէ Չարենցի հիմնած «Նոյեմբեր» միութեան:

1937ին, իր բազմաստեղծ գրչընկերներուն հետ՝ Գուրգէն Մահարի կը ձերբակալուի Սաալինի գործակալներուն կողմէ եւ չանա եը նետուէ: Ապա, տասը տարուան ժամկէտով կ'աքսորուի Սիպիր:

Երկու հանգրուանով աքսորի դառնութիւնները ճաշակելէ ետք, 1954ին վերջնականապէս կը վերադառնայ Երեւան եւ իր գրչով ու խօսքով կը մասնակցի ժամանակի գրական-գեղարուեստական հրատապ խնդիրներու քննարկման: Կը մահանայ 17 Յուլիս 1967ին եւ կը թաղուի Երեւանի քաղաքային պանթէոնին մէջ:

Ռուսերէնի եւ այլ լեզուներու թարգմանուած Գուրգէն Մահարի հրատարակած է շուրջ 30 հատորներ, որոնց գլխաւորներն են «Բարդիներ», «Մանկութիւն եւ պատանեկութիւն», «Երիտասարդութեան սեմին», «Մրգատիաս», «Այրուող այգեստաններ», «Չարենց-Նամէ», «Այս իմոտ, հաճեցարեք լոռեցին», եւայլն:

Մահարու ճակատագիրը 1937ին չսպանուած, բայց տաժանակրութեան դատապարտուած միլիոնաւոր մարդկանց ճակատագրի ցայտուն պատկերն է...

Այս ամէնը կարծէք ինչ էր, յետոյ էլ... Գուրգէն Մահարու երկերի ժողովածուի հինգհատորեակի տպագրութիւնը տեւեց... հսկայական տարի, հարուրդ դար (1966–1990): Ինչո՞ւ... Գեռեւս ընթերցողին անծանօթ են նաեւ նրա ժառանգութեան շատ ու շատ էջեր, այդ թւում նաեւ պատմուածքներ, որոնք վերաբերում են աքսորի տարիներին: Բայց չէ որ դրանք հիմա արդէն կարելի է հրապարակել մտմտուքով, գրքերով... Ինչո՞ւ են յապաղում (*«Հայրենիք եւ ճակատագիր»*, Երեւան, 1991, էջ 41):

ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Գ. ՄԱՀԱՐԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԻԳԱԴ

Ընթերցողին արդէն ծանօթ է Գուրգէն Մահարու «Անդիման փշալարեր» վիպերգը, բայց սակայնեան ճամբարներում եւ աքսորում ապրած իր 17 տարուայ «ոդիսականը» գրողը պատկերել է մի չորք այլ առնչագործութիւններում եւս, որոնց հիմնական մասն անտիպ է: «Սիբիրեան շարքից» սորուն ներկայացուող պատմուածքը գրուել է 1964ին եւ հրապարակուում է առաջին անգամ («Գրական թերթ», 1989, թիւ 13):

Հատն էին ու բազմապէս կալանուորական աշխատանքային բրիգադները: Նրանք կազմուած էին բաւ մեծ մասի կալանուորների առողջական, հնարաւոր աշխատունակութեան ցուցանիշների հիման վրայ: Այսպէս՝ գոյութիւն ունէին ուժեղների բրիգադներ, ապա միջակների, թոյլերի: Թոյլերին յաջորդում էին աշխատանքի անընդունակները, այսպէս կոչուած, «պելագրիկների». վերջիններն մարդ լինելուց աւելի չարժուն եւ անչարժ ուրուականներ էին, ինչպէս Զամոնոմն էր նրանց անուանում՝ «նապաստակներ». մարդիկ, որոնք չունէին ոչ մի հիւանդութիւն, բայց հիւծուած էին, հալուում էին օր-օրի եւ հանդչում էին նապարանի վրայ կամ արտաքնոցում, մեռնում էին յաճախ բաղնիքի մուտքին չհասած, կամ պարզապէս փակում էին աչքերը ննջելու համար երեւի եւ այլեւս չէին զարթնում:

Հատն էին ու բազմապէս կալանուորական աշխատանքային բրիգադները, ճամբարային կառավարչութիւնն այս դրուածքում ինչ-որ թերութիւններ էր առնում, որոնք արգելակում էին «պլաններին» գերակատարմանը: Աշոտ պայլին այն միտքը յայտնեց, որ յուր կը լինէր, եթէ կազմակերպուեն ազգային բրիգադներ, այսպէս՝ ուզբեկական, բելոռուսական, ուկրաինական, վրացական, հրէական... պէտք էր ենթադրել, որ դործերը կը դնային աւելի լաւ: Աշոտ պայլուն առաջ գէպքում «պլաններից» աւելի հեռաքրքրում էր մի ուրիշ բան, նա ուզում էր, որ հայերն ունենային իրենց անկիւնը, հաւաքուէին իրար գլխի, միասին աշխատէին, քնէին, զարթնէին, լային ու ծիծաղէին: «Ազգահաւաքման» այս միտումն Աշոտ պայլին դրեց արտադրական, այսինքն՝ մի տեսակ քաղաքական անունների վրայ եւ կոմենդանտի հետ մի անգամ զրուցելիս ասաց.

— Սա գործ չէ, սա գործ լինելուց աւելի բարեկոնեան աշտարակաշինութիւն է, կալանուորների մի մասը ռուսերէնից բորիկ է, իսկ խառը բրիգադների այս սխտեմը չի տալիս պէաք եղած արդիւնքը, պէաք է ստեղծել բրիգադներ եւ ապա նրանց իրաւունք ընտրելու իրենց բրիգադներին եւ ճաշբաժանոցներին, եւ այն ժամանակ, օ՛, այն ժամանակ...

Կամենալոն Ժիպիլեասիկին, որը պատրաստ չէր պատճառաբանել ինչու թե ինչ, ներկայացաւ պետին, ի նշան յարգանքի, մի վոքր կռացաւ և աչքերը յառելով ու պիտ պետի աչքերին, հարցրեց Աչոտ պայտ նկատառումները և լոկ: Եթէ պետը հետաքրքիր ուզէր իմանալ նախատրծին, ապա պիտի լինի իր սեփական առաջարկութիւնը, իսկ եթէ պետը պատրաստ չէ համարի անընդունելի, կամ ո՞վ գիտէ, վատնդաւոր, ապա նա կ'ասի մօտաւորապէս հետեւեալը.

— Ես այդպէս էլ ուսոյի նրան, քաղաքացի պետ, ու գիտէի, որ նրա առաջարկութիւնը հիմնականում սխալ է:

— Ո՞ւմ առաջարկութիւնն է պա,— կը հարցնի պետը, իսկ Ժիպիլեասկին անկնդունելը կը պատասխանի.

— Այդ Հայի... բրուտ Աչոտի...

Իսկ հիմա պետը լսեց, մտածեց եւ ասաց.

— Գէտք է խօսել ճամբարի պետի, ընկեր Բիչկոյի հետ...

Երկու օր յետոյ ճամբարի պետը կանչեց կոմենդանտ Ժիպիլեասկին եւ կարգադրիչ Սիլորովին: Նա յայտնեց, որ իր առաջարկութեամբ որոշուած է վերակազմել գործող բրիգադները բաց ազգային պատկանելիութեան քաղաքացիներից:

— Գործի անցէք,— աւելացրեց պետը,— բրիգադիրներին թող իրենք ընտրեն իրենց միջից, ինչպէս նաեւ բալանդեորներին... գուցէ աւելի լաւ աշխատեն...

Ազգային պատկանելիութիւնը՝ ազգային պատկանելիութիւն, հասկանալի է, բայց երբ կոմենդանտը եւ կարգադրիչը նստեցին ճոճուն գրասեղանի մօտ եւ սկսեցին խաւաքարերի վրայ ցուցակներ գրել բրիգադներն բաց ազգային պատկանելիութեան, կանգնեցին լուրջ գժուարութեան առաջ,— իսկ կալանաւորների առողջական, ֆիզիքական ցուցանիշնե՞րը: Սակայն երբ ցուցակները պատրաստ էին, նրանք վերահաստատ եղան եւ այն իրողութեանը, որ փաստօրէն գոյութիւն ունեն երկու կարգի կալանաւորներ—մեռնելներ ու ողջ կենդանիներ, եւ որ այս երկու կարգի մէջ մանում են բոլոր ազգութիւններն անխտիր...

Աշխատանքային բրիգադները պետք չէին վերապատրաստել աշխատանքից. բրիգադների վերակազմութեան լուրը խոհանոց հասաւ կարգադրիչ Սիլորովի միջոցով: Լուրը մատուցողը, յետոյ հասաւ վարսավիրներին եւ մնացած «ճամբարային պարապիանների», ինչպէս անուանում էին նրանց աշխատանքները: Լուրը ցնցող ազդեցութիւն թողեց առանձնապէս չէֆ-խոհարար կամ խոհարարապետ Մեսրոպ Ալտունեանի վրայ: Մեսրոպը, կամ, ինչպէս քրէականները նրան անուանում էին՝ պետպետ Միշան, իսկ քաղաքացիները՝ Միխայիլ Արտաւազովիչը, այսպէս բնորոշած էր սեւծովեան արեւելեան ափի հայաշատ քաղաքներից մէկից՝ Ախալցխից: Ազատութեան մէջ խոհարարութեան հետ նա այնքան կապ ունէր, որքան եւ՝ չինական պիւնապխոտութեան հետ, բայց չնորհիւ այն հանգամանքի, որ նա անից սաանում էր պափնուտերբի, պպպեղի, բնաիր ծխախոտի եւ ուրիշ համեմունքների ծանրոցներ, խոհանոցի պատուր բացուելց նրա տուաջ կրունկների վրայ...: Մեսրոպն իր համեմունքներով ախորժելի ճաշեր էր պատրաստում ճամբարային նաչալնոյի համար եւ պրա ուժով արդէն երբոր սարին էր, ինչ իր ձեռքում ամուր բռնել էր խոհարարապետի սրբալի չերեփը...

Ցնցող ազդեցութիւն թողեց նրա վրայ բրիգադների ապագայնացման լուրը, որովհետեւ նա մինչեւ հիմա իր գէմ չէր տեսնում ոչ մի ազգութիւն մարդկային ոչ մի առանձնացնող, տարբերանիչ կրող պատճառ: Բրիգադներին նա բաժանում էր ճաշը փակ աչքերով, առանց կշռով միայն քիչ և ուրիշ ոչինչ: Իսկ հիմա, համեցէ՛ք, բարի եղիր կերակրել որոշակի ազգութիւններին՝ ռուսներին, ադրբեջանցիներին, ուկրաինացիներին, վրացիներին, հայերին...

պէ, նո՛ւ, այնպէս ալս, որ համբարի բոլմոխի մեծ ու վոքր ապուխիններր պահվինն քեզնից, չպրոպան նրանսորկու խնամբ, չպժպհեն...

Մինչ ալս, մինչ այն՝ որ նրանք ցոյս եցին համբարի պարսպաններր, և կառնաս պահակնոյնած բրիստոներ «սուն» վերապրհան: Ամբողջ օրս ալ ընթացքս մ և վերապրհի անչափ երկար թուացող ճանապարհին նրանք նստած էին այն պահր, երբ ասն կր հասնեն և կր վատն են իրենց մի մարդապրժին կնոնական, սովորակ ապրանք խնան վրալ, կր առնեան օրարժին հացր, հոչակաս որ բալանդան և կր փնեն, և կր փնեն այնպէս, որ նրանք կհոպիչներին իրեն անձամբ, ապրանս խնան ոչին նրա մանի համբարի փոկ պարսպաններից, փոկր փչել ասլ, խմրա կնոր պայքեցնի և քնպանօքների պատգամ յայտարարի՝ «Վեր կացէք, գնացէ՛ք ձեր աներ, ո՛վ մարդիկ, պատ ապատ էք...»՝ միևնոյն է, նրանք չեն պարքնի և կր չարա նակեն փնել քաղցր քնովի, որի ուժն ու պատիր իմանալս համար հարկաս որ է միայն և միայն վատ անուղ և դժուար աշխատող կալանաս որ լինել...

Ահա թէ ինչս բրիստոնների վերակառուցման լուր համբարի և աշխատանքից ասն վերապրհած կալանաս որների դէմին պայքեց որպէս կայծակ՝ անամպ երկնքից: Մուսոլոյլ մրջնանոցի նման ալեկոծուեց համբարը, ապրալ և համատ՝ մարդիկ ապի վրալ մի կերպ ոչնչացրին բնթրիքներ, ապա բոա հրահանգի վերցրին իրենց ուեցած ածքր և պատրաստական բնպարձակ բակր:

Մեծ հանդապարհի վրալ երեսաց կոմնդանա ժիպիլեսախակին.

— Ապա՝ նաե՛լ,— պոռաց նա:

Բոլոր կալանաս որներր մի մարդս նման նաեցին, ամանք իրենց իրերի վրալ, ուրիշներր՝ թևեր պպկեցին, ձեռնոտով, թէ նոսած են:

— Կանգնե՛լ... նաե՛լ... կանգնե՛լ... իսկ հիմա՝ ուշադրս թիւն, անունե՛ր, իրերով № 3 բարաք, մա՛րշ, ուղրևկներ, առջևկներ, միջինասիական մնացած պիղծ հոպիններ՝ № 2 բարաք, մա՛րշ... խախտնե՛ր, № 4 բարաք... վրացիննե՛ր, հայեր, ապրրևջանցիններ՝ № 5 բարաք, լասիչներ, լեհիչներ, կուռաֆնե՛ր՝ № 6 բարաք, ջհուդներ...

Գրկած իրենց կեղտակոս ու նեցուածքր, կերակրի թիթևկեսայ ու վայալ ամաններր, ուելի ուներներն՝ իրենց առխատակ արկղերր, կալանաս որներր ցրուեցին պանապան ուղղս թեամբ նչանակուած բարաքներր:

Ձամբարի բակր պատարկուեց: կոմնդանա ժիպիլեսախակին իր պարտականու թիւներ յաջող կատարած մարդու թևթևու թեամբ խոհանոց մաս մի քիչ ծանրանալու, իսկ կարպատրիչ Սիսրոսն անցաս բարաքից բարաք և հրահանգեց, որ ապրանքին բրիստոնեներն իրենք բնտրեն իրենց պահակախոս թիւնր, բրիստոպիր և բանտնոլոր, և այն մասին, որ...

— Ձամբարի պետր կարող է հատատանել կամ չհատատանել ձեր բնարուքթիւնր:

№ 3 բարաքի ճակատամասի երկյարկանի առխատակամածի երկու յարկերր վիճակով բնկան հայերին, աջ ու ձախ՝ վրացիներին և ապրրևջանցիններին: Բարաքս մ սիրուս էր ապմուկ և հրմչուուկ, իսչի, որին խուռնուեց ուսուրուածների մախորկայի կծու հոտը: Դռներին երեսաց խոհարարապետ Մեսրոպ Ուղունեանը կամ պետրոս Միչան, կամ, վերջապէս, Մեսրոպ Արուսեան նոսիչը. պոռնկի ապաջ համբոյկաստար Մամոն նրա ձեռքից խլեց նրա իրերի խնամքով կապուած կապոցը, երկաթէ կանթով «չաքմաչան» և արուեցաց պէպի «հայկական օջախը»: Խոհարարապետի մուաքր երեք ապրուիններն բնպարունեցին ողջունի և ուրախու թեան բացականչու թիւններով.

— Բարի եկար, Մեսրոպ:

— Միշա պայի, խո՛շ գեալար:

— Վա՛շա, Միշա, գեղացվալէ՛…

Բրուտանոցի եռեակը անոր ըսնելց կոպէ կոպէի: Աչսա պային իլուն յատուկ աչխոյժով պրաղուածծ էր այստեղ—այնտեղ մեխեր խրելով, ինչ—որ բաներ կախելով: Սանասարը Լեալեայի յուսանկարը խնամքով ամրացրեց պատէն, իսկ եա… նա նայեցի Մեսրոպի խաւարտամած դէմքին: Նա աեղաւ որաւ եց իմ ձախ կողմը:

— Մեսրոպ, դո՞ւ էլ եկար, իսկական Հայաստան եղանք,— ձայն տուէ Աչսա պային:

— Ջղխտեմ,— ասաց Մեսրոպը մոայլ ու մաացրիւ,— բաման Հայաստան չուդեցի…

— Ինչո՞ւ, այ ազայ,— զարմացաւ Աչսա պային:

— Ինձի վատ եղաւ:

— Ինչո՞ւ:

— Բան մ'էր բսի, ըշտէ,— նա տեղաւ որեց իրերը, վար իջաւ սախտակամածից եւ առանց մէկի հետ խօսելու, վերադարձաւ խոհանոց:

Քսանչորս հայեր էինք, որոնցից մի քանիսը՝ Երեւանից եւ Հայաստանի ուղերից, երկուսը Թիֆլիսից, պրոֆեսոր Զանփոլադեանը՝ Բաքուի համալսարանի քիմիական ամբիոնի վարիչ, Ամրաա Սարգսեանը՝ կուսաշխատող, մի քանի գրասենեակային աշխատողներ՝ դաշնակցական մեղադրանքով, եւ Լեւոն Ժամկոչեանը՝ չէկ բնդերով եւ կապոյտ աչքերով՝ մասնագիտաւ քևամ նախագահ. ի՞նչ նախագահ, Լեւոն, ինչի՞ նախագահ… Թուռմ էր.

— Տեղկոմի նախագահ, արտադրական յանձնաժողովի նախագահ, վարչուքևան նախագահ, վերատուչ յանձնաժողովի նախագահ…

Մի խօսքով՝ նախագա՛հ:

Բրիգադիրների եւ կերակուր բաժանողների, այսինքն՝ բալացդեորցիների ընտրութիւնը բարելայող անցաւ վրացիների եւ ազրբէջանցիների մօա. վրացիները ընտրեցին Վասօ Յուլուկիձէին, որն այս աշխարհում եղել էր կառուցող ինժեներ, իսկ ազրբէջանցիները՝ Բաքուի ջրմուղի պատասխանատու աշխատող Ջաֆարով Ա՛մեղին: Ընտրեցին նաեւ ճաշ բաժանողներ հիւանդապին, կարմարաթուչ Գուգուչվիլուն եւ Բաքուի առաջնակարգ ռեստորաններից մէկի գլրեկտոր Շերալիեւին: Պէտք էր ենթագրել, որ միւս բարաքներում նոյնպէս աւարտուած էին ընտրութիւնները, մինչդեռ հայկական բրիգադում տիրում էր կատավարական անել ճգնաժամ:

Քսանչորս հոգիանոց հայկական բրիգադը բաժանուեց երեք կուսակցութիւնների, որոնք էին կոմունիսաները՝ հինգ, դաշնակցականները՝ ուր, իսկ չէզոքները՝ տասնմէկ հոգի: Դաշնակցականների եւ չէզոքների մի մասի բլոկը միահամուռ կերպով առաջադրեց պրոֆեսոր Զանփոլատեանի թեկնածութիւնը, սակայն նա մի ծխախոտ վառեց, ծուխը փչեց սեփական հայկական բլոգերի վրայ եւ իր փափուկ ձայնով հրաժարուեց.

— ԵՊէ ինձ յարգում էք, Թոյլ տուէք աշխատել որպէս չարքային… չնորհակալ եմ վստահութեան համար:

կոմունիսա Արէլ Տարախչեանն այն կարծիքը յայտնեց, թէ կոմունիսը չի կարող աշխատել անկուսակցական կամ (մանաւանգ) դաշնակցականի գեկավարութեամբ եւ պահանջեց, որ բրիգադիրը բնտրուի անպայման կուսակցականներից մէկը, հակառակ դէպքում՝ գործը կը գրուի քաղաքական սխալ հիմքերի վրայ. նա առաջարկեց կուսաշխատող Սմբատ Սարգսեանի թեկնածութիւնը: Նախկին ուսուցիչ Գօգոս Սայատեանը՝ դաշնակցական մեղադրանքով, ասաց հետեւեալը.

— Սխալ գարմանալ կարելի է: Արէլ Տարախչեանը երեւի մոռանում է, թէ որաեղ է գանուում: Ի՞նչ կուսակցական գեկավարութեան մասին է խօսքը:

Մենք այսօրեպ կալանաւորներ ենք, հաւատարիմ իրաւունքներով, այսինքն՝ հաւատարիմ իրաւապրկու թեամբ: Ես առաջարկում եմ Ֆարհատի թեկնածու քիւնը:

Ֆարհատը փառաւոր միրուքով, հին կալանաւորը Սարգիս Կանայեանն էր: Պէտք էր ենթադրել, որ Ֆարհատը նրա կեղծանունն էր:

Թիֆլիսի Վասիլ կարախանովը, որն ամրոզջ վիճարանութեան ընթացքում չի արած նայում էր խօսողներին, միջամտեց.

— Տօ՛, իրակլու քաղաքում քի՞ն են էք բաժին-բաժին անում... Անյարմար չէ՞ք զգում... Մէկին ընարէք, վերջանայ-գնայ:

Անհանգիստ էր եւ Աշոտ պային, թէեւ նա ոչ մի բանով չէր մասնակից իր անհանգստութիւնը: Այդ երեւի միայն ես էի նկատում: Մենք, բրուտանոցում աշխատողներս եւ Աշոտ պային, միայն կողմնակի դիտողներն էինք այդ բնաւորեկան ուր պայքարին, որովհետեւ մենք պատկանում էինք «գործարար բակի» համապատասխան արհեստաւորական բրիգադին. մենք, հետեւաբար եւ Աշոտ պային, այսօրեպ չունէինք ո՛չ բնարելու, ոչ էլ ընարուելու իրաւունք, ոչ էլ կարող էինք միջամտել բրիգադի ներքին գործերին: Պէտք էր ենթադրել, որ Աշոտ պային յատկապէս կարող էր ազդել խնդրի բարեյաջող լուծման վրայ, եթէ... եթէ «ձայնազուրկ» չլինէր:

— Ես չեմ մոռացել եւ գիտեմ, թէ որտեղ եմ գտնում,— գրգռուած եւ չիկացած՝ իր ձայնը լսելի էր դարձնում Աբէլ Տարախչեանը,— բայց որտեղ էլ լինեմ, միեւնոյն է, չեմ մոռանայ, որ ես կոմունիստ եմ... Մենք գտնում ենք սովետական ճամբարում եւ ոչ թէ Փաշիսաւային: Սովետների ճամբարում դեկավար դեր կարող են խաղալ միայն կոմունիստները...

— Քանի՞ տարի ունէք, բնկեր կոմունիստներ,— հարցնում է հնգնանքով Ֆօղոս Սայատեանը,— տասնհինգակա՞ն. լաւ մենք, ձեր կարծած Ֆաշիստները, տասական տարի միայն... Ինչո՞ւ ես պիտի աշխատեմ ժողովրդի թշնամիների հրամանատարութեան տակ... Վե՛րջ կոմեղիային, Ֆարհատը բրիգադիր է...

Բարձրացաւ ազմուկ.

— Փեարու արեան աւանատո՞ւրա էք ուզում տարբել...

— Այսանո՞ղ էլ բոնութիւն...

— Թող կուսատոմսերը ցոյց տան...

— Ժողովրդի թշնամինե՛ր...

— Ֆաշիստնե՛ր...

Աշոտ պային մի մախորկա փաթաթեց:

Յոհաննոցից վերադարձաւ Մեսրոպը: Նա բարձրացաւ իր աեղը. այսինքն՝ աեղաւորուեց իմ կողքը եւ ցածր ձայնով հարցրեց.

— Ի՞նչ եղաւ, ինչո՞ւ կը բոռբոռան:

Ես բացատրեցի:

— Ամօթ, այիբ է,— ջրիմնջաց Մեսրոպը,— բրիգադիր, բալանդաջի... էդուր համար է՞լ իրար գցեն...

Նա լուռ եւ աւելացրեց.

— Ես կուխանոց դուրս կու գամ... Թող ամէն ազգ, ամէն բրիգադ իր կուխանին, իր պռովը ունենայ... Ես ըրիւր ազգերին չեմ կրնայ կերակրի...

Աշոտ պային չհամբերեց: Նա՝

— Տղաներ,— ասաց,— հայ ժողովո՞ւրդ ենք մենք, թէ վայ ժողովուրդ... անկից, տեղից, հողից, բնաւանիքից զրկուած, եկել ենք, բնկել սիրիրներն ու փոխանակ մէկ ուրտ, մէկ հողի լինելու, իրար միան ենք ուտում: Նայենք մեր հարեւաններին եւ ամաչենք: Բա մենք նրանց չափ է՞լ չկանք...

— Քաղաքական ո՛չ մի գիջում,— տեղից գոռաց Սմբատ Սարգսեանը:

— Տօ՛, դու ո՞վ ես, որ գիջես կամ չգիջես...

— Հակայեղափոխական ճահիճը չարժուում է, բնկերներ, պայքարը չընկնել…

Նրա մասին կոմենդանտ Փիղիլեավակին եւ կարպատցի Սիդորովը նրանք պրեցին վրացի ու ազրբէջանցի բրիգադիրների անուններն ու ազգանունները եւ մօտեցան հայկական բրիգադին.

— Ո՞ւմ բնարեցիք,— հարցրեց Սիդորովը:

Լռութիւն:

— Ո՞վ է ձեր բրիգադիրը. ի՞նչ էք ոչխարների նման նայում,— ձայնը բարձրացրեց Փիղիլեավակին:

— Բրիգադիր չկայ,— լսուեց մի անհամարձակ ձայն:

— Ջի էլ լինի,— լրացրեց Սմբատ Սարգսեանը:

— Քաղաքական ատրաճայնու թիւններ…

— Ի՞նչ քաղաքական ատրաճայնու թիւն,— գոռաց Փիղիլեավակին ամբողջ կոկորդով,— անու ղեկի արմեաչկաներ… դուք դեռ չարունակում էք քաղաքականու թեա՞մր գրազու ել… ես ձեզ աու գանային ճամբարնիրում կը փաեցնեմ… ես ձեզ… գնդակահարե՛լ…

Նա դուրս եկաւ Սիդորովի հետ եւ կէս ժամ յետոյ բարաք վերադարձաւ ճամբարի պետի կարգադրու թեամբ.

— Հայկական բրիգադը ցրե՛լ… լսեցէք, քէչ ու՛ր որ բրիգադին է կցուած… վերցրէք ձեր իրերը եւ կորէք… Սարգիս Կանայեան, Սմբատ Սարգսեան, Աբրաեու չա Ղազանդոլաեանն՝ ատու սական բրիգադ…

Երկու ամիս յետոյ նոր նշանակուած ճամբարի պետ Ուստինովը ծանօթացաւ աշխատանքային բրիգադների եւ նրանց աշխատանքի դրուածքի հետզհետէ բարձրացրեց ցուցանիշներից եւ ասաց.

— Հայկական բրիգադը չեմ տեսնում:

— Նախկին պետը լուծարքի ենթարկեց, քաղաքացի պետ, ցրեց մեր բրիգադների վրայ…

— Այո՛,— խորանում է ակնոցաւորը, քաղաքացիական շորերով եւ գրեթէ բարեկէմ, նոր նշանակուած պետը,— բայց աշխատանքային բրիգադներում ոչ մի «եան» չեմ տեսնում… ահա՛ մէկը. Դժանպոլաեան…

— Ճիշտ է,— հաստատում է ժիղիլեավակին,— նրանցից ոմանք բնական տնտեսական բրիգադներ, աշխատում են որպէս սանիտար, խանու քի վարիչ, օրապահ, խոհանոցի աշխատող, իսկ մեր մեծ մասն անցում «տրծտարար բակ» կոչկակար, հիւան, դերձակ…

— Դա՛ա՛ա,— հաստատեց խորաթափանց պետը,— զարմանալի համերաշխ ժողովուրդ է հայ ժողովուրդը…

— Այո՛,— հաստատեց կոմենդանտը,— շատ ճիշտ է ձեր դիտողու քիւնը, քաղաքացի պետ. համերաշխ մարդիկ են հայերը եւ իրար բռնող…

… Իջնում էր գիշերը: Ապագային բրիգադներ չուն մտան:

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԷՍ Է ԳՐՈՒԵԼ «ՅԱՐԳԱԳՈՂԻ ՃԱՄԲԱՆ»

Մեծ կտաւի գործերը (վէպեր, պիեսներ) Նայիրի Զարեանը գրում էր նախանձելի արագութեամբ, առանց այսպէս ասած, ստեղծագործական տառապանքների: Այդ տառապանքները կամ երկրնտրանքները, բա երեւոյթին լինում էին գրելուց առաջ, մտքում: Երկար «որոնում» էր ասելիքը, նիւթը ծայրից ծայր մշակում, որից յետոյ թղթի վրայ իր համար կազմում էր սիւժէտի ու կերպարների զարգացման մանրամասն պլան, յստակ պատկերացնելով, թէ որ գլխում ու ենթագլխում ինչ է նկարագրելու, նոյնիսկ արդէն իմանալով՝ գործը քանի էջ կը ստացուի: Ընկերների հարցին՝ պլանն արդեօք չի՞ սահմանափակի աշխատանքի ընթացքում ծնուող նոր մտայղացումները, Զարեանը ժպտում էր. պլանը հենց նրա համար է կազմում, որպէսզի հարկ եղած դէպքում խախտի:

«Յարգագողի ճամբան» եւս գրուեց հեշտութեամբ, սակայն... Տառապանքները սկսուեցին յետոյ: 1963 թուի սկզբին վէպի առաջին գրիչը պատրաստ էր: Մնում էր, ըստ սովորութեան, որոշ ուղղումներ կատարելով՝ մաքրագրել: Հրատարակչութիւն յանձնելուց առաջ Զարեանը նոր գործի մեքենագիր օրինակները յանախ տալիս էր իր գրող ընկերներից ումանց կարդալու: Այս անգամ էլ այդպէս արեց: Բարեկամ-քննադատների կարծիքներին սպասում էր անհամբեր: Չգիտես ինչու յապաղում էին, արտայայտում վերապահումներով. գործի վրայ չտապողականութեան կնիք կայ, առանձին գլուխներ այնքան էլ յաջողուած չեն, սուր տեղերը գուցէ մեղմացնի: Իսկ գլաւլիտի մասին մտածե՞լ է: Գլաւլիտը կարող է տպագրութիւնն արգելել: Ոմանք էլ պնդում էին հակառակը՝ կարելի էր աւելի համարձակ գրել: Զարեանը լսում էր հետզհետէ մոայլուելով, բայց չէր առարկում: Երեւում էր վէպն իրեն էլ այնքան դուր չէր գալիս: Ինչ-որ բան այնպէս չէր եւ դրա համար, թերեւս, ինքը չէր մեղաւոր: Ստալինեան

հեղձուցիչ մթնոլորտը թէեւ փոթր-ինչ մաքրուել էր խրուշչովի բացած օդանցքից, սակայն ոչ այնքան, որ հեշտ լինէր անսխալ դիրքորոշուել: Մէկ տեսակ ուժեղ հարուածի տակ էին առնում իրականութիւնը սեւ գոյներով ներկայացնողները, մէկ էլ հակառակը՝ անխնայ դատապարտում էին նոյն իրականութիւնը գունազարդող, լաֆապաւող գրողներին ու արուեստագէտներին: Որտե՞ղ է իսկական չափանիշը: Նայիրի Զարեանը ներկայ էր եղել խրուշչովի՝ մասնորականութեան ներկայացուցիչների հետ ունեցած յայտնի հանդիպմանը եւ ապրում էր յոյսի ու անյայտութեան շարունակական տագնապ:

«*Յարդագողի ճամբան*» սկսեց վերամշակել: Ստեղծուեցին բազմաթիւ տարբերակներ, նոր խորագրերով՝ «*Երեւանցին*», «*Գայթնից յետոյ*», «*Վարդապոյն աչառարակից*»: Ի վերջոյ կտնգ առաւ «*Յարդագողի ճամբան*» վերնագրի վրայ: Սա, հաւանաբար, աւելի նիշտ էր բնութագրում վէպի էութիւնը: 1965 թուին գործն արդէն հրատարակչութիւնում էր: կարդում էին ու ձգձգում խմբագրել:

Օրերից մի օր մեր տուն եկաւ անուանի գրականագէտներից մէկը եւ վրդովուած յանդիմանեց Զարեանին: Այդ վէպն ինչո՞ւ է գրել, որպէսզի մեղադրի աֆսորի տաժանակրութիւններն ապրած տառապեալների՞ն: Նրանց համար այդքանը քի՞չ էր: Զարեանը շփոթուեց, ինքն ամենեւին այդպիսի նպատակ չէր ունեցել: Ընդամէնն ուզեցել էր ժամանակի կատարած ցաւալի սխալները վեր հանել, նկարագրել այն ողբերգութիւնները, որոնք շարունակուեցին նաեւ Ստալինի մահուանից յետոյ ու դեռ կը շարունակուեն: Գրականագէտը չէր համոզում: Ինչո՞ւ է հապա սիւժէտի մէջ դրել ինքնակենսագրական փաստեր, հերոսներ դարձրել շրջապատին ծանօթ մարդկանց: Զարեանը ներքուստ ծանր էր լինում. ո՞վ է ասել, որ հեղինակն իրաւունք չունի ինքնակենսագրական դրուագներ օգտագործել կամ կերպարներ ստեղծել՝ ելնելով իրեն բաւածանօթ շրջապատից:

Ճար չկար, անհրաժեշտ էր նորից փոփոխութիւններ կատարել: Դարձեալ նոր տարբերակ:

1963 թուին վէպը պաշտօնապէս յանձնուեց հրատարակչութեան խմբագիրներից մէկին՝ խմբագրելու: Այդ օրերին տեղի ունեցաւ գրողների միութիւնում կուսակցական դասնիսակ ժողով: Բաւական թափանցիկ ձեւով հասկացրին, որ նախընտրելի էր 37 թիւն այս կամ այն կերպ չօշափող գրական որեւէ գործ չտպագրուի: Զարեանի վէպը, հրատարակչութեան այն ժամանակուայ դիրեկտորի ասածի պէս՝ դրին Զարեանի քեռի տակ, ու դուրիեցին տուն:

«*Յարդագողի ճամբան*» մի տեսակ աչքից րնկաւ, Զարեանը նոր գործերի վրայ էր աշխատում. երբեմն-երբեմն միայն անսիրտ բացում էր մերժուած վէպը, որոշ ջնջումներ ու լրացումներ անում: Մեղմացնում, կլորացնո՞ւմ էր սուր ծայրերը, բայց նա, ախր, այլեւս յոյս չունէր, որ «*Յարդագողի ճամբան*» կը տպագրուի:

Զարեանի մահուանից յետոյ փորձեցի կարգի գցել նրա կիսատ րոդած ձեռագիր ստեղծագործութիւնները: «*Յարդագողի ճամբան*» շատ էր «անխնամ»՝ այս ու այն թղթապանակներում ցրիւ եկած: Երկար մտածելով՝ րնտրեցի, ի մի բերի մշակած վերջին տարբերակները: Ձեռագրածոյլով տողերի վրայ գրիչ խազացնել, մասնակի շտկումներ անելով, տրուեցի մեքենագրելու այնպէս, ինչպէս որ կար («*Նորք*», 1989, թիւ 3):

ԱՆԴԵԼԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ



ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Հանասանկծ, արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, հրապարակագիր եւ հասարակական գործիչ

Նայիրի Զարեան (ստացեալ անուն՝ Հայաստան Եփտալեան Եփտալեան) ծնած է 31 Դեկտեմբեր 1900ին, Արեւմտեան Հայաստանի Վանի նահանգի Աբճաք գաւառի Խարակոնիս գիւղը։ Մեծ եղեռնին ծնողքը կորսնցնելէ ետք, կը գաղթէ Երեւան եւ իր պատանութիւնը կ'անցկնէ որբանոցներու մէջ։ 1927ին կ'ընդունուի Երեւանի Համալսարանի պատմագրական բաժանմունքը, իսկ 1933ին՝ Լենինգրատի ազգութեան Հասարակագիտութեան ակադեմիայի գրական բաժինը։

Իր մը ապրուստի գրական-իմացական աշխատանքներ կատարելէ ետք, 1944–1946 տարիներուն կը վարէ Հայաստանի Գրողներու միութեան նախագահի պաշտօնը, ապա կը տառնձնէ Խաղաղութեան պաշտպանութեան Հանրապետական կոմիտէի նախագահութիւնը։

Գեղարուեստական բազմաթիւ ջքանշաններով մեծարուած Ն. Զարեանի թատերախաղերէն ոմանք՝ «Արա Գեղեցիկ», «Այրող դիմակ», «Աղբիւրի մօտ», «Փորձադաշտ», «Արտաւազդ եւ Կլէոպատրա», «Հայաստան», իրարու յաջորդաբար կը բեմադրուին Երեւանի Գ. Սունդուկեանի անուան թատրոնի եւ հանրապետութեան այլ բեմերու վրայ։

Ն. Զարեան հրատարակած է 75 անուն արձակ, չափածոյ եւ հրապարակագրական հատորներ ու գրքոյկներ, իսկ առանձինն կամ այլ թարգմանիչներու հետ ռուսերէնէ հայացուցած է շուրջ 44 գործեր։

Ն. Զարեանի հատորներէն ոմանք թարգմանուած են աւելի քան տասնեակ մը լեզուներու, ինչպէս ռուսերէնի, չեխերէնի, վրացերէնի, լատիշերէնի, պուլկարերէնի, լեհերէնի, սլովաքերէնի եւ այլ լեզուներու։

Ն. Զարեան կը մահանայ 11 Յուլիս 1969ին, Երեւանի մէջ։

Ն. ԶԱՐԵԱՆ

ՅԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՄԲԱՆ

Մոմախ Բալեանը ուզում էր առանձնանալ «Ուրուտու» արճտրանի մի անկիւնում, մանր կուժերով աւրձ խմել ու վերյիշել պատժիչ հիմնարկի նկուղներում իրեն բաժին ընկած այն կատանքները, որոնց մասին ոչ ոքի, անգամ իր կնոջն ու տղային, չէր պատմում։ Չէր ուզում, որ մարդիկ մարդկանց մասին կազմեն այդքան վատ պատկերացում։

Մոմախ Բալեանը սիրում էր հաւատալ, որ այդ մղձաւանջն այլեւս չի կրկնուի։ Չի կարող կրկնուել, չպէտք է կրկնուի։

Բայց եւ այնպէս Բալեանն այդ մութ աւերները մոռանալ չէր կարողանում։ Նրա յիշողութեան մէջ յատկապէս այն օրը,

Իր իրեն առաջին անգամ կանչեցին հարցաքննու թեան: Քննիչը պատրաստ էր Բալեանի նախկին ուսանողը, գեղեցիկ ու մեծ պիմազներով Վարպետ Արեւշատեանը, որ ինստիտուտում Բալեանին կարծես թէ շատ էր յարգում:

— Վարպե՞տ,— ուրախ բացականչեց Բալեանը՝ նայելով պրոտոկոլի մօտ, մետաղէ թիկնաթոռին:— Իմ քննիչը պո՞տ եա նայել:

— Այսանց ձեզ համար «Վարպետ» չկայ,— հեգնանքով պէմքը ծամածռեց Բալեանի սիրած ուսանողը,— եւ ձեզ ոչ ոք չհրատ իրենց նայել:

Բալեանն պապաց, որ իր մատները րիզ-րիզ են կանգնում:

— Վարպե՛տ...

— Կրկնում եմ, այսանց ձեզ համար «Վարպետ» չկայ, եւ դուք ձեր պրոֆեսորական ամբիոնի վրայ չէք:

Բալեանը վեր կացաւ.

— Ցեսո՞յ: Էլ ի՞նչ կը հրամայես:

— Նստեցէ՛ք:

— Այնուամենայնիւ, այո ի՞նչ կատակերգութիւն է, Վարդեւ,— Բալեանը դեռ չէր ուզում հաւատալ իր ականջին...— դու չե՞ս ճանաչում ինձ:

— Նստեցէ՛ք, ասում են ձեզ, կալանաւո՛ր:

Կալանաւորը նստեց: Նրա աչքերի առաջ կերպարանափոխուած նախկին բարեհամբոյր ուսանողը երկար ու դանդաղ թերթում էր Բալեանի «գործը»: Ցեսոյ գլուխը բարձրացրեց ու մի պահ սառը հեգնանքով դիմեց իր երիտասարդ ու երեւմնի յարգարժան դասախօսին.

— Ուրեմն դուք այն կարծիքին էք, որ այն...— քննիչն այստեղ դործածեց մի հայհոյական մակդիր,— որ այն դաղթականը ոչ միայնակ չուներ եւ ինքնասպան եղաւ մեղ մօա կատարուող անարդարութիւնների դէմն առնելո՞ւ համար:

— Ճիշտ այդպէս,— ուսուցչական տոնով բացատրեց Բալեանը:— Դրանով նա փորձեց Մոսկուայի ուշադրութիւնը հրաւիրել Անդրկովկասում կատարուող անարդարութիւնների վրայ:

— Իսկ ո՞ւմ մօա էք յայտնել ձեր այդ հակասովետական կարծիքը:

— Երիտասարդ,— ասաց Բալեանը,— ես քիչ առաջ կարծում էի, թէ հանդիպել եմ իմ երբեմնի սիրած ուսանողին: Բայց քանի որ իմ առաջ նստած է ուրիշ մարդ, ևթէ այս բառը գործածել թոյլ էք տալիս, ապա կ'ասեմ, որ կարեւորն այն չէ, թէ ես ում մօա եմ յայտնել իմ կարծիքը: Կարեւորն այն է, որ ես պնդում եմ այդ կարծիքը ձեզ մօա:

Քննիչը մի պահ ծաղրական հայեացքով պիտեց Բալեանին եւ ապա դործածեց նոյն հայհոյական մակդիրը:

— Ձեր այդ ... կարծիքը չէ ձեր գլխաւոր յանցանքը: Դուք ասացէք. ո՞ւմ հետ եւ ի՞նչ կերպ էիք ուզում սպանել...— քննիչը տուեց պետական բարձրաստիճան մի պաշտօնեայի անուն:

— Ի՞նչ,— զարմացած վեր ցատկեց Բալեանը:

— Նստի՛ր,— քննիչն այստեղ տնցաւ «դու»ի:— Գաւոիր. ովքե՞ր են քո խմբի անդամները եւ ի՞նչ կերպ էիք ուզում մահափորձ անել նրա դէմ:

Բալեանը տարակուսանքով քմծիծաղ տուեց.

— Ես նրա երկրպագուն չեմ: Այդ ճիշտ է, բայց նրան ուզանել մաքուր անդամ չի անցել:

Քննիչն ամէն ինչին աչքակ եւ կալանաւորի հետ խօսելու ամենախիստ եղանակներին տակաւ մորդուհ Հայեացքով նայեց Բալեանին եւ չնկատ.

— ... (ոտ ստորէն)

— Վարպետ,— Բալեանը ժպտալու փորձ կատարեց,— սիրելի Վարպե՛տ, փոխանակ հարցնելու, թէ ինչո՞ւ, ի՞նչ անարդ բանտարկութեան պատճառով են այսանց բերել քո անմեղ բարեկամին, դու նրանից պահանջում ես. Bpik-

nanpiban! Ի՞նչ է պատահել քեզ։ Ո՞ւմ կամքն ես կատարում։ Ես անկատ ակ-
յակատն եմ, ասիրյան՝ սովհատական մարդ։ Իմ արտից ստիս ես է պետս մ ստես մասն-
ա ստես ստ կատարելագոյս քեսան համար։ Ես յանգստ ստ եմ պետս մ ոչ թէ ստյն մարդս ես
ստանձնես մատղաշ քեսան մէջ, այլ նրա համար, ստ մեր հատարտակս քիս նր, իմ
հատարտակս քիս նր ըլլայ։ Ստիս ես ստիս ըստնելդ լցնել իր անձնակ ստս ակնկալսդ։ Ես-
յատարի՛ր ինձ. Ի՞նչ է կատարս ես մ ստյատել։ Սովհատական կարգերդ հա չե՞ն ստա-
պատս ես։

Քննիչի խոչոր յուսմ ստչեցուս մ չոգոց ինչ-որ պատմական։ Սիրտն մի
վայրկեան շուռաց ես տնցաս։

— Եթէ դու մատնիչն ըլլալդ չես հատկանայ,— կատանքի պարծիքը
մատնատյցյ տրեց Գաղթ՛ս,— քեզ հետ կը խոսանք ստս ըլլալու մասին Գաղթ՛ս,
ովքե՞ր են քո խմբի անդամները Գաղթ՛ս, ետ...

Քննիչը հատկատ ստ տանջանքի հետևսմ կամենաս էր բնես մ խեղդել իր
ստաս մ չոգոս նոկ բարձրացյց կարեկցս քիս տրեց։ Բալեանն ստյ նկատեց։

— Ես պատմելու բան չունեմ։ Կրկնս մ եմ. ես նրա երկրպագուն չեմ,
բայց ինձն ատանձնս մատղաշ քիս չունք ոտնձգել ո՛չ ես, ոչ էլ իմ բարեկամներից
որևէ մեկի։

— Ովքե՞ր են քո բարեկամները։

— Ամրողջ հայ ժողովուրդը։

Հարցը բոլորովին անդամ կրկնելուց էր ետ։ Ինչ ստատատիան տատան-
ալուց յետոյ քննիչը անդամից պրտանատրեն ատյակոճակը, ու ներս մտան երկու
հոգի՝ կիսատրնս տրեկան տարազով։ Գաղթ՛ս մեկ աչքի ճտանց՝ իր գեմքին
յուժան ատատյցյատ քիս ն ատյու համար։

— Ատանկը այս պատրոնի հետ ատելի պատկ չեզատ...

Երբ Բալեանն ու չքի նկատ, կատանքի տապճանքն ատյչ չկային։ Ինքը
նատած էր նոյն մետալ քիկնաքատին։ Ապրքերի ատանքս պետ էր անտա-
նելի ծանրց։ Ներքնա մարմնի վրայով ցուլերի նախիր էր անցել։ Քննիչը ծխս մ
էր ու պատս փչս մ ամենափոքրացյին իսոքեր։ Գրատնատանի վրայ գնդաց հե-
ռախոսը։ Գաղթ՛ս խոսափողն առա.

— Լսս մ եմ... յետ մ եմ, ընկեր պետ։ Սեղմեցինք... խոստովանու քեսան
ոչ մի կաքիլ... ու չատրտացրեց... յես, այդպես էլ կ'անենք։

Նորից ներս մտցին տպագրողները, ու այն երկուսը ներս մտան։ Քննիչը
կարգադրեց կալանատրին վերադարձնել նկատ։ Երբ նրանք Բալեանին քա-
շերից բռնած վեր էին հանում, նա նորից ուշաթափուց ու աչքը բաց արեց
միայն կալանքի նկատ տս մ։ Նրա գեմքին կոտցել էր Մուշեղ Մալխասեանը,
կարմիր բանակի երիտասարդ մի սպա, որ բանատարկուել էր նոյն այդ պա-
տճանատի վրայ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով։ Այդ խեղճ ու
անմեղ սպան կալանատ ստ մատ տրականներին ատել էր իր հոգատս տրու-
քեսան ատակ։

— Ձեր մարդերը ապիտակել են, ընկեր Մովսէս Բալեան։ Արեւշատեանը
ձեզ կատանքե՞ն ներքնտկից։

— Կատանքը պատրակ բան է, Մուշեղ,— չդնջաց Բալեանը։— Ես այն-
անդ անատ ատելի պարհատրելին։

— Ես նրան կը սպանեմ,— իր կրակատ աչքերն ատատատրին յատնց
Մուշեղը։ Կարծես նա իր խոշոր արծուաքթից պիսի կրակէր վերեւի յարկում
նատած քննիչի վրայ։

Այդ օրը Մալխասեանին տարան հարցաքննու քեսան ու քատն բոպէ չան-
ցած նա ներքին ու նեռանցին մեկատ տարան։ Ձեռայ պարզատ նց, որ Մուշեղը ներս
մտնելուն պէս վերցրել էր մետալէ քիկնաքատը ու խփել Արեւշատեանի

պլսին: Ջննիչը կիսամեռ վիճակում փոխադրում էր հիւանդանոց, եւ սուտ
կէն՝ հապա՛ք մէկ ապրի:

Այնուհետեւ կալանքի նկուղներում եւ աքսորավայրերում Բալեան
ծանօթացաւ չարչարանքի շատ այլ առեակների հետ, որոնցից մի քանի
նում էին առաջին հարցաքննում Բեան համեմատութեամբ: Այդ օրը Բալեանը
առաւ, թէ ինչպէս իր աչքերի առաջ մարդը վերածում էր կոտոշ մեքենայի:
Նա հետապնդում երկար մտածեց եւ պարզեց, որ այդ գարշելի Արեւշատեանը
հաստ մեկուսարանն էր նետել իր էութեան մէջ ապրող մարդուն եւ պրծում
էր սրում արբնացած գազանի թելադրանքով:

Այդ օրը Մովսէս Բալեանը ծերացաւ:

Այժմ նա կում-կում սուրճ էր խմում, եւ նրա յիշողութեան մէջ պարզ
մանրամասն յառնում էին անցեալ որբերդութեան ահաւոր առեղծները:

Բալեանը ժպտաց: Արեւշատեանն այժմ աշխատում է ատելութեան ցան-
ցում, փողոցով անցնելիս մայթը փոխում է, որ իր նախկին ոստիկանին չհան-
դիպի եւ, ասում են, մի խնջոյքի ժամանակ բաժակ է առաջարկել «նշանաւոր
ճարտարապետ, հայ ժողովրդի պարծանք, իմ ուսուցիչ Մովսէս Բալեանի կե-
նացը...»:

Բալեանն ինքն իրեն ծիծաղեց եւ նայեց ձեռքի ժամացոյցին: Բարկէն
Մանուկեանին ուշացաւ: Նա վերջերս կարծես խուսափում է Մովսէսին հան-
դիպելուց:

Մովսէսը նորից պատուիրեց մի բաժակ սուրճ եւ նորից փոխադրուեց
յիշողութիւնների աշխարհը:

Աքսորավայրում արտելուած անեկդոտներ պատմելու պատճառով
Բալեանը հինգ օրով նետուել էր մեկուսարան եւ համոզուած էր, որ երկու օր
յետոյ ցրտից կը փայտանայ, կը մեռնի: Բայց երկրորդ օրուայ առաւօտեան
ճամբարապետը նրան մեկուսարանից հանեց ու սահնակով տարաւ չքնաղային
կենտրոն՝ ուր պիտի առաջին քարտուղարի առանձնասենեակը:

Առաջին քարտուղարը լայնաթիկունք, ակնոցաւոր ու թաւարեղ մի սե-
բերցի էր, պիեսներում պատկերուած ընդյատակեայ տարբեր բանուորի կեր-
պարանքով: Նրա կարինետում նստած էին եւս երեք հոգի, համեմատաբար
աւելի երիտասարդ մարդիկ, ըստ երեւոյթին, շրջանի մութ գործիչները:

Առաջին քարտուղարը, որին ճամբարի պետն անուանեց Ռոդիոն Գ-
լուխիչ, մի պահ մոայլ հայեացքով պիտեց աքսորականին եւ չատ մեղմ առնով
հարցրեց.

— Դուք ճարտարապե՞տ էք:

— Ճարտարապետ եմ,— հեգնանքով պատասխանեց Բալեանը:

— Հայաստանի՞ց էք:

— Հայաստանից:

Թաւարեղ սերբերցին ժպտաց.

— Ես եղել եմ Հայաստանում բնակեր Սերգօ Օրջոնիկիձէի յանձնարա-
րութեամբ:

Բալեանն ինչ-որ անորոշ յոյսով կենդանացաւ.

— Եթէ բնակեր Օրջոնիկիձէն կենդանի լինէր...

— Կարո՞ղ էք ժողովրդական ակուռմրի նախագիծ կազմել,— քարտու-
ղարը թոյլ չտուեց, որ Բալեանն իր միտքն աւարտէր:

— Ես այդ պիտի նախագիծը չատ լաւ կազմել Հայաստանում:

— Շատ բարի,— քարտուղարն ուրախ աչքով արեց իր պաշտօնակից-
ներին: — Ուրեմն ճամբարից կը տեղափոխուէք մեզ մօտ: Կ'աշխատէք իրրեւ
հարտարապետ: Ձեր կազմէք մեզ համար ժողովրդական ակուռմրի նախագիծ:
Մենք ձեզ կը տանք բնակարան եւ աշխատավարձ: Եթէ լաւ նախագիծ կազմէք

յայնկէ, ձեզ կ՚ապատանդ ժամէն ալ աւելի առաջ: Ի՞նչ մեղադրանքով էք ազատուած:

Ձամբարի պետը, որ այդ խօսակցութեան սկզբում բնկճուել էր և մեքենաբար արտրում էր պանապան մատնապրեխով լեցուն իր խոշոր պայուսակը, այսահեղ աշխուժացաւ.

— Ես առնմ, Ռոդիոն Գաւրիլովիչ: Այս րոպէս մահափորձ էր կազմակերպում բնկեր...

— Ախ դուք մարդուն մի անպատուէք,— խիստ եղանակով ներատեց աստղիկ բոյրը:— Եթէ մենք մարդուն կանչել ենք ընդհանրային կամքով, ուրեմն պարտաւոր ենք նրա հետ խօսել յարգանքով: Թող ինքը պատմի, թէ ինչ մեղադրանքով է դատապարտուած:

— Ես ոչ մի մեղք չունեմ,— ասաց Բալեանը:— Միայն մի կարծիք եմ յայտնել և մինչև այսօր էլ մնում եմ այդ կարծիքին: Հայաստանի դեկավարներից մէկը երեսուներեք Քուականին ինքնատպան եղաւ: Ես ասացի՝ նա ոչ մի յանցանք չունէր, ինքնատպանու քիւն դործեց, որ Մոսկուայի ուշադրութիւնը հրաւիրի Անդրկովկասում կատարուող անարդարութիւնների վրայ: Որեւէ մարդու սպանելու միտք ես երբեք չեմ ունեցել:

— Սուտ է ասում,— ճամբարի պետն իր պայուսակից հանեց մի քուղթ ու մեկնեց քարտուղարին:— Այս դեկուցագիրը ես երեք օր առաջ եմ ստացել, Ռոդիոն Գաւրիլովիչ: Այս... կարեւոր որը չարունակում է իր...

Քարտուղարը քուղթը բարձրաձայն կարդաց իր պաշտօնակիցների համար:

Մատնագիրը լսելուց յետոյ Բալեանն իրեն դգաց մղձաւանջային երազի մէջ: Մէկը մատնել էր Բալեանին երեւի մի պնակ աւելի ապուր ստանալու համար: Բալեանն իր այդ խօսակցութիւնից հրաժարուել չէր կարողանայ. մատնագրի հեղինակն իրեն երեւի ապահովել է վիճաներով: Բալեանը չէր էլ ուզում հրաժարուել իր ասածներից: Նրա կեանքի օրէնքն էր դա՝ իր կարծիքը պնդել ամենածանր կատանքների և մահուան սպառնալիքների առաջ: Բալեանն իրեն դգում էր ծովի մէջ խեղդուող այն մարդու վիճակում, որի ձեռքը աւելիւն փրկութեան օղակ, իսկ ոտքից կապում են ջաղացքար: Նրան մի պահ ժպտացել էր երջանիկ հեռանկարը. ազատուել քառատուն ատիճան սառնամանիքի առակ փոստրակ փորելուց և նոյն այդ փոստրակի համար նախատիճ կազմել, նորից վերցնել ճարտարապետական քանոնը, վերադառնալ սիրած աշխատանքին, կուշտ ուտել և քնել մաքուր անկողնում: Բայց պարզուեց, որ դա միայն մշուշ էր, մի վայրկեան լուսաւորեց և անէացաւ՝ իր յետեւից աւելի խաւացնելով խաւարը: Պարզ էր, որ այս ահաւոր մատնութիւնից յետոյ Բալեանին այլեւս չեն հրաւիրի նախատիճ կազմելու, այլ կը վերադարձնեն ճամբար, նորից կը նետեն մեկուսարան, որտեղ նա ցրտից կը փայտանայ, կը մեռնի: Կամ քրէականները նրան պարզապէս «կը քխկացնեն», ինչպէս արել են շատերին... իսկ Մովսէսեան այնքան էր սպասում այն օրուան, երբ վերջապէս կը բացուի արդարութեան առաւօտը, և ամբողջ երկրի վրայ ծանրացող սիրիրեան մատախուղը կը փարատուի: Մովսէսեան այնքա՞ն էր ուզում ապրել ու տուն վերադառնալ: Իսկ այժմ... Մնա՛ք բարով, յոյսեր, մնա՛ք բարով...

Բայց կատարուեց անսպասելի մի հրաշք: Հանկարծ քաւարեց Ռոդիոն Գաւրիլովիչը, փոխանակ Բալեանին հարցնելու՝ դուք այդ պիսի բան ասե՞լ էք (Մովսէսը կը պատասխանէր. «այո, ասել եմ»), փոխանակ նրան յանձնելու ճամբարի պետի պատասխանին, հեղնական մի հայեացք փոխանակեց իր պաշտօնակիցների հետ, մատնագիրը դէն շպրտեց և ասաց.

— Ընկեր ճամբարի պետ, ամօթալի չէ՞ք համարում այսքան անխիղճ մեղադրանք բարդելը մի մարդու վրայ, որն առանց այն էլ անասելի պատասխանատու է և տանջուած:

— Ամոթ եւ խայտառակութի՛ւն,— առաջին քարտուղարն հետ տամ ձայնեցին չրջանի մեւս երեք դեկավարները:

Ձամրարի պետը կուչ եկաւ եւ պատին այլեւս չդարձրացրեց: Բոլոխն գաւլովիչը ձեռքը արձամարձանքով քաշի առաւ նրա կողմը եւ պարձակալ դիմեց Բալեանին.

— Ուրեմն համաձա՞յն էք աչխատել մեզ մօտ իրրեւ ճարտարապետ:

Բալեանին կարծես գերեզմանից հանել եւ դրել էին արեւի տակ: «Ուրեմն Բերիային առելը սրանց աչքում էլ յանցանք չէ»,— մտածեց Բալեանը եւ պատասխանեց.

— Շնորհակալ եմ, բնկեր... քաղաքացի քարտուղար: Դուք ինձ յարմար առեք:

Բալեանը սերիրեան այդ նորակառոյց քաղաքում աչխատեց երկու տարի: Նրան ժամկէտից առաջ ազատեցին եւ առաջարկեցին պետական ճարտարապետի պաչտօն, բայց Մովսէսը կարօտել էր էր հարազատ ծայրերին ու մարդկանց: Նա չատպեց վերադառնալ առուն:

Մովսէս Բալեանը ժպտաց իր յիչողութիններին եւ երկրորդ անգամ առաջ պատուրեց:

Բարկէն Մանդակունին վերջապէս եկաւ: Նա առաւօտեանից առաջ առղմեց Բալեանի ձեռքը եւ պրաւեց նրա պիտակի աթոռը: Մի պահ նրանք խօսելու նիւթ առես չէին գտնում: Բալեանը յուսիթիներ խզեց վերջապէս.

— Ի՞նչ կը խմես, Բարկէն:

— Թէյ:

— Ճիշտ եա առում... Թէյը լաւ է ապդում յիչողութեան վրայ:

— Իմ յիչողութիները Թէյի կարիք չուներ:

Բալեանը մի քանի կուում առաջ խմեց.

— Լաե՞լ եա, որ Դաւիթն ու Եւան բաժանուել են:

— Գիտեմ,— մատուցող աղջիկը մօտեցաւ, եւ Բարկէնը առաջ պատուիրեց...— Ես Եւային խորհուրդ առուի վերադառնալ ամուսնու մօտ: Մանաւանդ այժմ, երբ Դաւիթին հանել են աչխատանքից, նրան լքելը կը լինէր փոքրոգութիւն:

(Հետեւում է)

ՆԱԻՐԻ ՉԱՐԵԱՆ

Ընտիր

Նայիրի Զարեանի «Յարդագողի ճամբան» անուն պրուքեան մէջ հրատարակուած ուսանող Վարդուհը հատուածաբար ընթերցողին յիշեցուց այս յուշագիրքին կամ այն առասպելային էջերուն իրենց պատահմունքը հարցազրուելու ու չարչարելու պատճառ եղած ուրիշ ուսանողներ, մա՛նաւանդ՝ Գուրգէն Մահարիի «Ծագկած փշալարեր»ուն մէջ, որմէ, իբրեւ նկատողութիւն հատուածաբար նմոյշ, կ՚արտագրենք համապատասխան պարբերութիւնը:

Այդ առիթով բարքերուն անդրադառնալէ առաջ, յիշեցնենք, որ «Նորք»ի 1989 թուականի համարներուն մէջ թէեւ նոր լոյս կը տեսնէր Նայիրի Զարեանի «Յարդագողի ճամբան» բայց ընթերցողը բոլորովին անտեղեակ չէր անոր գոյութենէն: Երեւանի «Գրական թերթ»ը չուրջ քսան տարի առաջ, այսինքն՝ պրատման տարիներուն (1964) «Ծանօթ պոդոտայ» խորագիրին տակ հրատարակեց անկէ հատուած մը, որ 37 թուականը ընդգրկած իր խորքով ու ողբերգական բնոյթով չվրիպեցաւ նաեւ արտաոտհմանի ընթերցողներուն ուշադրութենէն: Ուրեմն՝ քսան տարի գրրացին մէջ մնալու պատապարտուեցաւ անիկա: Ուրեմն՝ անգամ մը եւս գրրացները պատրաստ չէին, հոգիներուն պէտ էին եւ գրրացները, դրա ողոգած էին հայոց ոգրերկրաւքիւնները, որոնք չարուհակուեցին նաեւ Սասլինի մահուանէն յետոյ ու գեռ կը չարուհակուէին»:

Զրպարտուած արդար մարդ մը ֆիզիքապէս ոչնչացնելէ առաջ բարոյապէս մեռցնելու եղանակները անծանօթ չեն պատմութեան, որովհետեւ քուրքեր եղած են աչխարհի մէջ, ֆաչիստները եղած են, նացիները, ուրիշ հոգեառներ, չենք կարծեր ատկայն, որ այդ բոնութիւններէն որեւէ մէկը կրցած է պերապանցել համայնավար տոկուտպետութեան մէջ կիրարկուած այն ոահմոկեցուցիչ միջոցները, որոնց ենթարկուեցաւ նաեւ մեր երկիրը:

Դեռ իր ուժին մէջ կը մնայ հարցումը, որ կը տանջէ չարչարող ամենազօրներու եւ չարչարուող անզօրներու այս փոխյարաբերութեան պիտի կանգնած մարդոց միտքը, այ՛ն, որ՝

— Վարդամիա պատահոնները իրե՞նք չեն կրցած արտաքոյ կոտահել իրենց ուսանողներուն հոգւոյն մէջ ծուարած ճիւղները, թէ չնկիսանները այդքան արագ յաչողած են հրէշներ խմորել տնոնց հոգիներուն: Թէ՛ մէկը, հատուածաբար, թէ՛ միւսը, տնտեսուոյս: Անհոգի խաուռուածքները միշա պիտի ըլլան իրենց լծակից անհոգիները:

Նոյն վարքագիծէն նոյնարիւնակ փորձառութիւն մը մատնանչելու համար պիտի էլլին կ՚արտագրենք նաեւ Մկրտիչ Արմէնի ներկայացուցած երկու նախկին ուսանող-բարեկամներու փոխյարաբերութեան վերաբերող բաժինը, «Երեք մարդ մի ճախցում» անուն պատմուածքէն, որ, ի դէպ, կրնայ համարուիլ Եւրոպայի մէջ այնքան մեկնաբանուած անհիքիք գրականութեան գլուխգործոցներէն մէկը...

*
* *

...Երբ «Կապիտալ»ի առաջին Թարգմանիչին, ազնիւ ռուսաստական պատահոսին քննիչները ձեռի են քաչել, պատահոսը փորձել է ուչքի բերել իր նախկին ուսանողներին, պիտելով նրանց զգաստացնող խոսքերով. «Ի՞նչ է քանում, ազաներ, ինչո՞ւ հետու չէք նայում, ախր, պատմութիւն կայ, պատահականատարութիւն կայ»... Քննիչներից մէկը ծխախոտը հանգցրել է, անդելով իր պրոֆեսորի ճակատին եւ ասել.— Քանի մենք կանք, պատմութիւնը չի լինի, իսկ երբ պատմութիւնը լինի, մենք չենք լինի: — Ճիչտ գուչակութիւն, հիմա, երբ այդ օրերը պատմութիւն են գարձել, երբ տիրում է երկրում լենինեան կարգ ու կանոն, նրանցից ոչ մէկը չկայ... («Ծագկած փշալարեր», Երեւան, 1988):

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

ԵՐԵՔ ՄԱՐԴ ՄԵՆԱԽՑՈՒՄ

Նա շատ ուրախացավ, երբ առաջին անգամ պնդավ քննչի մոտ, տեսավ, որ նա ծանոթ մարդ էր իրեն: Միասին ապրել էին համալսարանում: Ինքը՝ բնագիտական ֆակուլտետում, իսկ նա՝ իրավաբանական: Ապրել էին միևնույն հանրակացարանում, մինչև անգամ միևնույն սենյակում: Միասին էին նախաճաշել, ճաշել ու ընթրել, միասին էին ծանոթացել ապագիներուհիների հետ, միասին էին յուճախել կինոթատրոն, լբտարանք... Օգնել էին իրար՝ նեղ վիճակում, իրար հետ կիսել անկե առաջացած ծանրությունները...

Ձիշտ է, ամպրոպից յետոյ կնանքը նրանց տարել էր տարբեր կողմեր, բայց, երեմն-երբեմն, տարեկան երկու-երեք անգամ, հանդիպում էին պատահարար, պնում էին միասին ճաշելու կամ պարիզյուր խմելու եւ սիրայն չուրջ վերջիններս իրենց ամանորական տարիները կամ պատմելու իրենց նեղկացի մասին:

Թվում էր նրանք, թեև հին մտերմություն, շատ նման էին դու-ով խոսել սկսած մեկեանց հետ, բայց այսուհետ, քննչի կարիքը, կարծես որ յարմար պատ դուք-ով դիմել իր վաղեմի ընկերուհուն եւ մինչեւ անգամ նրա անունն ասելիս դնել «ընկեր» բառը.

— Բայց ասեցեք, ազատում եմ ձեզ, այս ի՞նչ է կատարում մեր շուրջը, ընկեր... — սկսեց նա մտերիմ ասելով: Բայց «ընկեր»ը վերջին բառը եղավ նրա բերանում: Ցավոքը բան չէր, այլ ասում, որ, բանտցի ուժեղ հարուածով ջարդված, ընկավ բեղի տակ...

Կալանավորը մի պահ ոչինչ չհասկացավ: Ապա դեմքի բնավորը — նրա վաղեմի ընկերը խիստ բարկացավ նրա վրա՝ դուք փոխարկելու այդպիսի պաշտոնական դիմումի համար, եւ ասեց մի քանի խրատական խոսքեր՝ դիտողության կարգով, որ ինքը ոչ մի անգամ չպիտի թույլ տա իրեն նման վերաբերմունք իր հանդեպ: Ապա հարցրեց, թե ինչ է կատարվել:

Կալանավորի աչքերը փոշ մնաց դուրս թռչեն գլխից: Նա հայհոյեց չուռ քննչի վրա: Ամաոր, ասելիս, ջարդել էր ոչ պատահարար: Դա արդեն պատրաստ էր: Բայց պատճառն ծանրակշիռ էր մի ուրիշ, պատճառի համար: Մի՞թե, իսկապես, իր ամանորական քնկերուհին ատելի էր նրան, եթե ոչ մի իրավաբան ընկերուհի չէր ուզում ունենալ իր պաշտոնակցի, այլ նրան էր համարում այդպիսին... Ո՛չ, այդ արդեն կատակ է անում ընկերը: Նայեց երեսին: Ո՛չ, կատակ չի անում: Բայց չեն խորթ քո մտքով ձեւ ուրիշ տեսակի հարկի, կատակ է անում: Թե՞, այնուամենայնիվ, կատակ չէ անում...

— Ասեցե՛ք,— դառնաց քննչը եւ ատելությամբ խոսեց նրա վրա:

Կալանավորն ուշադրություն դնում վար:

Քիչ յետոյ, երբ նրան կոպիտ կերպով ուշի բերեցին, նա նույնիսկ ժպտաց՝ երիտասարդ աղջկան մեղքից հանդուրժած: Փորձեց: կատակ չէր անում:

Ցավոքը հանդիպում մեծի ժամանակ, երբ նրա վաղեմի ընկերը «մշակում» էր նրան, նա անընդհատ նայում էր քննչի աչքերին եւ ուզում էր գտնել իր դեմքում ձայնած վերջին, բայց ամենակարեւոր հարցին համապատասխանող Փանասի՞կ էր նա, թե՞ մարդկային դեմքը կորցրած արարած...

ԱՐՄԱՆ ՏԱՏՈՒԼ



... Բարերախտաբար բարեւ ունը բացուեց, քիչ-քիչը դուռները բացուեցին, ապաւորին կարող էին գրել-կարդալ եր կիներուն ժ բացուեց, յատ ու չոր-ատ ծաղրուանքը, յատկապես Հայաստանեայ մը ամբ ատ ալ էր, որ Հնարաւոր եղաւ խօսիլ:

Ես, որ ասեմ, ատհատարակ չեմ ծանոթացած Տրապարակախօսական եղ գրչեներէն, գրած եմ միայն բանաստեղծութիւններ — չատերի կարծիքն այդպէս է — չէ, առաջինը ես եմ գրել այդպիսի յօդուած: Սակայն այդ յօդուածը, երբ տպագրուեց «Սովետական Հայաստան» թերթում, այնպիսի մի օր Հասաւ, որ 90 վիճաց Տարբագրողը, որ պիտի պարբերաբար ստանար, դադրեց տպագրուելէ ամէնէ 8 էջ, այդ 8 էջն ալ չէ ձգուած փոփոխութիւններով (Տարբագրեայ «Ապագրէզ», 28 Օգոստոս 1988):

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՎԱՀՐԱՄ ՀԱՃԵԱՆ.— Ցայտնի է նաեւ, որ ֆո «*Սարդարապատ*» վէպն արգելուած է: Ի՞նչ ճակատագիր է նրան եւ նմանատիպ գրքերին սպասւում վերակառուցման շրջանում:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ.— *Լոյս է տեսել նաեւ «Զրուցարան»ի երկրորդ հատորը, որի մէջ խօսք է գնում մեր մշակոյթի մասին՝ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Իսկ «Սարդարապատ»ը, որ գրուել ու տպագրութեան էր գրանցել լճացման տարիներին, վերակառուցման շրջանում, 1986 թ. չորս տարի չարուած մնալուց յետոյ, ցրուել էր: Հիմա նորից չարում են: Երեւի լոյս կը տեսնի:*

Այս առթիւ ի՞նչ կ'ուզենայի ասել. երանի՛ թէ ամէն ինչ լինի իր ժամանակին: Թէ չէ, ընթերցողը պիտի զարմանայ՝ այստեղ ի՞նչ կայ, որ արգելք է գարձել տպագրութեան: Ջէ՞ որ ես այդ գիրքը գրել եմ այն ժամանակ, երբ մթնոլորտում ուրիշ կարգախօսներ էին տիրական:

«Սարդարապատ»ի օրին է նաեւ մեր անուանի գրող Սերօ Խանզադեանի «Անդրանիկ» վէպը: Արգէն որերո՛րդ տարին է, որ բախտին է սպասում Անդրանիկ զօրավարի կեանքի ու գործունէութեան փաստաթղթերի ժողովածուն:

Կար ժամանակ, Ախուռգովներն ու Ալիեւները իրենց Բաքւում փուչտացնում էին, եւ դա մեր Երեւանում քաղաքականութիւն էր դառնում: Ջես հասկանում՝ հիմա՞ ինչ կայ, եւ ո՞վ է ասել, թէ մեր իրաքանչիւր քայլը պարտաւոր ենք համաձայնեցնել նրանց հետ, ովքեր՝ այնքան էլ չեն ուզում, որ մենք այս աշխարհում անսայթաք գնանք մեր ճանապարհը:

Ասում են՝ տպագրութեան արժանի ամէն մի գիրք վազ թէ ուշ կը տպագրուի: Ուշ կամ ուշացած՝ միշտ էլ հեղինակի մէջքն է կոտրում. իսկ վաղը՝ ոչ ոքի պէտք չէ: Լաւ է՝ ամէն գիրք, որ արժանի է տպագրութեան, տպագրուի ժամանակին («Ազդակ», 11 Յունուար 1989):

Երեւան, Նոյեմբեր 1988

Ընագին

ՀԻՆ ԿՈՒԻԼԸ

Յովհաննէս Թումանեանի «Վերջին օրը» անուն բանաստեղծութիւնը «Հայաստանի հանրապետութիւն» թերթին ուշադրութեան յանձնող իր նոթին մէջ, Ց. Ղանալանեան կը խօսի 1916ին լոյս ընծայած բանաստեղծին «Հայրենիքիս հետ» ժողովածուն լեցնող քերթուածներուն մասին, առաջին իսկ պարբերութեամբ ընդգծելով, որ՝

«Դրանց մէջ կան եւ այնպիսիները, որոնք, տարաբախտաբար, հետագայ տարիներին, բազմաթիւ անգամներ վերահրատարակուած Թումանեանի երկերի ժողովածուներից եւ ոչ մէկում տեղ չ՚ն գտել: Ի հարկէ, ոչ կազմողների, այլ՝ ժամանակների մեղքով: Օ՛, ժամանակներ, Օ՛, բարբեր: Խօսքը «Հին կուլը» եւ «Վերջին օրը» ստեղծագործութիւնների մասին է, որոնց ճակատագրի մասին եւս միայն Թումանեանագէտները»:

«Վերջին օրը»՝ չենք գիտեր, բայց «Հին կուլը» բանաստեղծութեան մասին լուսաբանմամբ կը կարծենք:

Մենք ձեռքի տակ չունինք «բազմաթիւ անտիմներ վերահրատարակուած Թումանեանի երկեր»ի բոլոր ժողովածուները, բայց բանաստեղծին 100ամեակին առիթով չորս հատորով լոյս տեսած «Երկերի ժողովածու»ի առաջին հատորին մէջ տեսած ենք «Հին կուլը» խորագիրը կրող երկու բանաստեղծութիւնները, առաջինը տասնմէկ էջ հաշուող, երկրորդը՝ եօթը: Այս առաջին կուլէն եւ երկրորդ կուլէն դատ երբո՞ղ «Հին կուլ» մը ունի արդեօք Թումանեան, թէ Ղանալանեանի ակնարկը այս կուլներէն մէկուն կամ միւսին կամ միւս ժամանակ երկուքին կը վերաբերի: Եթէ վարկածին այս երեսը ճիշդ է, ապա ուրեմն «միայն Թումանեանագէտներին» ծանօթ չեն անոնք, իսկ եթէ երրորդի մը մասին է խօսքը, ո՞ւր է այդ երրորդը եւ հրապարակայնութեան ձեռնհաս պայմաններուն մէջ ինչո՞ւ «Վերջին օրը» բանաստեղծութեան կողքին կամ յաջորդ օրերուն տեղ չէ տրուած անոր: Գուցէ տրուա՞ծ է: Չենք գիտեր: Մեր պայմաններուն մէջ դիւրին չէ գրական բոլոր անցուդարձերուն տեղեակ ըլլալ: Թող ներողամիտ ըլլան, եթէ թիւրիմացութեան «հոգին» վրայ կապմուած են վերի հարցումները: Գրութեան հերոսը չարքաշին բանաստեղծ մը չէ ի վերջոյ, Թումանեանն է, ու ընթացիկ նիւթ մը չէ ընդգրկուածը, տասական թուականներուն վերաբերող կոխն է, նչանաւոր ուժ մը մէկը, բախտաւորչ բախտի մը միւսը, որոնց կապուած մանրամասնութեանց դիմաց չի կրնար անտարբեր մնալ հայ մարդը:

Թումանեանի ծննդեան 100ամեակին լոյս ընծայուած յիշեալ շարքը ունեցողները ծանօթ են ուրեմն «Հին կուլը» խորագրեալ բանաստեղծութեան թէ՛ առաջին եւ թէ երկրորդ բաժիններուն, իսկ «Բագին»ի հետեւողները անպայման կարդացած պիտի ըլլան անոր առաջին բաժինը, որ արտադրուեցաւ Դաշնակցութեան 80ամեակին նուիրուած բացառիկին մէջ:

Ստորեւ կը ներկայացնենք երկրորդին նախերգանքը:

ՀԻՆ ԿՈՒԻԼԸ

ԵՐԿՐՈՒԻՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հեքիաթը ասում է, թէ՝ մի աշխարհում
Բլխում էր առատ ջուրն աճմահական,
Բայց ագահ վիշապն առաջը փակում,
Ծարաւ էր թողնում աշխարհին աճելման:

Նա գոհ էր ուզում սիրուն աղջիկներ,
Որ ջուր բաց թողնի ծարաւ աշխարհին.
Եւ, աճմահութեան ջրի փոխարէն,
Մարդիկ շատ դարեր արցունք խմեցին:

Մինչեւ մի ադամ, լոյս երկրից եկած,
Կրնուեց էն գեղի աշխարհի համար,
Ցաղրեց, ագահին աղջիկը փակուած,
Տաճկուող հոգիներ փրկեց աճեմար:

Ո՛չ, հեքիաթը չի ասա լիքը երբեմ,
Եղած թէ չեղած մըրիկ աշխարհում,
Ձըշգրիտ դէպք է ասա տեսած իմ աչքով,
Եւ հեքիաթ չկայ մեր աճրախտ կեանքում:

Մեր երկրագնդից աղբիւրը փակած՝
Մեր վարդ հայրերից յօշոտում է ձա...
Ախ, թնչքան արիւն, արցունք է թափուա
Մեր սիրուն երկրի սարերի վրայ...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հայրենիքիս հետս» խօսուն խորագիրը կրող իր պրպտումի, որ լոյս էր ընծայել Ռոմանոսի Թումանեանը 1916 թուականին, ամփոփուած են պռնակի հայրենասիրական խորքով գրուած բարձրարուեստ բանաստեղծութիւններ: Դրանց մէջ կան եւ այնպիսիները, որոնք, տարաբախտաբար, հետապայ տարիներին, բռնապետ անպամնեի վերահրատարակուած Թումանեանի երկերի ժողովածուներից եւ ոչ մէկում տեղ չեն գտել: Ի հարկէ, ոչ կոմմոպներից, այլ՝ ժամանակների մեղքով: Օ՛, ժամանակներ, օ՛ բարքեր: Խօսքը «Հին կոխր» եւ «Վերջին օրը» տեսակցապատմութիւնների մասին է, որոնց ծանօթ են միայն Թումանեանագէտները: Ու մ յայտնի չէ, որ ճիշտ այդպէս էին վարուում մաքի խոշորագոյն ներ նաեւ Աւետիք Իսահակեանի «Հայդուկի երգեր» բանաստեղծութիւնների շարքի հետ:

Ահաւասիկ հայրենիքի վեհ պատգամը դեռեւ է մեր այս, եւ ոչ միայն այս պռնաններին: «Հին կոխր» պոեմի նիւթի մասին հետեւեալն է գրել Թումանեանը «Ռոստոմի յիշատակին» գրած իր յօդուածում. «Հետագայում էլ մի քանի պատմութիւններ արաւ ու առաջարկեց, որ բանաստեղծութեան նիւթ առնեն: Ես նրա պատմածներից, միայն մէկից, որ պատմեց 1890 թուականին, մի տէրտէրի ու իր աղջկայ պատմութիւնից օգտուեցի ու նիւթ առայ մի պոեմի: Տարիներ առաջ ոուս ժանդարմները խուզարկեցին, տարան կորցրին էդ պոեմը: Ես միայն մի երկու կտոր գտայ պահմուցմով, որ տպուեցին «Տանր», «Երկրում» եւ «Հայոց լեռներում» վերնագրերով»:

Պոեմի նախերգանքում կան «մարդ ասէր» եւ թագայի եւ ցարական Ռուսաստանի մասին արուած այսպիսի մերկացումները.

Մենք ասում էինք՝ աչքի ցաւերով
Կր գան օգնութեան մեր ծանրր օրին…
.....
Երկրի մեծերր չեն փոխում իրենց
Մեռելի ոսկրին ողջ ազգր հայի,
Մեր տուն են ուզում, մեր տեղ են ուզում,
Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի…
Նա էր, որ Աստծու անուշով եկաւ,
Փրկչական խաղով, խօսքով գրքութեան,
Նա էլ Աստծուն՝ կանգնեց՝ փառք տուաւ,
Իր մենք յօշոտուած, տանջուած ենք էսման:

Թումանեանի ակնարկը վերաբերում է կանցլեր Բիսմարկի ցինիկ այն յայտարարութեանը, թէ «Հայ ժողովուրդը չարժէ մի պոմերանցի (գերմանացի) գինուորի փտած ոսկորներին»: Իսկ միւս ակնարկը «փրկչական խաչով նկած» ցարական գեներալներին է վերաբերում, որոնց համար «Հայաստանր պէտք էր առանց հայերի», մի առիթով ասել է Թումանեանը բանաստեղծ Սերգէյ Գորոդեցկուն:

Ազգային-ազատագրական պայքարն իր վառ արտայայտութիւնն է գտել նաեւ «Վերջին օրր» բանաստեղծութեան մէջ: Բանաստեղծութիւն, որ երգնել է Թումանեանը 1915 թուականին, Մեծ Եղեռնի օրերին: Անհրաժեշտ էր վառ պահել հայութեան գոյատեւման պայքարի ոգին: Թումանեանի աչքի առաջ էր, որ այդ օրերին Թիֆլիսում կազմակերպուում էին հայկական համաժողովրդական գնորդ, Թիֆլիս էր եկել համաժողովական առաջին գործադիր կազմակերպող Թումանեանի մեծ բարեկամ, վաստակաշատ գործավար


Անդրանիկը նաև Թումանյանի բնակարանը Հաղարծնում էր պահել նաև վաղը նախագահ Ա. Պետրոսյանին ընդունելու համար, պնդում էր Ա. Պետրոսյանին ընդունելու համար Անդրանիկի սրտով վարվելու, հարցնում էր Ա. Պետրոսյանի հետագա ծրագրերի մասին։ Թումանյանին ընդունելու համար Անդրանիկի սրտով վարվելու, հարցնում էր Ա. Պետրոսյանի հետագա ծրագրերի մասին։ Դրա պատճառն արտագաղթությունն էր

Ծուխ է բարձրանում Արաղայ դաշտից,
Կրակ է կանգնած Զէյթունի վրայ…
Ամէն կողմերից բշնամին գունդ-գունդ
Շարժում է մեր դէմ ու չի երեւում,
Չեմ տեսնում վերջը նրա շարքերի…»
— «Հէ՛յ, ընկե՛ր, ասաւ խրմբապետն այնժամ,
Հէ՛յ, ընկե՛ր, ասաւ, ետ նայիր հապա,
Ետ նայիր, մի տես, հայերը հեռուից
Չե՞ն գալիս արդեօք մեզի օգնութեան…»
Ու յոգնած ձեռքը դրրեց ճակատին,
Կրտրին հայդուկը նայեց դէպի ետ.
— «Խրմբապետ, ասաւ, ընկեր խրմբապետ,
Տեսնում եմ ահա, ինչպէս ափիս մէջ,
Սեւ ծովից մինչեւ ծովը վրրկանայ,
Մինչեւ Կովկասի պատնէշը ձիւնոտ.
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,
Գալիս են ճեպով մեզի օգնութեան:
Իջնում են Սիւնեաց մութ-մութ սարերից,
Ելնում Գուգարքի խոր-խոր ձորերից,
Շիրակի դաշտից մինչեւ Այրարատ,
Ու ողջ ափերը Անուշ Արաքսի
Անվերջ տագնապով իրար են անցնում…
Գալիս են ամէն կողմից Կովկասի,
Գալիս են հեռո՛ւ, հեռու կողմերից,
Գալիս են կարօտ պանդուխտներն ամէն,
Գալիս են ցրրուած տրղերքը նորից,
Գալիս են՝ պարզած դրրօշն հայրենի…»
— «Հէ՛յ, ընկե՛ր, ասաւ խրմբապետը փորձ,
Հէ՛յ, ընկե՛ր, ասաւ, սուր աչք ունիս դու,
Նայիր դէպ հիւսիս, աւելի հեռու,
Չի՞ շարժում արդեօք հիւսիսը հրզօր…»
Ու նայեց հայդուկն աւելի հեռու,
Նայեց սրրատես աչքով արծուենի.
— «Խրմբապետ, ասաւ, ընկեր խրմբապետ,
Աչքս չի կրտրում՝ որտեղից մինչ ուր՝
Շարժում է, ահա, հիւսիսն ընդհանուր.
Յորձանք է տալիս ծովրն ոռւսական,
Յորձանք է տալիս ծանր ու ահաւոր,
Դէպի ամէն կողմ — ափերն հեռաւոր.
Եւ, հուր ու շոգի շրնչելով ուժգին,
Գրնացքը կրտրած գրնացքի ետեւ,
Ու, գալարուելով հովիտից հովիտ,
Գալիս են, ինչպէս վիշապներ սեւ-սեւ…»

— «Հէ՛յ, ընկե՛ր, կանչեց խըմբապետն արի,
Հէ՛յ, ընկե՛ր, կանչեց, դէ ցած եկ արագ,
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջիր Սըրբազան ափը եփրատի.
Հին պատերազմի վերջին գարկն է սա,
Հին ոճրագործի հոգեվարքն է սա…»
— «Խըմբապետ, կանչեց, ընկեր խըմբապետ,
Խմբապետ, կանչեց հայդուկը ջահել,
Հայոց երկնահաս լեռների վըրայ
Խո՛ր, խորհրդաւոր ձայներ են լսում.
Դըղըրդում է խուլ երկինքը վերից
Է՛ն ահուն, ահռուն, անթիւ ձայներից…»
— «Հէ՛յ, ընկե՛ր, կանչեց խըմբապետը հին,
Հէ՛յ, ընկե՛ր, կանչեց, խաչ հան երեսիդ.
Էդ կեանքում տանջուած, տանջանքով մեռած
Անթիւ, անհամար, անբախտ հայերի
Հոգիներն են հէգ, որ լաց ու կոծով,
Արեան մըրրիկով երկինք վերացան:
Փոթորկում են դեռ Աստծու առաջին,
Բողոքում ահուն երկընքով մին.
Նըրանց բողոքի աղմուկն է անլուռ,
Հասնում է ներքեւ՝ հայի ականջին…
Հէ՛յ, ընկե՛ր, ասաւ, խաչ հան երեսիդ,
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջիր Սըրբազան ափը Եփրատի,—
Մեծ տառապանքի վերջին օրն է սա…»

1915

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ



...Դու բան ես գրում, գրում ես միայն մի բանի համար, որպէսզի ճշմարտութիւնը չաղաւաղուի, այլ հանդէս գայ այնպէս՝ ինչպէս եղել է իրականում: Դու այդ իրականութեան ականատեսն ես, մասնակիցը, գործող անձը: Նա այգաեղ չի եղել, չգիտի: Բայց նա խմբագիր է, գլխաւոր խմբագիր կամ... Եւ ասում է, հանիր, սա հանիր, որ տպեմ: Ասում ես, մարդ Աստծոյ, ես դրա համար եմ գրել, դա եմ գրել, եթէ հանեմ՝ տակը բան չի մնայ: Ասում է, հանիր, մինչեւ չհանես՝ չեմ տպի: Ասում ես, լսիր, ես խաչքար եմ քանդակել, իսկ խաչքարը մեզ համար հիմա կրօնական սրբութիւն չէ, արուեստի սրբութիւն է, մեր ժողովրդի հոգու գեղեցկութեան դրսեւորման ձեւը: Եթէ խաչը հանեմ, սա այլեւս խաչքար չի լինի, չգիտեմ ինչ կը լինի, բայց ոչ խաչքար: Ասում է, հանիր, խաչը հանիր...
(«Գրական թերթ», 1987, թիւ 21):

ԲԱՂԻՇ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

— Կարդացի ձեր «*Ինչպէս յիշում եմ*» յուշերի նոր գիրքը, որ սկսւում է «*Բակունցի հետ*» խորագրով: Մեր մեծ հայրենակիցը նոյնպէս զոհ դարձաւ սաւալինիզմին: Նշանաւոր գրողի հետ դուք ապրել էք միեւնոյն փողոցում, ծանօթներ էք եղել: Գրքում ապագրուածն ամբողջակա՞ն է, թէ՞ էլի յուշեր ունէք՝ կապուած Բակունցի եւ նրա ընտանիքի ողբերգական ճակատագրի հետ:

— *Յուշերիս նոր գիրքը իմը չեմ համարում: Այն ամբողջական չէ: Դա անգրթօրէն խեղուած է, եւ այդ խեղումը կատարեցին առանց ինձ տեղեակ պահելու՝ մեր նախկին գաղափարական ղեկավարների ցուցումով: Իմ նպատակն է նորից իր նախնական վիճակով հրատարակուած տեսնել գիրքս: Կը յաջողուի՞, չգիտեմ: Դեռեւս գոյատեւում են ստալինիզմի հաշիւով մթագնած պետական եւ կուսակցական ուղեղներ:*

— Իսկ դուք, Սերօ Նիկոլաեւիչ, որեւէ նոր գրուածք ունէ՞ք այդ թեմայով:

— *Նոր բան չունեմ: Բայց այդ ժամանակների մասին ունեմ 1949–50 թուականներին գրուած մի քանի գործեր, որոնք պարզ է, անտիպ են: Աւելի ճիշտ, մերժուել են ժամանակին: Բայց դրանք պահել եմ իրրեւ իմ հոգու ամենաթանկ գանձերը, իրրեւ ժողովրդական ողբերգութեան ճշմարիտ պատկերներ: Այսպէս՝ տակաւին 1952ին հրատարակչութեանը ներկայացրի «Քարերը լեզու ունեն» պատմուածքներիս շարքը, որտեղ կարողացածիս չափ աուել եմ Հայոց Նախիջեւանի գաւառի հայութեան բռնի աեղահանութեան ու ոչնչացման 1921–50 ըը. պատկերը: Ջտպագրուեց: Երկար ժամանակ մերժուեց տպագրուել իմ «Գեղեզմանափորի յիշատակարանը» վիպակը: Դա «Սովետական գրականութիւն» ամսագիրը տպագրեց միայն մէկ տարի առաջ, վերակառուցման ու հրապարակայնութեան մեր օրերում: Եւ, վերջապէս, չատերին յայտնի իմ «Անդրանիկ» վէպը արգէն աասը տարի է ինչ գանւում է հրատարակչութիւն-ընթերցող ճամբին («Գրական թերթ», 1988, թիւ 49):*

ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳԻՐ

Ես այս ևամակն ու Բակունցի կեանքից փոքրիկ յուշապատառը չէի ուղարկի Ձեզ, եթէ համոզուած չլինէի, որ իրօք եկել է հրապարակախօսութեան եւ բացխօսութեան ժամանակաշրջանը: Չէի ուղարկի, որովհետեւ հանգուցեալ ամուսինս, կենդանութեան օրօք, երկու անգամ դիմել է «*Սովետական գրականութիւն*» ամսագրի խմբագրութեանը եւ երկու անգամն էլ մերժուել.— հասկանալի է, լնացման տարիներն էին, ուրիշ բան սպասել չէր կարելի... Մի բանի խօսք ամուսնուս՝ Գարեգին Մանուկեանի մասին: Եղել է իր ժամանակի առաջադէմ մտաւորականներից, պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում ուսանելիս Մելիոնեան փոնտի թոշակառու էր, աւարտելուց յետոյ պահել են պրոֆ. Մ. Աբեղեանի ասպիրանտ, այնուհետեւ, Խանջեանի կարգադրութեամբ մեկնել է Մարտունի՝ տեղում լուսաւորութեան գործը կազմակերպելու... 1937 թ. նրան ձերբակալում են, որպէս Խանջեանի համախոհ... Արդարացուեց եւ աքսորից վերադարձաւ 1956 թուին՝ Ստալինի եւ Բերիայի մահից յետոյ... Եղել է ՆՍՀՄ ժուռնալիստների միութեան անդամ, աշխատել է շրջանային թերթի խմբագիր... Մահացել է 1984 թ.: Յուշեր է գրել Բակունցի մասին. նրա հետ երկուս եւ կէս ամիս նստել է նոյն բանտախցում... Մեծանուն գրողը խնդրել է ամուսնուս, որ նա, եթէ երբեւիցէ ազատուի, հանդիպի կնոջն ու յայտնի նրան, որ ինքը բոլորովին անմեղ է եւ եթէ կարող է, թող ների իրեն՝ պատնառած տառապանքների համար...

Եւ ահա, կարծես թէ եկել է այդ եւ բոլոր միւս այսօրինակ խնդրանքները կատարելու ժամանակը... («*Նորք*», 1989, թիւ 9):

Յարգանքներով՝
ԷՄՄԱ ՆԻԿՈԼԱՑԻ ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ

ՅՈՒՇԻ ՄԻ ՊԱՏԱՌԻԿ

1937 թուի Փետրուարի 22ին, մռայլ ու սարսուռն մի երեկոյ, ինձ համար միանգամայն անսպասելի, կանչուեցի Հայկական պետական անվանգութեան կոմիտէ ու ինձ կալանաւորեցին...: Ուզարկելուց յետոյ ինձ տարան ու հրեցին ներքնայարկի նկուղներից մէկը, կարծես 21րդ խուցը:

Գուռը ճռինչով փակուեց, բանալին չառաչով պտտուեց փականի մէջ ու վերջ...: Ցի լոյսն աղօտ էր, դեղնակարմիր, մեռելային ու ճնշող: Օդը գաղջ էր: Կալանաւորներից բացի մէկից, ուշադրութիւն չդարձրին վրաս: Գուներեղ վերմակի տակից (տանից ուղարկուած) գլուխը վեր բարձրացնողն ու ինձ նայողը Ակսել Բակունցն էր, որին հինգ օր առաջ մենախցից էին փոխադրել այստեղ, քանի որ նրա նախնական քննութիւնն արդէն աւարտուած էր: Միւսներն էլ էին Բակունցի պէս գունատ ու տկար: Բակունցը, իր պատմելով, մենախցում արդէն նստել էր իննամիս: Այստեղ նա հատանարար իրեն աւելի լաւ էր զգում, քանի որ գտնուում էր մարգկանց մէջ, հետեւաբար՝ աշխարհում: Բակունցը մեղմ չչնջաց՝ «Մօտ արի, նստիր, այստեղ, կողքիս»:



Ակսել Բակունց

Բակունցը, իր պատմելով, մեծախցում արդէն նատել էր իննամիս:

Ջնայած հիւծուածութեանը, գէմքի արտայայտութիւնը պահպանում էր իր երբեմնի բնական խրոխտութիւնը:

Նա ասաց, որ իր վրայ բարգուում է մեղադրական չորս յօդուած, որոնցից իւրաքանչիւրն արդէն իսկ դատապարտում է մի պատժի առաւելագոյն չափով:

Քննիչը նրան կարդացել էր իր կողմից կազմած մեղադրական եզրակացութիւնը եւ պահանջել էր ստորագրել եզրակացութեան տակ:

Մի անգամ, մօտաւորապէս հետեւեալ կերպ արտայայտուեց. «Իմ երկիր, իմ սերմնացան եղբայր, ինձ համար մորմոքուող կին, հայրակարօտ որդի, երեւի իմ վերադարձին էք սպասում, արդէն ուշ է, անդորրեցրէք Ձեր սիրտը իմ երկրի պատուիկնեերով»:

Արդարամիտ էր Բակունցը: Մեծատաղանդ գրող, սակայն ստալինեան ժամանակը նրան եւս առաւ իր ճանկերի մէջ ու արորեց անարատ ու անբասիր հոգին:

Գ. Մ.

Խօսում էր խնայողաբար, նուաղուն ձայնով: Դէմքը արեւ չտեսած բոյսի պէս գունատ էր, բայց աչքերը մեղմ փայլում էին: Իմ չփոթրուածութիւնը նկատելով՝ ճիգով ժպտաց եւ մելամաղձոտ մի ցոլք անցաւ հայեացքով ու դանդաղօրէն մարեց՝ անհետացող ծիածանի պէս:

Ջնայած հիւծուածութեանը, գէմքի արտայայտութիւնը պահպանել էր իր երբեմնի բնական խրոխտութիւնը:

Խցում հաւաքուածները հիմնականում գիւղացիներ էին (միայն մէկը կար Ապարանի չրջանի Ղրխգագիրման (Հնարերգ) գիւղից՝ ուսուցիչ Մամիկոնը) եւ նրանցից ոչ մէկին յայտնի չէր, որ իրենց հետ տառապում է «Ալպիական մանուշակ»ի հեղինակը: Այդ գիշեր ինձ երեք անգամ վեր ու վար տարան քննութեան համար: Բակունցն ինձ նախապէս զգուշացրեց. «Գիտեմ, դու եւս անմեղ ես, բայց միամտօրէն ուրիշների անունը չտաս, իմացիր, որ շատերը այդ ճանապարհով անմեղ զոհեր են դարձել»: *Առաւօտեան կէս չերեփի չափ վարսակի չիլա ու 400–500 գրամ տարեկանի հաց տուեցին, գա մեր օրապա-*

հիկն էր: Կոտրուած սրտով ուտել էլ չուզեցի եւ գացի ու չիլան տուեցի Բակունցին:

Բակունցի նախնական քնութիւնն աւարտուած էր, սպասում էր դասի: Նրա գործը պէտք է լսուէր Գերագոյն դատարանի յատուկ կոլեգիայում: Շատերի գործը հեռակայ կարգով լուծւում էր Մոսկուայի եռեակով: Որքան յիշում եմ, նա ասաց, որ իր վրայ րարգւում է մեղադրական չորս յօդուած, որոնցից իւրաքանչիւրն արդէն իսկ դատապարտւում է պատժի առաւելագոյն չափով եւ երանի էր տալիս ինձ. իմ յօդուածը թեթեւ էր եւ ես գուցէ թէ պըրծնէի...

Բակունցը սպասում էր, որ շուտով կը կանչուի դատաքան եւ «կ'օրինականացուի» մահապատիժը:

Բակունցի կամքը ճկել էր դանդաղ ու աստիճանական սովը, որ կերառել էր նրա քննիչը եւ որի անունը նողկանքով էր յիշում գրողը: Յաւօք, ես մոռացել եմ այդ անունը, բայց վստահ եմ, որ իմ քննիչ Արծրունի Մովսիսեանը եւս լաւ է յիշում: Յատուկ գաժանութեամբ էր այդ «քննիչն» աշխատել Բակունցի հետ:

Բակունցը ցաւով խոստովանում էր, որ իր ուղեղը ցամաքում է առանց կարդալու եւ գրելու:

Ջնայած մահուան սպասումին, նա չէր մոռանում Երեւանի ժողտան (որն արդէն սկսուած էր) կառուցման, Սեւան տանող երկաթգծի չինարարութեան, քաղաքի եւ գիւղերի բարեկարգման հետ կապուած հարցերը եւ անընդհատ տեղեկութիւններ էր պահանջում ինձնից, քանի որ ես նոր էի «մուաք գործել» այդ դժոխքը: Բանտերն ու բանտերի վերածուած միւս չէնքերն օրէցօր լցւում էին մարդկանցով: Բակունցը մեծ ողբերգութիւն էր ապրում: Կալանքից առաջ չգիտեմ Բակունցն ինչպիսին էր, բայց այդ ժամանակ չատ դիւրագրգիռ էր, գրեթէ չղազար: Ցաճախ էր դուռը ծեծում եւ հսկիչից պահանջում թարմ ջուր, բայց հսկիչը ղրան անցքից հեգնանքով պատասխանում էր. «Տեղդ ճստիր, այստեղ ֆեզ համար սանատորիա չէ»...

Մենք բոլորս օրապահիկը ստանալուն պէս միանգամից էինք սպառում ու սպասում մինչեւ յաջորդ առաւօտ: Մի անգամ Բակունցը փորձեց չուտել ստացած հացը, թողնել յաջորդ օրուան, որպէսզի կ'արողանայ այդ օրը երկու անգամ սնուել, սակայն չկարողացաւ նախատեսած ռեժիմը պահպանել, նոյն պահին երկուսն էլ միանգամից կերաւ՝ ծիծաղելով պատճառաբանեց, թէ չի ցանկանում տարբերութիւն դնել մեր եւ իր միջեւ:

Օրական երկու անգամ, մի քանի րոպէով մեզ տանում էին զուգարան: Բակունցի տրամադրութիւնը մի քիչ բարձրանում էր, յափշտակուած մօտենում էր ջրի ծորակին, լուացւում էր, գլուխը թրջում, յափշտակուած լսում ջրի ձայնը: Ջուր չաս էր սիրում եւ ասում էր, որ միայն ջրի նուաղ գլգլոցն է մուաք գործել րանա որպէս միակ վկայութիւն բնութեան գեղեցկութեան ու կեանքի: Ջուգարանից վերադառնալով պառկում էինք (քայլելու տեղ էլ չկար) եւ Բակունցը խորասուզւում էր մտքերի մէջ, եթէ խօսում էլ էր, ապա՝ գեղեցիկ ու պատկերաւոր: Մի անգամ սկսեց խօսել մարդու աչքերի մասին: Շատ էր ափսոսում, որ անաւարտ են մնացել «Աբովեան» եւ «Կարմրաքար» վէպերը, նպաստակ է ունեցել վիպերգութեան վերածել Թոնդրակեցոց շարժումը, այդ մասին դրուագներ էր պատմում մեզ:

Ես եւ ուսուցիչ Մամիկոնը չատ էինք հետաքրքրւում նրա եւ Ջարենցի մտերմութեամբ եւ խնդրում էինք, որ նա Ջարենցի բնաւորութեան եւ նրա բանաստեղծական արուեստի մասին պատմի:

Զարենցի անունը լսելիս լցւում էր խանդաղատանքով, յաճախ էր կրկնում իր բանաստեղծ ընկերոջ հետեւեալ երկտողը.

— Լաւ եմ գրել, թէ վատ, սրտովդ իմացիր,
Չկայ ուրիշ ճնճղատ ես սրտից բացի:

Մի օր Բակունցը քնից զարթնեց ու պատմեց իր տեսած երազը. «Զարմանալի երազ տեսայ. Զարենցը նստած կապոյտ նժոյգին սլանում էր Արովեան փողոցն ի վեր: Ժողովրդի հսկայ ալիքը փութկոտուքեամբ ճանապարհ էր բացում նրա առաջ: Վախից կծկւում էր սիրտս՝ թէ հիմա ինչքան մարդ կարող է տրորել ձիու սմբակների տակ: Թէկուզ երազ, բայց կարօտս առա Զարենցից:

«Զարենցի պոեզիան նման է իր նստած կապոյտ նժոյգին՝ ինչքան թողէր նրա սանձը, թէկուզ մինչեւ երկինք կը սլանար»:

Բակունցի պատմելով Զարենցը չատ էր սիրում ձիակառք նստել՝ յետոյ սմբակների դոփիւնը եւ ձիերի համաչափ վարգը նրան հիացմունք էր պատճառում:

Եթէ չեմ սխալւում 1937 թուի Ապրիլի 3ին էր, որ Բակունցը կանչուեց քննիչի մօտ: Վերադարձին չատ յուզուած էր ու մռայլ: Քննիչը նրան կարդացել էր իր կողմից կազմած մեղադրական եզրակացութիւնը եւ պահանջել էր ստորագրել եզրակացութեան տակ: Ամրողջ գիչեր չքնեց: Առաւօտեան չէր կարող վեր կենալ «անկողնուց», դժուար էր նայել նրա դէմքին: Շրթունքները սպիտակել էին, անասելի գունատ էր, դէմքի մկանները ջղաձիգ ցնցւում էին: Լուռ նայում էինք նրան: Շրջուեց դէպի պատը ու չէր ցանկանում խօսել: Մի քանի րոպէից յետոյ յենուեց արմունկին, ապա նստեց...: Քիչ առաջուայ նրա նիհար ու գունատ դէմքը բոսորագոյն ղարձաւ: Սկսեց ինքն իրեն խօսել:

Յետոյ վեր կացաւ ու կանգնեց, ճակատը չոյեց՝ արեւ չտեսած գալուկ ձեռքով ու արտասանեց, կարծես Պուշկինի հետեւեալ երկտողը.

..... Մէկը բամբասանքներ կը յերիւրէ մեր մասին,
..... Միւսը հոգատարօրէն կը փայփայէ մեզ:

Նստում կամ պառկում էինք՝ ուրիչ ի՞նչ կարող էինք անել: Խօսում էինք զանազան բաների մասին: Մի անգամ խօսք բացուեց՝ սիրոյ, ճիրքի եւ մարդու ընդունակութիւնների մասին:

Ըստ Բակունցի սէրը նման է արեւի, որի ջերմութեամբ ու լոյսով ծաղկում, փթթում ու կենդանութիւն է ստանում մարդու ողջ բնութիւնը: Սէրը հաղարերանդ, դիւթական ուժ է մարդու էութեան մէջ: Մարտիկին հեքիաթային սխրագործութեան է մղում՝ հայրենիքի, մօր, երեխայի, կնոջ սէրը:

Որեւէ հարցի մասին խօսելիս թուում էր, թէ նա երազում է, մոռանում էր տառապանքները, իր գլխին կախուած վտանգը:

Ազատութիւն էր փափաքում, երազում էր կրկին չրջել հայրենի բնութեան գրկում, տեսնել ընկերներին:


կարօտի զգացմունքը, ըստ Բակունցի, ամէնից չատ հային է տրուած: Նա չատ էր տուայտում Սփիւռքի հայութեան մասին, որ անչէջ կարօտ ունի դէպի իր հայրենի օջախը, իր նոր ու հնամենի օջախը:

Մի անգամ, մօտաւորապէս հետեւեալ կերպ արտայայտուեց. «Իմ եր-
կիր, իմ սերմնացան եղբայր, ինձ համար մորմոքուող կին, հայրակարօտ որդի, երեւի իմ վերադարձին էք սպասում, արդէն ուշ է, անդորրեցրէք Ձեր սիրտը իմ երկերի պատառիկներով»:

Նրան արգելուած էր այգ կարգի նամակները գրել, թէ չէ շատ մտքեր ու ապրումներ կարող էր զեաեղել դրանց մէջ:

Մէջը կուտակուած մտքերն ու պատկերները ցանկանում էր գրի՜ առնել, բայց ո՛չ թուղթ կար, ոչ էլ թանաք: Որեւէ բան գրում էր պաշտրոմի փոքրիկ թերթիկների վրայ՝ այրուած լուցկու ծայրով, որոնք հնարաւորութիւն էր պահպանել, քանի որ այրուած լուցկու փուչին թղթի վրայից ջնջւում էր: Բակունցը որեւէ հարցում իրեն մեղաւոր չէր համարում: Անձնական գրոյցի ժամանակ յաճախ էր ասում, որ սուբյեկտիւօրէն համակուած է եղել մեր երկրի ու նրա քաղաքական կարգերի սիրով, բայց ո՞վ է յօրինել մեղագրելու «օբյեկտիւ» պատճառները եւ ինչո՞ւ է քննիչը ստիպում ստորագրել առաջադրուած մեղադրական կէտերի տակ: Արդարամիտ էր Բակունցը, մեծատաղանդ գրող, սակայն ստալինեան ժամանակը նրան եւս առաւ իր ճանկերի մէջ ու տրորեց նրա անարատ ու անբասիր հոգին:

ԳԱՐԵԳԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Վաղուց է, ինչ հրաատարակչութիւնում բղկտւում, տպարանում՝ բանատրկւում եւ դեռ ընթերցողին չի հասել իմ բանաստեղծութիւնների նոր «Ելք Եգիպտոսից» գիրքը, որտեղ բազմաթիւ նոր բանաստեղծութիւնների կողքին տեղ են գտել նաեւ իմ՝ տարիներ ու տասնամեակներ առաջ գրուած, բայց... հասկանալի պատճառներով անտիպ մնացած չատ բանաստեղծութիւններ: Պատրաստւում եմ գրել իմ սերնդի եւ իմ ստեղծագործական «ողիսականը» այդ ահաւոր ու դաժան տասնամեակներում...: Այդ թւում՝ նաեւ մեծ մասամբ «մարանչող անտաղանդների» ձեռքով գրուած այն «քննադատական» յօդուածների մասին, որոնք աւելի շատ նման էին մատնագրերի կամ մեղադրականի ու ձերբակալման օրդերի... («Գրական թերթ», 1989, թիւ 47):

ԳԼՈՐԳ ԷՄԻՆ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ. «ԵԹԷ ՍՏԻՊՈՒԱԾ ԵՆՔ ԻՆՉ–ՈՐ ՀԻՒՐԻ ՄԵՐ ՏԱՆ ԴՈՒՐԸ ՅՈՅՑ ՏԱԼ»

*

Տարիներ առաջ էր, Լեւոն Մկրտչեանի եետ խօսում էինք վերջին տասնամեակներին մեր բանասիրութեան առաջ կանգնած արգելափակոցների եւ դրանք յաղթահարելու եամար ծախսուած վիթխարի ջանքերի, մա՛նաւանդ զուր կորսուած եոանդի ու հնարաւորութիւնների մասին:

Ես յիշեցի, որ 1966 թ· վերջերին Պարոյր Սեւակն ու Ասատուր Մնացականեանն ինձ էին տուել երկու ձեռագիր, որպէսզի ծանօթանամ: Առաջինը բաւական ծաւալուն մի ընդդիմախօսութիւն էր ոչ անյայտ Զիա Բունիաթովի տխրահռչակ գրքի մասին: Ստորագրել էին երկուսով եւ հիմնաւորապէս ջախջախում էին պատմութեան տգէտ կեղծարարի հակահայկական վայրաբաչութիւնները: «*Պատմա–բանասիրական հանդէս*»ի 1967 թ· N° 1ում տպագրուեց այդ աշխատանքը՝ բաւական խուզուած ու խեղնացուած:

Երկրորդ ձեռագիրը, որ միայն Սեւակի ստորագրութիւնն էր կրում, ուղղուած էր Երեւանի համալսարանի գիտխորերդին եւ եողմացրիւ էր անում այն ժամանակ միութենական մամուլում ազգային եարցի ու ազգային լեզուների ճակատագրին վերաբերող հակաժողովրդական եղյութեամբ մեծ ադմուկ եանած Ահադ Ադաեի դոկտորական դիսերտացիան, որը պիտի պաշտպանուէր յիշեալ գիտխորերդում... Ո՞ւր է այս աշխատանքը, արդեօք հնարաւոր չի՞ լինի եա մալսարանի արխիւից եանել եե... Ես այն ժամանակ երատարակութեան մասին մտածել իսկ չէի կարող: Գոնէ ունենայինք ձեռքերիս, տարածէինք մտաւորական շրջաններում՝ յուսալով, թէ կը գան նպատաւոր օրեր, եւ հնարաւոր կը լինի տպագրուած տեսնել մեր մեծ բանասեղծի ու մեծ մտածողի այդ աշխատանքը եւս:

Լեւոնն ասաց՝ այդ ճամակն իր մօտ է գտնուում: Ասաց եւ վերկացաւ (իր ամառանոցային տանն էինք), ասես դրա եամար յատուկ նախապատրաստուել էր, առանց ժամանակ կորցնելու, գրադարակից եանեց մի ծաւալուն ծրար ու մեկնեց ինձ:

Ես ծրարից եանեցի ձեռագիրը, սարսուռով թերթեցի, եամոզուեցի, որ աւելի քան տասը տարի առաջ եիացումով ու խանդավառութեամբ կարդացածս ճամակն է: Եւ որոշեցինք, որ այն մեքենագրել տամ, պատրաստեմ տպագրութեան...

Այս գրոյցից, ևամակը տպագրութեան պատրաստելուց շուրջ տասը տարի է անցել··· Ուրախանանք, որ եկել է տպագրութեան ժամանակը («*Երեկոյեան Երեւան*», 11 Սեպտեմբեր 1989)։

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ

Երեւանի պետհամալսարանի գիտական խորհրդի նախագահ ընկ.
Մ. ՆԵՐՍԻՍԵԱՆԻՆ

եւ նոյն խորհրդի քարտուղար ընկ.
Մ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻՆ

Հայաստանի գրողների միութեան համագումարի պատգամաւոր
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՑ

Հայաստանի գրողների համագումարը խիստ քննադատութեան ենթարկեց տխրահռչակ Ախեղ Աղաեւի հակալենինեան մտքաշարժութիւնները ազգային լեզուների եւ մշակոյթների մասին։ Այդ արդար եւ զայրալից խօսքը հնչեց համագումարի այնպիսի պատգամաւորների եւ հիւրերի շուրթերից, որպիսիք են Նայիրի Զարեանը, Յովհ. Շիրազը, Կոստանտինէ Գամսախուրդիան, Վազգէն Մնացականեանը, Յակոբ Սալախեանը, Ալեքսանդր Ջանփոլատկին։ Այդ նոյն օրերին Կիեւում տեղի էր ունենում Ուկրաինայի գրողների հերթական համագումարը, որտեղ նոյնպէս անհրաժեշտ հակահարուած տրուեց Աղաեւի հակալենինեան հայեացքներին։ Նշեմ ուկրաինական հեռատրոնից միայն երկուսին՝ ՍՍՀՄ գրողների միութեան քարտուղար, Ուկրաինայի գիտութիւնների ակադեմիայի թղթակից-անդամ Լէոնիդ Նովիչենկոյին եւ «Դրուժբա նարոդով» ամսագրի խմբագիր Սերգէյ Բարուզդինին, որոնց ելոյթները տպագրուած են ուկրաինական գրական թերթում (սոյն թուի Նոյեմբերի 22ի եւ 25ի համարներում)։

Աղաեւի հակաազգայնական եւ քաղաքական տեսակէտից խիստ վնասակար հայեացքները քննադատութեան են ենթարկուել ո՛չ միայն յիշեալ, այլեւ՝ համարեա՛ բոլոր հանրապետութիւնների գրողների, ինչպէս նաեւ կուսակցական համագումարներում։ Օրինակ, Վրաստանի կոմկուսակցութեան վերջին համագումարում այդ մասին խօսեց Վրաստանի գրողների միութեան առաջին քարտուղար, ակադեմիկոս-բանաստեղծ Իրակլի Աբաշիձէն (որի ճառը տպուած է «Զարիա վոստոկա» թերթի 1965ի Մայիսի 10ի համարում)։ «Վոպրոսի լիտերատուրի» ամսագիրը (որ օրգանն է ՍՍՀՄ գրողների միութեան եւ Մ. Գորկու անուան համաշխարհային գրականութեան ինստիտուտի), սկսած 1962 թուականից, ոչ թէ մէկ անգամ, այլ բազմիցս, հանդէս է եկել նոյն այս Աղաեւի վնասակար գրոյցների քննադատութեամբ՝ Ռոբերտ Բիկմուխամեդովի, Նաֆի Զուտոյիտի եւ այլոց միջոցով, իսկ բոլորովին վերջերս (6րդ համարում)՝ Նովիչենկոյի բերանով, որ գտաւ այս Աղաեւի գործունէութեան ճիշտ գնահատականն էլ՝ դա անուանելով լիկվիդատորական մօտեցում գրականութեան ազգային ձեւերի եւ, մասնաւորապէս, ազգային լեզուների խնդրին (էջ 42)։

Աղաեւի կեղծ-գիտական եւ սուտ-մարքսիստական դրոյթների քննադատութեամբ հանդէս է եկել նաեւ սովետական մեծ գրող, լենինեան մրցանակի դափնեկիր, Դաղստանի ժողովրդական բանաստեղծ ՍՍՀՄ Գերագոյն սովետի պատուիրակ Ռասուլ Համզատովը, որի աքանչելի բանաստեղծութիւնը հայերէն թարգմանեց ու տպագրեց սովետական ոչ պակաս նշանաւոր բանաստեղծ Նայիրի Զարեանը՝ դրանով իսկ իր ձայնը միացնելով ինչպէս համա-

տովին, այնպէս էլ բոլոր նրանց, ովքեր հանդէս են եկել Աղաեւի դէմ՝ ելնելով մարքսիզմի, լենինեան ազգային քաղաքականութեան, սովետական իւրաւարութեան արտաքին քաղաքականութեան, ինչպէս նաեւ պարզապէս արդարութեան եւ մարդկայնութեան դիրքերից:

Սովետական Միութեան բոլոր ժողովուրդներին լայնօրէն ծանօթ է ռուս նշանաւոր գրող ու բանաստեղծ Վլադիմիր Սոլոուխինի մահացու հարուածը՝ «Ի՞նչն է մեզ հարազատեցնում» վերնագրով (տպուած «Լիտ. գազետա», 1962 թ., N° 16ում), մի յօդուած, որ պատիւ է բերում ռուս մեծ ժողովրդի իսկական զաւակին եւ պէտք է, որ մահացու դառնար Աղաեւի համար, եթէ սա հասկանար, թէ պատուաւոր մահը գերադասելի է անփառունակ գործունէութիւնից: Վերջապէս, փաստերի չարանը չատ չերկարացնելու նպատակով, յիշեցնեմ, որ բոլորովին վերջերս մոսկովեան «Դրուժբա նարոդով» ամսագրի խմբագրատանը տեղի ունեցաւ ազգային մշակոյթներին նուիրուած մի լուրջ խորհրդակցութիւն, որին մասնակցում էին սովետական բազմաթիւ ազգերի եւ ժողովուրդների ականաւոր ներկայացուցիչներ, որոնք բոլորն էլ միահամուռ եւ միաձայն մերկացրեցին Աղաեւի հակագիտական եւ հակալենինեան գործունէութեան էութիւնը (խորհրդակցութեան նիւթերը տպագրուելու են ամսագրի առաջիկայ համարներում):

Այս ամէնից յետոյ տարօրինակ եւ արտառոց հնչեց րնկ. Արտօ Եղիազարեանի այն նամակը, որ հասցէագրուած էր Հայաստանի գրողների V համագումարին:

Իր նամակով Արտօ Եղիազարեանը պնդում է, որ Աղաեւի հասցէին ուղղուած քննադատութիւնը իբր թէ անարդար է, որ նա իբր թէ չունի սխալներ, այլ միայն ինչ-ինչ սխալ ձեւակերպումներ, եւ որ Աղաեւը իբր թէ հանդէս է գալիս ոչ թէ ազգային մշակոյթների եւ լեզուների ճուլման աեսութեամբ, այլ ընդամէնը «Օբիեկտիւօրէն կատարուող այդ պրոցեսին» աջակցելով միայն:

Ես, իբրեւ գրողների համագումարի պատգամաւոր, պարտք համարեցի մի անգամ եւս վերընթեռնել Աղաեւի յօդուածները, ինչպէս նաեւ փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի աստիճան պահանջող նրա գիրքը, որպէսզի ինքս ինձ համար պարզեմ՝ ճի՞շտ է արդեօք րնկ. Արտօ Եղիազարեանը Աղաեւի աշխատանքներին տուած իր մեկնաբանութեամբ:

Փաստերին դիմելուց առաջ ես պարտք եմ համարում նախապէս ասելու, որ Աղաեւն իր գիրքն ու յօդուածները պիտի ներկայացներ Երեւանի պետական համալսարանի գիտական խորհրդին՝ փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի աստիճան ստանալու պահանջով, սակայն ետադոյն դէպքում) Հայաստանի ժուռնալիստների միութեան վարչութեանը, այդ միութեան անդամ դառնալու խնդրանքով: Կան բառեր, որոնք ինչքան էլ քաշքշւում են ու լկտում, դարձեալ չեն կորցնում իրենց վսեմ հնչեղութիւնը: Փիլիսոփայութիւնը այս կարգի բառերից է: Եւ ամօթ է փիլիսոփայական կոչել յօդուածների եւ յօդուածիկների մի չարան, որտեղ փիլիսոփայական միտքը չէր էլ կարող նոյնիսկ գիշերել, որովհետեւ եղած ամբողջ տարածութիւնը գրաւած է էժան դիլետանտիզմով, մարքսիզմի այբուբենի (միայն այբուբենի) չարաչահութեամբ, հերթապահ նախադասութիւնների ամբոխով, ամբոխավարական մտածողութեամբ եւ չարաղրանքի մի եղանակով, որ այսօր մերժելի է նաեւ ժուռնալիստիկայի բնագաւառում:

Դեռ Բեկոնն է ասել, որ «գրքերը պիտի լինեն արդիւնք գիտութիւնների եւ ոչ թէ գիտութիւնները՝ արդիւնք գրքերի»: Աղաեւի «գոկատրականը» մի գիրք է, որ ծնուելով գրքերից, աղաւաղում է հենց այդ գրքերը՝ առաջացնելով ո՛չ թէ մէկ, այլ՝ երկու պղտորութիւն: Այս պղտորութիւններից առաջինը

կապւում է ջրի հետ: Ինչպէս րոլորս էլ գիտենք՝ ջուր են պղտորում ձուկ որսալու համար: Այդ ձուկն Աղաեւը արդէն որսացել է· 1963ին, Բաքւում, պարձել է բանասիրական գիտութիւնների թեկնածու, բայց գա քիչ համարելով՝ չանցած 2–3 տարի, հիմա էլ ուզում է Երեւանում դառնալ դոկտոր՝ այս անգամ էլ փիլիսոփայական գիտութիւնների: Բայց եկէք խորապէս ըմբռնենք, որ Աղաեւը իր մտքաշարժութիւններով միայն ջուր չի պղտորում, այլ նաեւ աւի՛ւն, րսա որում ոչ թէ սոսկ մարդկանց, այլ՝ ժողովուրդների՛ արիւն:

Աղաեւը իրեն երեւի համարում է նացիոնալիզմի ոխերիմ թշնամի: Իսկ իմ կարծիքով, այսօր նա N° 1 նացիոնալիստն է ամբողջ Սովետական Միութեան մէջ, որովհետեւ նացիոնալիզմի ջրաղացին ոչ ոք այնքան ջուր չի լցրել, որքան սա՝ իր ջրիկից էլ ջրիկ յօդուածներով:

Միամիտները կարող են կարծել, թէ Աղաեւը մեծ ռուսասէր է: Իսկ ես կարծում եմ, որ այսօր ոչ ոք այնքան չի վնասում ռուս մեծ ու բարի ժողովրդի վարկին, որքան սա:

Աղաեւի գիրքը լեցուն է հազար ու մի թուական եւ վիճակագրական տուեալներով, տոկոսներով ու քանորդներով: Թոյլ տուէք օգտուել թուական ամենամեծ տուեալից· մեր երկիրն ունի մօտ 220 միլիոն բնակչութիւն, որի կէսը ռուսներ են, կէսը՝ ոչ ռուսներ: Եթէ չզբաղուենք մտային պահմտոցի խաղով, այլ լինենք անկեղծ ու չիտակ, ապա չենք կարող չասել, որ Աղաեւի էժան վարքագիծը մեզ վրայ շատ թանկ է նստում, փաստօրէն նա 110 միլիոն ժողովուրգների մէջ անվստահութեան կամ դոնէ զգուշաւորութեան զգացմունք է չարժում ընդդէմ 110 միլիոն մի ժողովրդի, որ անմեղ-մեղաւոր ռուս ժողովուրդն է: Միայն այսքանը բաւական է, որպէսզի Աղաեւի հովանաւորողները հասկանան, թէ նրա գործունէութիւնը քաղաքականապէս վտանգաւոր է այն աստիճանի, որ նա արժանի է պարզապէս մեկուսացման:

Եւ այդ վտանգաւորութիւնը այսքանով չի վերջանում: Ես նոր եմ վերադարձել Հունգարիայից, ուր տեղի ունեցաւ բանաստեղծների համաեւրոպական կոնգրես: Ուստի եւ՝ հաւատացէ՛ք իմ վկայութեանը, որ Աղաեւը տըխրահռչակ է ո՛չ միայն մեր երկրում, այլեւ՝ աշխարհում: Աղաեւի մտքաշարժութիւնները թարգմանուել են մեր երկրի եւ մեր գաղափարախօսութեան թշնամիների կողմից եւ դարձել մի սեւ գրօշակ՝ ընդդէմ մեր կարմիր դրօշի: Ո՛չ միայն ժողովրդա-դեմոկրատական երկրներում, այլեւ՝ Ասիայի եւ Աֆրիկայի՝ անկախութեան ձգտող եւ անկախութեան հասած, ազգային գարթօնք ապրող եւ մեր գաղափարախօսութեանը հակուող ժողովուրդների մէջ Աղաեւի կեղծ-գիտական եւ սուտ-մարքսիստական մտքաշարժութիւնները ընթանում են ընդդէմ մեր կառավարութեան այն արտաքին քաղաքականութեան, որ յայտնի է բոլորին, ընդդէմ մեր այն ներքին քաղաքականութեան, որ կոչւում է լենինեան, ընդդէմ այն սկզբունքի, որ կոչւում է ազգերի իրաւահաւասարութիւն, ազգային լեզուների եւ մշակոյթների զարգացում ու բարգաւաճում, եւ ընդդէմ այն կոչի, որ հնչում է իբրեւ ժողովուրդների եղբայրութիւն ու բարեկամութիւն:

Ուստի՝ Աղաեւի յիրաւի լիկվիդատորական վարքագիծը, անկախ իր իսկ կամքից, սխալ է նախ եւ առաջ քաղաքականապէս: Նա, աւելի քան ուրիշ մէկը, ջուր է լցնում նացիոնալիզմի ջրաղացին: Նա վարկաբեկում է ռուս ժողովրդին եւ չարակամութիւն զարգացնում ռուս մեծ լեզուի նկատմամբ: Նա մեր երկրից ու մեր գաղափարախօսութիւնից խրտնեցնում է ինչպէս դեմոկրատական երկրների ժողովուրդներին, այնպէս էլ Ասիայի ու Աֆրիկայի ազգերին եւ ազգութեան ձգտող բազմամիլիոն բնակչութեանը: Զարմանալի է, որ այսքան վիթխարի մի ճշմարտութիւն չեն նկատում մեր այն ընկերները,

որոնց ողջ կեանքը այլ բան չի եղել, քան քաղաքական ճառեր ասելն ու քաղաքական քարոզներ կարգալը:

Աղաեւի անձնական իրաւունքն է ջուր պղտորելը: Բայց մեր բոլորիս պետական, կուսակցական եւ գիտական պարտականութիւնն է թոյլ չտալ, որ նա նաեւ արիւն պղտորի: Մեր բոլորիս պարտականութիւնն է վերյիշել եւ Աղաեւին էլ յիշեցնել անգլիացի բանաստեղծի այն խօսքը, որ ուղղակի հասցէագրուում է սոյն Աղաեւին. «Ձեր մտքի բարձրութիւնը չափեցէք այդ մարի արձակած ստուերի երկարութեամբ»: Իսկ Աղաեւի սուտ մտքերի արձակած ճշմարիտ ստուերը Դաղստանից հասնում է Կոնգօ եւ Կոնգոյից՝ ամերիկեան կոնգրես:

Այս է հարցի բաղաքական կողմը:

Հիմա գանք գիտականին:

*
* *

Ես չգիտեմ, թէ Աղաեւի պաշտօնական ընդդիմախօսները ի՛նչ խօսքերով են բնորոշել դիսերտանտի փիլիսոփայական «ներդրումը» մարքսիստական մտքի զարգացման մէջ, բայց չեմ կարող չասել, որ բերածս քաղուածքը այն հազուագիւտ տեղերից է, երբ դիսերտանտը փորձում է կտրուել վատթարագոյն ....ութիւնից, եւ ինչպէս տեսնում էք, անմիջապէս էլ ընկնում է մի այնպիսի «փիլիսոփայութեան» մէջ, որից յետոյ անյարմար ես զգում այդ բառը օգտագործել անգամ:

Մի՞թէ Պլատոն ու Արիստոտել, Լայբնից ու Ապինոզա, Կանտ ու Հեգել, Մարքս ու Էնգելս, Պլեխանով ու Լենին կարդացած մեր փիլիսոփաները այս տղայամիտ մտքերը կարդալով եւ այս տղայամիտ մտքերի հեղինակի պաշտպանած դրոյթների ողջ վտանգաւորութեանը միացնելով՝ չեն յիշել հայկական ծանօթ այն առածը, որ ընդամէնը մի տող է, բայց ունի ճիշտ 103 գործող անձ՝ մի յիմար, մի քար, մի հոր եւ 100 խելօք...

Ինձ թւում է, որ հորի մէջ գցուած քարից ազատուելու միակ ճարն ու հնարը պարզապէս այդ քարը թաղելն է:

Ինձ թւում է նաեւ, որ մենք Աղաեւին կը թողնենք իր երգի եւ պարի պրոֆեսիոնալ եւ ինքնագործ խմբերի հաճելի միջավայրում եւ երկու րոպէով նրա դիսերտացիային կը նայենք մի երրորդ կողմից էլ՝ մարդկայի՞ն ասեմ, թէ՞ բարոյական:

Եկէք մի րոպէ ընդունենք, որ Աղաեւը ամէն ինչում ճիշտ է, որ փոքր ու մանր ժողովուրդներն ու ազգերը պիտի ձուլուեն ու անհետանան: Բայց չէ՞ որ աշխարհիս ամէն մի քիչ թէ չատ քաղաքակրթուած պետութիւն, բարբարոսութիւնից դուրս եկած ամէն մի ազգ, գիտութեան եւ առաջադիմութեան աղը համտեսած ամէն մի ժողովուրդ գրքերով ու լրագրերով, ռադիոյով ու հեռատեսութեամբ զբաղուած է բուսական եւ կենդանական աշխարհի պահպանման եւ պաշտպանման հարցով: Ձկների, ծառատեսակների, կաքաւների եւ փասիանների, եղջերուների եւ քարայծների բախտը օրակարգի մէջ է եւ ինչպէս ամբողջ աշխարհում, առաւել եւս՝ մեր երկրում: Եկէք Աղաեւից թաքուն հարցնենք ինքներս մեզ. մի՞թէ որեւէ ժողովուրդ, որեւէ ցեղ կամ ցեղախումբ, որքան էլ լինի փոքրաքանակ, չարժէ մի ձկան, ծառի կամ կենդանու տեսակի: Այսպիսի հարցադրումն անգամ վատթարադոյն ցինիզմ է, բայց ինչպէ՞ս խուսափել նման ցինիկ հարցադրումից, եթէ փորձում են տալ նման հարցադրման նոյնիսկ «գիտական» հիմնաւորումը՝ դա համարելով «պատմականօրէն առաջադիմական երեւոյթ»: Մեր երկրի մամուլը շատ յաճախ է իր արդար գայրոյթի խօսքն ուղղում Ամերիկայի, Աւստրալիայի եւ Աֆրիկայի համապատասխան մարմիններին՝ այդ աշխարհամասերի բնիկ ցեղերի

ու ցեղախմբերի ձուլման եւ անհետացման ուղիս: Բոլորովին վերջերս կարդացինք ամերիկեան այն զարմանալի ցեղի մասին, որ գարեր շարունակ յարմար է զգացել ապրել ոչ թէ հողի, այլ՝ ջրի վրայ: Մեր մամուլի վկայութեամբ մեռաւ այդ ցեղի վերջին պառաւը, որի մահը (եթէ մենք բարբարոս չենք եւ ունենք քաղաքակիրթ մարդու զգայնութիւն), որի մահը չատ-չատերիս ցնցեց այնքան, որքան... որքան Քենեդիի սպանութիւնը: Եւ, թերեւս, աւելի, որովհետեւ մեռնողը մի պառաւ չէր, այլ՝ մի ողջ ինքնաբուխ քաղաքակրթութիւն՝ անկրկնելի, ուրեմն եւ վիթխարի, անվերադարձ, ուրեմն եւ ահռելի...

Մենք գիտենք, որ Հնդկաստանում միլիոնաւոր մարդիկ քաղցած են եւ հազարաւոր մարդիկ սովամահ են լինում րառացիօրէն: Եւ իմացանք, որ վերջերս այնտեղ գտել են երկու հոգու, որոնք վերջին ղոյգն են անհետացած ինչ-որ ցեղի: Միլիոնաւոր սովահարներով ծանրաբեռնուած հնդկական կառավարութիւնը սաեղծել է ամէն հնարաւորութիւն, որպէսզի այդ երկու հոգիանոց ցեղը ո՛չ միայն ապրի, այլեւ՝ բազմանայ:

Այս փաստն էլ (եթէ մենք բարբարոս չենք եւ ունենք քաղաքակիրթ մարդու զգայնութիւն) նոյնիսկ փոքր-ինչ աւելի է յուզիչ, քան Գագարինի վերագարձը տիեզերական թռիչքից:

Այլ բան էլ չէր կարելի սպասել Գանդիի եւ Տագորի երկրից: Հիմա եկէք Աղաեւին հաննենք երգի ու պարի խմբերի հաճելի միջավայրից եւ տանք մի հարց, որ փիլիսոփայական չէ, թերեւս, բայց մարդկային է հաստատապէս. Լենի՞նն է Գանդիից պակաս, թէ՞ Տոլստոյը Տագորից. Եւ այսաեղ է, որ ես պիտի կրկնեմ իմ արդէն ասած խօսքը. իր կեղծ-գիտական եւ սուտ-մարքսիստական վարքագծով Աղաեւը ամէնից առաջ վարկաբեկում է ռուս ժողովրդին, որ իր բուն խառնուածքով չատ է նման հնդիկ ժողովրդին: Իսկ գալով այն ժողովրդին, որի ճախկին զաւակն է սոյն Աղաեւը, եւ այն բոլոր ժողովուրգներին, որոնք ունեն նոյն բախտն ու ճակատագիրը, ապա մեր՝ սովետական բոլոր ժողովուրդների ողջ մտաւորականութեան պատուի գործը պիտի լինի անել այնպէս, որ հակառակ աղաեւների սուտ-գիտութեան՝ կեղծդրոյթների, փոքրաքանակ վտանգուած այդ ցեղերն ու ցեղախմբերը ոչ թէ անհետանան, այլ՝ բազմանան ու յարատեւեն: Այս իմաստով էլ սոյն Աղաեւի հայրենիքը, որ Գաղստան է կոչւում, մէկն է երկրագնդի այն հազուագիւտ անկիւններից, որ վաղուց յայտարարուած կը լիներ «պետական արգելանոց», եթէ այնտեղ աճէին (Թող ներեն ինձ իմ սիրելի Գաղստանցիք), ոչ թէ մարդիկ, այլ՝ ծառեր կամ կենդանիներ:

Ես չեմ ուզում կասկածել, որ այս գիտակցութիւնը օրէցօր պիտի գառնայ մեր ողջ երկրի սեփականութիւնը՝ վերեւից մինչեւ ներքեւ, ի րաց առնելով, թերեւս, նրանց, որոնք գլխի տեղ ունեն ամէն սխեմա, սրտի տեղ՝ ֆորմուլա, իսկ խղճի տեղ... մի այնպիսի դատարկութիւն, որ հազիւ թէ լցուի նոյնիսկ «փիլիսոփայութեան դոկտորը» տիտղոսի բարձրահունչութեամբ. մի տիտղոս, որ սոյն Աղաեւը պիտի ստանայ յամենայն դէպս ո՛չ Երեւանում, եթէ Երեւանի համալսարանը չի կամենում կոտրել իր բարի անունը եւ վարկարեկել մեր բարեբարոյ ժողովրգին, Սովետական Միութեան այլ ժողովուրգների եւ առաջին հերթին՝ Գաղստանի բազմալեզու ցեղերի եւ յատկապէս լեզգինների աչքին. այն լեզգինների, որոնցից պակաս հայրենասէր չենք, իսկ եթէ ստիպուած ենք ինչ-որ հիւրի մեր տան դուռը ցոյց տալ, ապա մեզաւոր ենք ո՛չ թէ մենք, ո՛չ թէ մեր տան դուռը, այլ՝ սոյն հիւրը... (յապաւումով):

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

... XII. 1966
Երեւան

ՊԱՏՐՈՒՅՐ ՍՅՒՆԱԿ

Ընթերցողի ուշադրութեանն եմ ներկայացնում «Եղիցի լոյս» *պրպից հանուած բանաստեղծութիւնները՝* «Մանկական ճօճք»*ը, և* «Լոյսի աղբիւրը» *իրենց անվթար նախնական աևքով (*«Գրական թերթ»*, 1989, թիւ 17):*

ԵՈՒՐԻ ԽԱԶԱՏՐԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՃՕՃՔ

Կապոյտ-կապարէ մեհեակութեան մէջ աւծիր երկնքի
Թոչունները իրենց երգն են չորացուում:
Միջոցեռ լեռների պղնձէ պաղած միայնութեան մէջ
Աւելացուում եմ ես էլ աչքերիս թացութիւնը աստ:
Եւ հորիզոնը, ամառուայ տապից,
Դարձել է կարծես մանկական մի ճօճք:
Ա՛խ, երանի՛ թէ նա ինձ ճնացներ
Եւ կամ ստիպէր,
Որ ուրախութեան ինչեր նչայի:
Սակայն այդ ճօճքից
Ուժեղանում է միա՛յն ու միա՛յն գլխապտոյտս,
Որով մի հսկայ գերօ է գծուում՝
Իր մէջ առնելով
Ի՛նձ,
Թոչունների՛ն,
Երկի՛նք ու երկի՛ր,
Եւ դուրս թողնելով
Լոկ հորիզոնն ու մեհեակութիւնը,
Որպէսզի... մէկը ճօճուի՛ ու ճօճուի՛,
Միւսն էլ... բարձայ ու յաւերժայ...

Ո՛չ մի ժամանակ,
Ո՛չ մի ժամանակ
Մեզ այնպէս մեհեակ ու մեհիկ չէինք,
Ինչպէս որ հիմա,
Երբ միասին ենք բոլորս առաւել,
Քան թէ որեւէ ուրիշ ժամանակ...

ԼՈՅՍԻ ԱՂԲԻՒՐԸ

Եթէ մթութեան խտացումից է միշտ լոյսը ծնուում,
Մի՞թէ մեզ կեանքում ինչ մութ եզր ծածկել՝ հացի փոխարէն,
Եւ մի՞թէ ինչ եզր բնել մեր հունը մղձաւանջային՝
Մեզ, վերմակի տեղ, ծածկելով մթան մագեղէն հութով…
Մութը՝ անասելի՝ կարկատանել է մեր աչքե՛րն անգամ,

Իր գոյնն է խառնել եւ մեր արեա՛նը.
Կարմի՛ր արեանը,
Որ չորանալիս սեւանում է միշտ,
Եւ չոր արեամբ էլ սեւն է շատանում,
Այսինքն՝ մութը…

Անգամ ամէն ծառ,
Ամէն թուփ ու խոտ
Կարծես ցօնւում է, որ աւլի մութը:
Բայց ցօնմամբ իրենց ո՛չ թէ աւելում,
Այլ յաւելում են նրանի նոյն մութը՝
Իրենց ստուերո՛վ…

Կոյր ծնուածները բարի են անչափ:
Կարող է կարծել միայն մարդը չար,
Թէ կոյրերն անվերջ աղօթք են անում,
Որ ընդարձակուի կայսրութիւնն իրենց,
Ու թագաղբրուի մո՛ւրը,
Այդ մո՛ւթը՝
Իրականների մէջ իրականը,
Տիրակալների մեծ տիրակալը…

Եւ իսկապէս էլ՝ մեր թիկունքն է մութ.
Անցեալը գիտենք գրերով՝ միայն:
Գուցէ առաւել մեր ճակատն է մութ.
Գրերն են ճառում գալիքի՛ց նաեւ:

Մո՛ւթը առջեւից — մո՛ւթըետեւից,
Մենք՝ երկու մթան նեղլիկ արանքում.
Էլ ի՞նչ է մնում, որ էլ ի՞նչ անենք:
Պիտի սեղմրուենք աջ ու ձախ թեւից,
Սեղմրու՛նք անվերջ–անվերջ խտանա՛նք.
Բայց… չքթանանք այնքան, որ կարծենք
Որ եթէ մթան խտացումից է միշտ լոյսը ծնւում,
Ապա կր ծնուի ինքնաբերաբար՝
Ինչպէս Յիսուսը Միածին Կոյսից,
Մինչեւ իսկ առանց… «Եղիցի լոյս»ի…

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ՝ ՀԱՄԱՌՕՏ ՆԱԽԱԲԱՆՈՎ

Լոյս էր տեսել Պ. Սեւակի *«Անլռելի զանգակատուն»* գիրքը, որը պիտի յաւերժ հնչեցնէր հանճարեղ Կոմիտասի ու իր անմահ անունները եւ պատահական չէր, որ ամէնուր այն ճնճարկման էր դրւում: Գրքի ճնճարկում կազմակերպուեց նաեւ Իջեւանում, հաղաբային մշակոյթի տանը, որին մասնակցում էր հեղինակը: Դա 1962 թ. Դեկտեմբերի 22ին էր:

Տարիների հեռուից մեծ բանաստեղծի հետ կապուած սոյն դրուագը վերյիշելու առիթը սոյն ամսուայ 27ին *«Լենինեան ուղիով»* (այժմ *«Իջեւան»*) շրջանային թերթի N°104ում տպագրուած Պ. Սեւակի *«Դու ո՞րն ես ընտրում»* բանաստեղծութիւնն է, որին հեղինակի կենդանութեան օրօք եւ նրա մահից յետոյ լոյս տեսած եւ ոչ մի գրքում չէր հանդիպի: Նշեմ, որ բանաստեղծութեան տպագրութիւնը մեծ աղմուկի առիթ տուեց «վերեւներում», անգամ փորձեցին հաւաքել թերթի համարը: Այս բանաստեղծութիւնը հետագայում գուցէ Պ. Սեւակը մոռացել է, կամ էլ նրա հատորները կազմող հրատարակիչները չեն ունեցել իրենց ձեռքի տակ: Բայց որ այն այսօր էլ չի կորցրել իր թարմութիւնը, անժխտելի է:

*«Գրական թերթ»*ի ընթերցողներին եմ ներկայացնում յիշեալ բանաստեղծութիւնը, յոյս ունենալով, որ այն տեղ կը գտնի նաեւ Պ. Սեւակի երկերի այսուհետեւ հրատարակուելիք հատորներից մէկում (*«Գրական թերթ»*, 1990, թիւ 48):

ԹԵԼՄԱՆ ՄԱՅԻԼԵԱՆ

ԻՋԵՒԱՆ

Պ. ՍԵՒԱԿ

ԴՈՒ Ո՞ՐՆ ԵՍ ԸՆՏՐՈՒՄ

Վախ կայ՝ կեանք արժի
Վախ կայ՝ արժի մահ...

Նա վախենում է, որ եթէ շարժուի
որեւէ պետի կասկածը հիմա,
ապրի կարող է արդէն չփրկուել,
չփրկուե՞լն հնչէ — սաւ տեղի՛ց զրկուել:

Դու վախենում ես, որ վախենալով
ճամբայ ես ասլիս սաին ու կեղաին
ու թողնում, որ հենց այսպէ՛ս գնալով
գորշը սեւանայ, ներմակին խեղդի,
ձու գողացողը ձի էլ գողանայ,
ևո՛ր դողացողը նորի՛ց լողանայ՝
ո՛չ թէ սեփական բրտինքով արդար,
այլ ճանապարհով եւ այն պաղ ճրագով,
որ ձեռ է բերում ճառերով ճարտար:

Նա վախենում է, շատ է վախենում,
ո՛չ թէ բառակերտ դղեակ շինելուց,
ո՛չ թէ բծնանքի ցանցեր շինելուց,
այլ…մարդ լինելուց՝
ամենադժուա՛ր ու դիւրի՛ն բանից:
Իսկ վախենում ես դու հենց դրանի՛ց՝
պակասից մարդո՛ւ եւ մարդկայնութեա՛ն,
ո՛չ խմորումից, ո՛չ էլ մերանից,
այլ խուլ խնոցուց այն մսայնութեան,
թէ «ֆո թանին դու
մի ասա թթու»:
(Թթո՞ւ: Ինչպէ՞ս թէ: Թթու ասնու թա՞ն):
Դու վախենում ես, ա՛յ, հենց սրանի՛ց·
Ոչ թէ սո՛ւր աչքից, այլ սո՛ւր բերանից,
շիւղի եաեւում պահուած գերանից:
Դու թշնամին չես բարձր — լայնութեան,
Չես մերժում հինը, թէ սուրբ է ու թանկ,
բայց եւ խորութեա՛ն բարեկամն ես դու:
Դու թշնամին չես սպիասկութեան,
որ մաքրութիւն է խորհրդանշում,
բայց բարեկամն ես եւ շիտակութեա՛ն,
որ սեւի վրայ կաւին չի fսում:
Իսկ նա սովոր է լոկ այն մի գոյնին,
որ ունենում է յաջողութիւնը,
գո՛յն, որ մոգական զօրութիւն ունի:
Ով կարողացաւ այդ գոյնով ներկուել՝
մեղքի հեա կը գայ եւ թողութիւնը·–
չի բացուի երբեք իր գողութիւնը·
ցա՛ծ դրեց մի բան՝ գո՛յգ կը վերցնի,
կը փոխի՛ տեղը, բայց չի՛ կորցնի·
եւ կ'ապացուցի, որ չաղութիւնը
չաղութի՛ւն էլ չէ — ջրգողութի՛ւն է,
ու դեռ բուժման էլ կը գնայ ձրի,
որ ամէն կասկած մէջաեղից ցրի…
Նա վախենում է սխալ գործելուց,

երբ իր կեանքը ողջ սխալ է որ կայ,
հանգած կրակը վառել փորձելուց,
երբ իր կեանքը ողջ ծխալ է որ կայ:
Դու վախենում ես, որ սխալը fո
երկար տեւելով՝ անվերջ խորանայ,
եւ... fառակուսին դառնայ խորանարդ:
Դու վախենում ես, որ սխալը fո
երկար տեւելով՝ անվերջ զօրանայ
ու հրդեհ դառնայ ինչ-որ մի թաղում
Իսկ նա հրշէջի իր դերն է խաղում,
ինչպէս կինոյում,— հե՛րն էր անիծած,
շատ վե՞ջն է նրա, որ կեանքն է կաղում,
եթէ նա կեանքի վզին է նստած:

Դու վախենում ես, որ նրանք ու նա
գնալով անվերջ աճեն — շատանան,
թէ ցանկապատ են՝ պատանան:
Իսկ նրանք ու նա շատ են վախենում,
որ fո պէսերը է՛լ չվախենան,
է՛լ չվախենան սուտ զրպարտուելուց,
է՛լ չվախենան մաշուել խարտուելուց,
ու թէ խարտուեն էլ՝ խարտուելով սրուեն
եւ նշտարի պէս խոցի մէջ խրուեն:
Ու վախենում ենք այսպէս երկուստեք,
մենք՝ մթութիւնից, նրանք՝ ցերեկից,
Նրանք՝ լաւ վաղից, մենք՝ վատ երէկից...
վախ կայ՝ կեանք արժի,
վախ կայ՝ արժի մահ:
Դու ո՛րն ես ընտրում
ընդմի՛շտ եւ հիմա՛...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ԱՒԱՋՆԵՐՈՒՄ ԻՊՔՍՆԵՐԻՆ «ԱՅՐՈՒՄ ԷԻՆ ԽԱՐՈՅԻՒ ՄԷՋ» ԵՒՄ «ՔԱՌԱՏՈՒՄ...ՍՊԱՆՈՒՄ՝ ԴԱՆԴԱՂ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ ՅԻՑ ԽՐԵԼՈՎ», «ԱԿԱՆՋՆ ԷԻՆ ՀԱՏՈՒՄ ՀԻՄՔԻՑ, ԿՏՐՈՒՄ ՁԵՌՔԸ, ԿՏՅՈՒՄ ԱՋՔԸ, ՀԱՏՈՒՄ ԼԵԶՈՒՆ ԿԱՄ ՀԱՄԱՐՈՒՄ ՁԱՐ ԿԱԽԱՐԴ, ՍՈՒՏ ՐԱՐԳԱՐԷ»: XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻ «ԻՐՊԷՍՆԵՐԸ» ԿԱՐՈՂԱՑԱՆ ԵՒ ԻՐԵՆՑ «ՊԱՏԻՒԸ ՃԵՐՄԱԿ ՊԱՀԵԼ» ԵՒ «ԽԻՂՃԸ ՄԱՓՈՒԻՐ... ԱՂԻ ՆՄԱՆ», ՆՐԱՆՔ «ՆԱԽԸՆՏՐԵՑԻՆ ՁՐԿՈՒԵԼ ԳԼԽԻՑ, ՔԱՆ ԽՈՆԱՐՀԵԼ ԳԼՈՒԽՆ» ԻՐԵՆՑ ՆՐԱՆՑ ԱՌԱՋ, ՈՎՔԵՐ ՓՈՐՁ ԷԻՆ ԱՆՈՒՄ «ՈՒՂԵՂ ՀԱՏԵԼ՝ ԴՐԱՄԻ ՊԷՍ ԵՒ ՄԻՏՔ ԴԱՋԵԼ՝ ԼԱԹԻ ՆՄԱՆ»:

«ԵՂԻՑԻ ԼՈՅՍ»Ը Պարոյր Սեւակի համար կեանքի արժեքաւոր 1969ին տպագրուած ժողովածուն ընթերցողին հասաւ 1971ին, քանաստեղծի եղերական մահից յետոյ, կրճատուած եւ փոփոխուած:

Ստորեւ ներկայացնում ենք «ԵՂԻՑԻ ԼՈՅՍ» ժողովածուի «ԾԱՂՐԱԾՈՒՆ» եւ «ԴԻՄԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ՝ ՅՕԳՈՒՏ ԱՆԴԻՄԱԿՈՒԹԵԱՆ» քանաստեղծութիւնների մկրատուած հատուածները՝ շեղատառ:

Գ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԾԱՂՐԱԾՈՒՆ

... Ախտը, բարեկա՛մ,
Ախար ինձ համար ո՛չ մի բան չարժի
Փայտին տալ, ասենք, ուղեղի ծալքեր,
Ուղեղից... հուի համեղ կուտ սարքել,
Կուտից՝ կերակուր հասարակական...

Սակայն ես այսօր
Չեմ գբաղուելու ևման բաներով:
Ես այսօր պիտի ձեզ հաւատացնեմ,
Չե՛զ հաւատացնեմ — ի՛նձ վհատեցնեմ,
Որ հենց վաղուանից,
Պաուով ու յարգով,
Բանտարկեալները գազանանոցի
(Փղից սկսած ու հասած օձին),
Առա՛նց խտրութեան ու տարբերութեան,
Բոլո՛րը պիտի ստանան կարգով
Համապատասխան շքանշաններ
Եւ... ինչի՞ համար·
Լոկ համբերութե՛ան...

Շքանշաններ կը ստանան, այսպէ՛ս,
Բոլո՛րը,

Գուցէ գեբրերից բացի՝
Այն հին էշերից, որ միևչեւ այսօր
Չեն դարձել կարգին — լաւ բաղաբացի.
Երբեմըն, դարձեա՛լ, տալիս են բացի՝
Իրենց վանդակի ճաղերին թէպէտ,
Բայց մէկ չէ՞ միթէ, բացի է բացին...

Յոյս ունեմ, որ դուք
Ինձ հաւատացիք...

ԴԻՄԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ — ՅՕԳՈՒՏ ԱՆԴԻՄԱԿՈՒԹԵԱՆ —


Ե՛ս,
Որ Ասածուն Աստուածդատուր եմ կոչում,
Ե՛ս՝ խեռօրէն խռովարար–խռովիչ,
Աստուածամերժ–աստուածարկու մի չաստուած,
Աստում եմ ձեզ, երկրորդելով երրորդում,
Որ երկնքում իրօ՛ք չկան աստուածներ:
Նրանք վաղուց երկրի վրայ են բազմած:

Բայց ո՛չ ուղտի սապատի պէս, այլ ուղտի
Անտանելի բեռի նման, որ մի օր
Ցած կը նետի համբերատար ո՛ւղտն անգամ
Խռովութեան սերմը, իբրեւ մանանեխ,
Տարածւում է արտաշնչմա՛մբ մեր բերնի,
Տարածւում է երկրից երկիր, վարակում
Մինչեւ անգամ աստուածներին հողեղէն,
Որ մեր հոգում ոտնագնդակ են խաղում,
Որ խրուել են մեր կոկորդում՝ իբրեւ խորխ,
Եւ մեր լեզուից կախ են տուել կեռերով
Անվերջ նեխո՛ղ, բայց չփտող մի դիակ...

Խռովութեան սերմը, իբրեւ մանանեխ,
Իբրեւ որոմ մի փրկարար, իբրեւ ախտ,
Ահաւասիկ եւ նրանց է վարակում:

Եւ ահա ե՛ս՝ մանանեխի մի պազուկց,
Մի բուռ որոմ, ախտի մանրէ մի սրուակ,
Ուզում եմ ձեզ ուրախացնել՝ ասելով.
— Երբ աստուածներն են խռովում իրարից՝
Մարդիկ իրար հասկանալ են սկսում...

Պ. ՍԵՒԱԿ



Պարոյր Սեւակ

★
★ ★

...Ցիշենք նաեւ հետեւեալը: Պ. Սեւակը իր կեանքի վերջին երկու տարիներին աշխատում էր «Սայաթ–Նովան եւ միջնադարեան տաղերգուները» ուսումնասիրութեան վրայ: Շարունակելով խորանալ երգչի եռալեզու ստեղծագործութեան մէջ, նա փորձել է յայտնաբերել նոր, չուսումնասիրուած շերտեր, բացայայտել երգչի ստեղծագործութեան առընչակցութիւնը ինչպէս հայրենի, այնպէս էլ ընդհանուր արեւելեան քնարերգութեան աւանդներին: Սակայն, դժբախտաբար, նա չհասցրեց լիովին ամբողջացնել իր նոր հետազօտութիւնը եւ թողեց մի անաւարտ ձեռագիր: Այդ ձեռագիրը, որ կազմում է աւելի քան 200 էջ եւ որ մինչեւ օրս անարդարացիօրէն մնում է անտիպ, անհրաժեշտ է յանձնել ընթերցողին եւ բանասիրութեանը՝ իւ շահ սայաթնովագիտութեան եւ իւ շահ Պարոյր Սեւակի («Գրական թերթ», 1987, թիւ 44):

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ

«ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ»Ի ՄԱՍԻՆ

Պարոյր Սեւակը 1958 թ., ատրճիտով իր «Անլուեի զանգակատուն» պոեմը, յանձնում է հրատարակչութեանը, յանկանալով տեսնել այն հրատարակուած յաջորդ տարին՝ մեծ Կոմիտասի 90ամեակի առնակատարութեան օրերին: Սակայն հրատարակիչները չկարողացան կատարել հեղինակի խնդրանքը: Պարզաւանք. ոմանք նախանձից, մեւանները տգիտութենից, վորձում էին խափանել գործի հրատարակութիւնը: Այդ ժամանակ գործին միջամտում է Սեւակի աւագ զրչեղբայրը՝ Համօ Սահեանը: Նա նախ՝ գրական կարծիք է գրում պոեմի մասին, երկրորդ՝ օգտագործելով իր անձնական մօտիկութիւնը Հկկ կենտկոմի բաժնի վարիչ Գէորգ Հայրեանի հետ, գործում է նրա օգնութեանը: Վերջինս, կարդալով պոեմը, հեղինակի դիմումի վրայ մակագրում է Ա... Տագանդաւոր գործ է, որը պէտք է հրատարակել Կոմիտասի ծննդեան 90ամեակի կապակցութեամբ: Խնդրում եմ խմբագրելու համար այն յանձնել Հ. Սահեանին, որին ես հաղորդել եմ իմ դիտողութիւնները: Լաւ բանաստեղծին պիտի խմբագրի լաւ բանաստեղծը» («Գրքերի աշխարհ», 1988, թիւ 3):

★
★ ★

«Արդելքների փիլիսոփայութեան» ուշադրութեան կենարոնում առանձնապէս անձանի գրողներն էին, որոնց ստեղծագործութեան տղեցութիւնը ժողովրդի վրայ մեծ է ու խոր: «Անլուեի զանգակատուն»ը պատրաստուում էին տպագրել էական կրճատումներով, եթէ չլինէր Մոսկուայից բանաստեղծի յղած նամակ–բողոքը եւ սկզբունքային որոշումը. «...Ուզում եմ օգտուել իմ մխակ իրաւունքից. այն ձեւով, ինչպէս մտադիր է Պետհրատը, ես պոեմ չեմ տպելու, ուստի եւ խնդրում եմ ապարան չուշարկել»: Դիւրին եւ հարթ չեղաւ նաեւ Ն. Դաչտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքի հրատարակչական ծնունդը: «Փիլիսոփայութիւնը» ոչ միայն գրում էր ապրում, այլեւ ներսում՝ ստեղծագործողի աշխատասենեակում, գրասեղանի կամ նկարակալի վրայ, նրա զգացմունքների ու մտածողութեան մէջ վերջապէս, մի քանիչ էլ ինքն էր դարձել՝ «կարելի՞ է, թէ չի կարելի»...(«Գրական թերթ», 1989, թիւ 14):

ՆՈՐԱՑՐ ԱԴԱԼԵԱՆ



«Մարդը ափի մէջ»


ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՆԿԱՐԻՉԸ

Ապրելով նոյն ժամանակի մէջ, նրանք արուեստում միմեանց չհանդիպեցին: Բառի եւ գծի, խօսքի եւ գոյնի նրանց ըղձալի միասնութիւնը այդպէս էլ չկայացաւ:

Մի անգամ է միայն դրա առիթը եղել եւ այն էլ Գարոյր Սեւակի բանաստեղծութեանը եւ Մինասի նկարչութեանը սիրահարուած Վիգէն Չեչումեանի նախաձեռնութեամբ: «1962ին ձեւաւորեցի Գարոյր Սեւակի «Մարդը ափի մէջ» ժողովածուն եւ արժանացայ կարական մերժման: Իսկ երբ գիրքը լոյս տեսաւ, շատ ցաւեցի, որովհետեւ ձեւաւորումը վատն էր» — ափսոսանքով գրում է նկարիչը 1973-ին: Ուրեմն, նկարչի ձեւաւորումները կային (պատմում էր, որ նոյնիսկ առանձին ստեղծագործութիւնների էջերը իւրայատուկ գոյներով էր պատկերացնում), Վիգէն Չեչումեանի գեղծնական ու խանդավառ ոգեւորութիւնը կար, բայց ինչ էր Վիգէն Չեչումեանի միամիտ ոգեւորութիւնը բանաստեղծի «ընկեր-բարեկամ» նկարիչների եւ անմակդիր ժամանակի դէմ: Ձեւաւորումները մերժուեցին, դրանց մեծ մասը անդարձ կորաւ, միւս մասը՝ այրուեց հրդեհի ժամանակ:

Ձուտ պատահականութեամբ փրկուած մի քանի էսքիզներից երկուսը ներկայացնում եմ արուեստասէր ընթերցողին («Գրական թերթ», 1988, թիւ 39 — հատուած):

ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ



Լ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՈՂ ԱՐԳԻԼՈՒԱԾ ԷՋԵՐ

1934ին դեռեւս հնարաւոր է համարուել, որ Հայպետհրատը պայմանագիր կնքի Յովհաննէս Քաջազնունու հետ, պատուիրելով յուշեր գրել Թումանեանի մասին: Գրել է: Ճիշտ է, այդ թուականին յաջորդած քաղաքական մոայլ ամպերի աւելի ու աւելի խտացման պայմաններում Քաջազնունու յուշագրութիւնը չէր կարող տպագրուել (նոյնիսկ 1969ին հնարաւոր չհամարուեց, որ դա տեղ գտնի «Թումանեանը ժամանակակիցների յուշերում» մեծադիր հատորում), բայց մենք այդ պայմանագրին ենք պարտական այս հետաքրքիր յուշագրութեան ստեղծման համար: «Անդարձ ճամբորդի» հեղինակը երեք տարի աւց (1937ի Յուլիսի 28ին) կալանաւորուեց եւ դարձաւ ժամանակի անհամար անդարձ ճամբորդներից մէկը (մահուան թուականը նշւում է 1938ը, ճիշտ է, ճիշտ չէ՝ ո՞վ իմանայ):

Յովհաննէս Քաջազնունին ծնուել է 1868ին, Ախալքալաքում, ուրեմն նրա բնտանիքը սերում էր կարինից (Էրզրում): Քաջազնունի ազգանունը նրա պապի իգիքխաճեան ազգանուան պապի իսկ թարգմանութիւնն է (բնդօրինակման արժանի վերափոխում շատ-շատերի, թերեւս նաեւ ոտղերիս գրողի հոմար) մի բան, որ արուել է այն ժամանակ, երբ պապը ձեռնադրուել է քահանայ (ձեռնադրուողին թոյլ էր արւում փոխել նաեւ ազգանունը):

1877-86 թթ. Քաջազնունին ուսանել է Թիֆլիսի ռէալական դպրոցում: Այնուհետեւ՝ Պետերբուրգի բաղաքացիական ինժեներների ինստիտուտում, որ 1893ին աւարտել է գերազանցութեան դիպլոմով: Ուսանողական տարիներին յարել է Հ. Յ. Դաշնակցութեան կուսակցութեանը, գառնալով նրա հիմնադիր անդամներից մէկը:

Նորաւարտ ինժեները իր մասնագիտութեամբ աշխատել է Անդրկովկասի տարբեր բաղաքներում (Քութու, Բաքում, Թիֆլիս), միաժամանակ զբաղուելով կուսակցական գործունէութեամբ:

1911ին փախուստ է աուել արտասահման՝ խոյս տալով Պետերբուրգում «Դաշնակցութեան գործ»ով դատուելուց: (Այդպէս վարուեց նաեւ Աւետիք Իսահակեանը մի բանի ուրիշների հետ միասին, բայց այդպէս չվարուեց Թումանեանը, որ դատուեց 1912ին շատ-շատերի հետ միասին եւ անպարտ ճանաչուեց):

1914ին Քաջազնունին վերադարձել է Թիֆլիս: Եղել է Ազգային խորհրդի եւ Անդրկովկասեան Սէյմի անդամ: Նա է 1918ի Մայիսին, Սէյմի ինքնալուծարքից (դա, ինչպէս Ռուսաստանից անջատուելը, Թուրքիայի թելադրանքն էր) եւ վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան յայտարարութիւններից յետոյ, յայտարարել Հայաստանի անկախութիւնը: (Ստեփան Զօրեանը, պատմել է ինձ, թէ դա ինչպէս է եղել: Երիտասարդ արձակագիրը, «*Մշակ*»ի թղթակիցը լինելու հանգամանքով, ներկայ է գտնուել այդ նիստին):

1918–19 թուերին Քաջազնունին եղել է Հայաստանի Հանրապետութեան առաջին խարտուղարը, վարելով դեմոկրատական լայն հիմունքների վրայ յենուած քաղաքականութիւն:


1921–24 թուերին ապրել է Բուխարեստում իբրեւ վտարանդի: 1925ին, իմանալով հանդերձ, թէ ինչ կարող է սպասել իրեն խորհրդային Հայաստանում, վերադարձել է Երեւան (*«Եթէ կարողանամ անձնագիր ստանալ, անպատճառ կ'երթամ Հայաստան: Թող անեն ինչ որ անելու են»*):

Մինչեւ բանտարկուելն իր մասնագիտութեամբ պաշտօնավարել է Երեւանի տարբեր հիմնարկութիւններում, եղել է համալսարանի եւ շինարարական ինստիտուտի դասախօս (աւանդել է «Շինարարական արուեստ» եւ «Ճարտարապետական պլանաւորում» առարկաները): Նրա նախագծով կառուցուած լաւագոյն շէնքը գտնւում է Լենինականում եւ հիմա էլ կանգուն է ու տպաւորիչ: Դա նաւի նմանուող այն բնակելի շէնքն է, որ սուր անկիւնով, ասես նա վախելով, միտում է դէպի հրապարակը: 1930ին ստացել է պրոֆեսորի կոչում, եղել է *«Շինարարական կառոյցների ուսումնասիրման»*ի (1928) հեղինակներից մէկը:

Քաջազնունու, իբրեւ բարձր նկարագրի եւ իմացութեան տէր մտաւորականի վկայութիւններն են *«Շեքսպիրի հետ մեն-մենակ»* յօդուածաշարը (Новое о Шекспире», լրագիր, Թիֆլիս, 1896), հայ շեքսպիրագիտութեան մի ընտիր էջ եւ *«Հարիւր տարը օր Եւրոպայում»* ուղեգրութիւնը (ուսերէն, Բաքու, 1911): Քաղաքական մտածողութեան վկայութիւններ՝ *«Գաղնակցութիւնն այլեւս անելիք չունի»* (Բուխարեստ, 1923 եւ (Բաց նամակ *Ժին-Թուրքիա՞, թէ Ռուսիա» (Բուխարեստ, 1924)* գրքերը: Վերջինս, որ Քաջազնունու ռուսական կողմնորոշման տրամաբանական կուռ հիմնաւորումն է, 1965ին վերահրատարակուել է Բէյրութում՝ հիացումների սէր չունեցող Անդրանիկ Ծառուկեանի հիացական առաջաբանով:

Նոյն 1965ին Բէյրութում լոյս է տեսել *«Ցնծամուխ»* ժողովածուն, ուր տեղ են գտել Քաջազնունու յուշերը, պատմուածքները, նամակները, յօդուածները, որոնց մէջ ամէնից ուշագրաւը *«Ագդ եւ հայրենիք»* յօդուածաշարն է՝ արտատպուած *«Հայրենիք»* ամսագրից (*«Գրական թերթ»*, 1989, թիւ 43):

ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

✱

Ծնած է 1868ին, Ախալցխա (Վրաստան)։ Ճարտարապետ, բնդհանրապէս Բաքու բնակած։ Դաշնակցական՝ կանուխէն։ 1917ին՝ անդամ Հայոց Ազգային Խորհուրդին։ Մինչեւ 1918 Մայիս՝ դաշնակցական երեսփոխան Անդրկովկասեան Սէյմի։ Մաս կը կազմէ Թուրքերուն հետ Տրապիզոնի եւ Պաթումի մէջ բանակցող պատուիրակութեանց։ Անդրկովկասեան Համադաշնակցութեան Զխենկելիի կառավարութեան մէջ՝ ընկերային գործերու նախարար։ Հայաստանի անկախութեան չրջանի առաջին վարչապետը՝ 1918 Յուլիսէն մինչեւ 1919 Օգոստոս։ Հայաստանի խորհրդայնացումէն ետք բոլշեւիկնեբուն կողմէ կը ձերբակալուի. կ'ազատուի՝ չնորհիւ Փեթրուարեան ապստամբութեան։

1923ին՝ Պուքրէշի մէջ, կը հրատարակէ հոգեփոխութիւն արտայայտող գրքոյկ մը՝ «Դաշնակցութիւնն անելիք չունի այլեւս»։

Կը ներգաղթէ Խորհրդային Հայաստան, ուր կ'աշխատի իրրեւ ճարտարապետ։ Կը մահանայ աքսորի մէջ՝ 1938ին, զոհ դառնալով ստալինեան բռնակալութեան։

Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

ԱՆԴԱՐՁ ՃԱՄԲՈՐԴԸ

Միւսր էատեղ ոչինչ չասաւ,
Ու գնում էր գլխիկոր…

«Անպարծ ճամբորդներ»

Սոսրեւ պրի եմ տանում մի քանի յուշեր, որոնք բնորոշում են Թումանեանին այնպէս, ինչպէս ես եմ ճանաչել ու հասկացել նրան։

●

Իրօք, «սրեւլի» էր Թումանեանը՝ բառիս ամենարարձր իմաստով։ Նա իրեն սիրել էր աւելս իրրեւ մի պիքիչ երեւոյթ, իրրեւ մի պլենցիկ հոգի։ Անկարելի բան էր մի քիչ ճանաչել նրան ու չսիրել։

Իմ վերաբերմամբ կարող եմ ասել, թէ դեռ էն պլխից չաս բարձր եմ պասել նրա ապտանդը, հիացել եմ (այսօր էլ մնում եմ հիացած) նրա երկերով,— գիտեմ, թէ ինչ պոհարներ է աուել նա, ինչ մեծարժէք մուծումներ է արել մեր ազգային կրականութեան մէջ եւ այդ պիտակցութիւնը բնականօրէն ծնունդ է աուել երաժշտապիտութեան պատմութեան՝ բանաստեղծի հանդէպ։ Բայց միաժամանակ ու յաւտապատասխան սիրել եմ նրա մէջ մարդը։ Մարդն ու բանաստեղծը նա չեմ կարողացել բաժանել միմեանցից։



Ծուչերիցս պրի եմ առել այն, ինչ որ քնորոշ եմ համարել եւ աշխատել եմ ճշմարտախօս պատմիչ լինել: Շատ էլ հեչտ բան չէ դա, երբ խօսում ես սիրածդ մարդու մասին: Ցամեննայնդէպս, կարող եմ հաւատացնել ընթերցողին, որ գոնէ գիտակցօրէն չեմ խեղաթիւրել իրականութիւնը՝ գրել եմ այն եւ այնպէս, ինչ եւ ինչպէս մնացել է իմ յիշողութեան ծալքերում: Թումանեանի յիշատակը շատ թանկ է ինձ համար եւ, ի հարկէ, կը ցանկանայի, որ նոյնքան թանկ դառնար նաեւ այս էջերը կարդացողի համար: Բայց անարգած կը լինէի նոյն այդ յիշատակը, ապա եւ արջի ծառայութիւն մատուցած, եթէ փորձ անէի «գեղեցկացնել» նրա գէմքը՝ մի բան ստուերի տակ թաքցնել, մի ուրիշ բան ինձանից աւելացնել կամ եղածը ծաղկեցնել... Թումանեանը գեղեցիկ էր ու սիրելի հենց այնպէս, ինչպէս էր՝ իր թերութիւններով ու թուլութիւններով...

Ց. Ք.

Մարդը պնաց, ու նոր սերնդին մնացել է բանաստեղծը միայն: Բայց չեմ կասկածում, որ այդ իսկ նոր սերունդը հաճոյքով կը սեպհականայ, որ Թումանեանը՝ առաղանդաւոր բանաստեղծ լինելով հանդերձ, չատ սիրելի, չատ կաւ մարդ էր անձամբ:

Գրում եմ այս տողերը անվերապահօրէն եւ իրաւունք եմ համարում դրելու, քանի որ երեւանեան բարեկամութեան ընթացքում ամէն հնարաւորութիւն ունեցել եմ յաւ ճանաչելու Օհաննէսին եւ երբեք աչք չեմ փակել նրա թուլութիւնների վրայ: Նոյնիսկ այդ թուլութիւններն էլ, կարծես, սազ էին գալիս իրեն, ամբողջացնում էին դէմքը, ինքնայատուկ դունաւորում ու հրապոյր էին տալիս, եւ եթէ չլինէին կամ վերանային՝ կարծես մի բան կը պակասէր Օհաննէսից:

●

Մի թուլութիւն ունէր, որի զաւեշտականութիւնը հասկանում էր (մա՛նաւանդ հասուն վիճակում), ուսալ եւ զգուշանում էր բացայայտօրէն հրապարակ հանելուց, բայց եւ այնպէս չէր կարող բոլորովին թաքցնել. սիրում էր հաւատալ (կարծես իսկապէս հաւատում էր) եւ հեռաւոր ակնարկներով հասկացնել մալ նաեւ ուրիշներին, որ ինքը բարձր պաշտօնական ծագում ունի. գիւղացի չէ, այլ իշխան է, Մամիկոնեաններից առհմից...

Ցիշում եմ, մեր բարեկամութեան առաջին չրջանում, պարզնանային մի պայծառ օր, պնացել էինք երկուսով Թիֆլիսի բուսաբանական այգին ու այնտեղից անցել Դարաբաղու կիրճը: Հետներս երկու չիշ լաւ գինի ունէինք, մի քիչ հաց, պանիր, մի կտոր «ճիպա» (աղ պրած ձուկ-խմբ.)...: Վարարած վտակի ափին, մի ժայռի տակ նստած, անցել էինք երկրորդ չչին, երբ Օհաննէսը բաց արաւ խօսքը իր առհմարանութեան մասին: Իբր թէ դէպ եւ ի միջի այլոց, կցկտուր խօսքերով հաղորդեց ինձ, թէ պատմական չղեռեմ որ չրջանում (կարծեմ արաբների առաջին արշաւանքի ժամանակ) Մամիկոնեանների առն հասուածներից մէկը դուրս է եկել Տարօնից, ապաստան գտնել Լոռուայ

սարևրում, և այդ ևկուրներից չգիտեմ որը Հաստատել է իր բնակութիւնը Գանդում, ուր մինչև այսօր էլ մնում են ինչ-որ յուչարձաններ, և որ ներկայ Թումանեանները այդ Մամիկոնեանների սերունդն են...

Երբ ամրոցի աոպրակը քափ առաց, և խօսքը ինձ անցաւ, ասի խիստ լրջօրէն.

— Ես էլ պակաս ասան դաւակ չեմ. մի ուրիչ անգամ կը պատմեմ քեզ Իգիքեանեան – Քելլեջի – Տէր Օհաննէսեան – Քաջնունի – Միրզա Խոխորոզենց ազնուագոյն տոհմի մասին, որից սերել եմ ինքս: Իսկ այսօրուայ քո պատմութիւնը յիշեցրեց ինձ մի ուրիչ մարդ, որը նոյնպէս շատ բարձր ծագում է ունեցել՝ Գևո-Ժողէֆ Գրուզոնը: Մի հասարակութեան մէջ, երբ խօսք է բացուել ազնիւ ու ոչ-ազնիւ, բարձր ու սարսին ծագումների մասին. Գրուզոնը, դիմելով ներկայ եղող կոմսերին ու մարկիզներին, ասել է.

— Իսկ ես անխառն ծնունդ եմ քաոսաւն սերունդ ազնիւ Հոզապարծ-դիւցազիների, որոնք դարեր շարունակ իրենց հուժկու ձեռներով մշակել են մայր հողը և կերակրել ձեր պապերին... Ջեղանից ո՞վ է, ո՞ր Մոնմորանսին կամ ո՞ր Ռոհանը կարող է պարծենալ այդ տիսի բաձր ծագումով:

Օհաննէսը չփոթուեց, մի վայրկեան լուռ նայեց երեսիս ու յանկարծ քահ-քահ ծիծաղեց.

— Լաւ բոնեցիր, ոդի դու Միրզա-Խոխորոզ,— ասաւ ձեռը ծնկին խփելով,— բայց ես հօ չե՞մ ասում... Դե՛հ, հին գրոյցներ են, աեղն եկաւ՝ յիշեցի... Քէ չէ՝ ի՞նչ բան է ազնուականութիւնը, առհդ... Տուաւց-աուաւց խօսքեր են: Ապա, էն մարդու — ինչպէ՞ս էր անուն, Գրուզո՞ա — հա, էդ Գրուզոնի կենացը... Մեանի՞ է, ասում ես... Լաւ, Թող լինի լոյս յիշատակին:

Յիշում եմ և ուրիչ դէպքեր, երբ Թումանեանը, երբ Հարեւանցիօրէն ու անփութօրէն, բայց հագիւ քողարկած պահանջով, ակնարկներ է արել իր ազնուական ծագման մասին:

Զգիտեմ, կա՞ր արդեօք որեւէ պատմական ճշմարտութիւն այդ «հին գրոյցների» մէջ. Դրապ կր գամ, որ չգիտէր նաեւ ինքը՝ Թումանեանը: Բայց պիտեմ հաստատապէս, որ «ազնիւ» լինելու համար «Ամենայն Հայոց բանաստեղծ» Օհաննէս Թումանեանը ոչ մի կարիք չուներ Մամիկոնեաններից կամ նոյնիսկ Նարուդոդոնոսոր արքայից սկսելու: Նա ինքը ազնիւ էր, ասից պրուի — ազնիւ էր այն իսկական, լիակշիռ ազնուութիւնով, որը սալիս է մարդուն նուրբ ու վեհ հոգին, բարձր միաքը եւ յայն սիրտ:

●

Մի օր, Թիֆլիսում, Օհաննէսը գալիս է մօտս, հնար մի անձանօք երիտասարդ:

— Սա քո հայրենակիցն է, Վահան Տէրեանը, նոր է եկել Մոսկուայից... Իրեն չես ճանաչում, բայց «Աբգիշաղի երգեր»ը հօ անդիր գիտես: Լաւ չարի՞, որ բերի...

— Շատ լաւ արիր: Նոաեցէք, խնդրեմ:

— Դու արի հիմա խելքի բեր էս մեր երիտասարդներին, երէկուայ ճուտերին... Ասում է՝ բանաստեղծութեան մէջ էականը բովանդակութիւնը չէ, ձեւն է...: Ո՞նց քէ ձեւը...

Դեռ ճամբին, փողոցում, բռնուել էին սաք վիճաբանութեան եւ հիմա չարունակում էին:

Տէրեանը՝ Թունդ սարուած ֆրանսիական սիմվոլիստների հովերով, պարզաբանում էր մի սեսութիւն, որը զարմացնում ու մի քիչ էլ գայրացնում էր Թումանեանին:

— Տօ, ո՞նց քէ...

Օհաննէսը մասծում էր պատկերներով, հատուածօրէն, փաստարկում էր օրինակներով եւ պատուոյ բանն պակսար լրացնում էր սովորական սուսա բացականչութիւններով.

— Ո՞նց քէ... վահ, սարսա՞պ ես... սրեմն, քո ասելով, անաչէն, էպպես բա՞ն կ'ելի... տուտուց-աուաուց մի խօսք... բաս էն, որ մինչև հիմա... այ, հրէն էնաես, տես, ինչ է պրում...

Նիսա գաւեշատկան էր Օհաննէսի հոչակաւոր այդ «հրէն»ը: Ձեռքով մի լայն, անորոշ ժեսա էր անում, ցոյց էր սալիս գրքերով լիքը ու գոներըը պինդ փակ պահարաններըը — «Ա՛յ, հրէն»...

Եքէ ուզենայինք նեղը լծել եւ պահանջկինք, որ ճշտի «հրէն»ի բովանդակու-

...ու «բովանդակութիւն», թէ արուեստ միաձոյլ հատիկն են կազմում եւ ոչ մի «ձեւ» չի կարող փրկել բովանդակ երկը, ինչպէս եւ ոչ մի «բովանդակութիւն», եթէ չի պահել համապատասխան ձեւը, չի կարող առաջ բերել այն ուրոյն կարգի յուզմունքը, որ էսթետիկական ենք անուանում...

Օհաննէսը կարեց խօսքս.

— Դուն էլ Նասրեդդին Խոջայի պատասխանն արիր...: Չէ՛, Վահան, քո ասածներին չեմ հաւատում, աւաւոց բաներ են...: Վատ արի էղ քո Բօդլէրից, Մալարմէից, Վերլէնից (չեմ յիշում էլ ուրիշ ինչ անուններ աուր)...: Ասածներդ չեմ հաւանում, բայց գրածներդ չաս եմ սիրում...: Գլուխը քարը, ինչպէս աւում են ձեր Զավախքում, ինչ դաւանութիւն ուզում ես՝ ունեցիր, միայն թէ էղ յաւյաւ նրկներից էլի գրիր, չա՛ս գրիր...

●

Ի պէտ, Թումանեանի բնաւորութեան ապնիւ գծերից մէկն էլ այն էր, որ միանգամայն ազատ էր պրոֆեսիոնալ նախանձից, չուներ չարակամութիւն իր արհեստակիցների յաջողութեան հանդէպ: Ես գոնէ այդպիսի բան երբեք չեմ նկատել: Հակառակը, չաս յաւյիչում եմ, օրինակ, թէ որքան ուրախացել էր՝ անկեղծօրէն ուրախացել, երբ հրապարակուեց նոյն Տէրեանի փոքրիկ ժողովածուն, մինչեւ այդ անյայտ բանաստեղծի անդրանիկ երգերը: Հիացմունքով խօսում էր ապագրէղ նոր իջնող տաղանդի մասին, ցիտատներ էր անում, սափսում էր կարդալ, գնահատել, սիրել — ամէնուրեք եւ ամէն կերպ ժողովրդայնացնում էր երիտասարդ բանաստեղծի անունն ու գործը: Նոյնը կարող եմ ասել եւ Աւօ Խաչհակեանի վերաբերմամբ, որի առաջին գնահատողներից էր Թումանեանը: Նրա յայտնութիւնից չաս հետու էր այն աղեղ վախը, այն չարչիական հաչիւը, թէ ահա երեւան է գալիս մի նոր ու փայլուն տաղանդ, որը կարող է նսեմացնել իր սեփական արժէքը:

Գիտեմ, որ մեր բանաստեղծներից մէկը չաս վշտացել ու վիրաւորուել էր, որ մի

ղը պատռում է յանկարծ մի անշուն պոռոք... Ո՞նց է անցնում յոյսից խաւսրա, ինչո՞ւ, և ինչպէ՞ս է կարում մ կեանքի քե- լը, ի՞նչ է կատարում այն վայրկեանին, երբ մեռոցը չուռ է տալիս սարի էն ներ- սը...

Չէր կարողանում հաշտուել «վերջա- նական» մտքի հետ: Թէև յուսախ ուում էր՝ լաւ կանք, վատր՝ չկանք, բայց «չե- լը՝ լաւր կանք, վատր՝ չկանք, բայց «չե- նելը» չէր կարող հասկանալ: Նկատե նելը» չէր կարող հասկանալ: Նկատե ուէր, որ նրա համար «հասկանալը» նչա- նակում էր պատկերացնել: «Լոյսից խա- ւսրա», «կեանքի թելը», «սարի էն ներ- սը»,— որանք պատկերներ էն, որ ծնուն դ են տալ երեւակայութիւնից եւ խօսում են երեւակայութեան հետ: Բայց ինչպէ՞ս պատկերացնել «չլինելը», մա՛նաւանդ իր սեփական անդոյութիւնը:

— Ուրեմն, քո խելքով, հենց էապէս՝ կանք ու դնացինք ու ամէն բան վերջա- ցա՞ւ... Հաւատո՞ւմ ես, որ էդպէս բան լի- նի... Հիմի, ասենք, ես էստեղ եմ, ա՛յ, նստած քեզ հետ սրից եմ անում ու յան- կարծ՝ մեռայ... Լաւ, ի՞նչ եղայ ես, ո՞ւր դնացին իմ ապրումները, իմ մտքերը, հենց այն իսօքը, որ բերանում եմ կիսատ մնաց... Անյայտացա՞ն, չքացա՞ն...

Չէր կարողանում ձեւակերպել միտքը, բայց իր հոգու խորքում եւ իր համար ինչ-որ մի բան գիտէր եւ այդ անորոշ, անկերպարան, անարտայայտելի ու անըմբռնելի, բայց շատ յստակ բանը պաշտպանում էր նրան յուեւսւթի- նից: Ի րնէ կենսուրախ էր, արուարք, զուարթ: Նրա «քէֆ արա» կրկնւ՛թը յու- սահատութեան ճիչ չէր, այլ՝ առողջ, կո- րովի հոգու արտայայտութիւն: Կեանքի դատնութիւններին ու ապեզութիննե- րին, որ զգում էր, խորապէս ու անդադար արձադանդում, նա հանդարտում էր այդ իր գիտցածը եւ մնում էր կանդուն, գլուխ բարձր, ժպիտր երեսին: «Դարդ մի անի՝ վերջը ամէն բան կր կարգաւոր- ւէ»... Այս տրամադրութիւնը միշտ էլ յա- տուկ էր իրեն, իսկ կեանքի երկրորդ կէ- սում՝ աստիճանաբար հատուկանալով՝ Թումանեանը ջօաեւնում էր արդէն դէօ- քէական բարձունքներին՝ մեծ հոգինե- րին վայել խաղաղութեան, լոյն, անխռով յոյզերից ու կրքերից վեր աշխարհըմ- բրոնման:

Այդ օրը Թումանեանը փիլիսոփայելու տրամադրութեան էր: Աւելի ճիշտ կր լի- նէր, եթէ ասէի՝ փիլիսոփայելու իր սոցիա- րական տրամադրութեան մէջ էր:

Անակիրը ու անվերջ ժամանակը, ան- հուն տարածութիւնը, աիեղերքի անյայտ ու անթափանցելի խորքերը, հեռաւոր աստղերն ու մեզ համար անմատչելի ու- րիշ աշխարհները, ապա մարդը՝ նրա աեղը բնութեան մէջ, գոյութեան իմաստն ու նպատակը,— այս խնդիրները հանդիստ չէին տալիս նրան:

Մտահոգիչ կլանուած էր մահի պրոբլեմով: Եւ ո՛չ միայն վերջին տարի- ներին, երբ մահը կանդնած էր իր սեփա- կան բիկունքում եւ սպասում էր պատեհ ժամի, որ մեկնի չոր ձեռքը, այլեւ՝ շատ առաջ, երբ դեռ երիտասարդ էր ու առողջ: Մօտեցող վտանգի սպառնալիքը չէր, որ վախեցնում էր կեանքը սիրող մահկանա- ցուն, այլ երեւոյթի՝ նրա համար անլու- ծելի առեղծուածը, որ անհանդստացնում էր նրա որոնող միտքը:

— Էդ ո՞նց է լինում, որ կենդանի մար-

●

Ջուրկ չէր սրոչ ասոտակի հնարապետութենից, կարողանում էր նաև պանել ժողովրդին կացութիններից, բայց միաժամանակ շատ անփոյթ էր ու անհոգ բնույթ:

Ղազարոս Ագռլանի հետ տարիներ շարունակ ընկերացած էին, թև ինչևէ պիտանանեն, երբ մի քիչ գրամ ունենան ձեռքնեում: Եթե չեմ մոռացել, երազանքը վերարերում էր ինչ-որ անփական հանդիսակամ ամառային հիմնելուն:

Երազելը շատ հեշտ բան էր, քանի որ գրամը բացակայում էր և ոչ միջոց չկար, թե երբեք պոյութիւն կ'ատնի: Բայց, ըսկսած հետևանքով. նրա մի օր, երբ ընկերացողները իրօք ունեցան մի կլորիկ գումար (Ագայեան-Թումանեանի չափանիշով, ի հարկէ):

Ինքը անապատելի էր ու մի քիչ էլ չմեծացիչ նորընծայ «կապիտալիստների» համար: Երկուսն էլ փոքր հոչիւ չիմացող, երկուսն էլ քէֆ ու ընկերութիւն սիրող: Սկսում է մի պերմաննա տոնախմբութիւն, գրամի չտալում, այսօր Օհաննէսի մօտ, վաղը՝ Ղազարոսի մօտ. այսօր Օրթաճալայում, վաղը՝ Վերայում կամ Դիպուրնում. այսօր նուէր այսինչ բարեկամին, այն օր՝ մի պեղեցիկ իր տան համար՝ պրիք, նկար, յախճապակի, ապա՝ հին, վարտց մոռացած մի փոքրիկ պարտքի հատուցում...

Անցնում է մի շարաթ, երկու շարաթ, երեք շարաթ... Մի օր էլ տեսնում են, որ տակը բան չի մնացել:

— Էս ո՞նց էլաւ,— աղաչում է Օհաննէսը: — Հոպա մեր հանդէսն ու մնացած բանե՞րը...

Այսանով Ղազարոսը մի տոկ է պատմում.

«— Մի օր հէրս ու ապայ պնացել են պաչա՝ արար հնձելու: Կէսօրին աղջիկները բերում են նրից մի մեծ կճուճ ցուրի բյաւ ու տոպա մածուն: Հէրս ու ապայ վրայ են բնկնում, կուշա փորով ուտում, ամաններըր մինչև տակը պատրկում, պէնը պնում:

— Համա կերանք, հա՛,— ասում է ապէն:

— Հարյաթ որ կ'ուտենք,— պատասխանում է հէրը՝ բեխերը արբելով, փքուած ու ինքնագոհ: — Ես ասան, պուն՝ տալան-տպատախ... կ'ուտենք, բաս չե՞նք ուտի:

Երեկոյեան, երբ պետանիների հատորում են, որ տուն վերադառնան, ապէն նայում է հնձած արտին ու դիմում հօրը, թէ՝

— Ա՛ հէր, հաօրուայ մեր արած բանը իսկի բանի նման չէ... Մի մաիկ, թէ ինչ է մեր հնձածը...

Իսկ հայրը, ձեռքը ծոցը դրած ու խեղճացած ձայնով՝

— Որդի,— ասում է,— ես մի անպօր ձերունի, պուն՝ երկուայ խոխայ... Ի՞նչ պիտի լինի մեր արածը: Ուտելում պետ լաւ ենք, բայց հանդում աշխատելը մեր բանը չէ»:

— Հիմի մենք ենք, ես ձերութիւնից արդէն ոտատած մարդ, իսկ դուն՝ էն պլխից «սարսող»... Դե՛հ, մեր ձեռքից եկածն էլ հաքան կը լինի:

●

Շատ էր սիրում հատաքել լուր-տուր դրկիր (բուսականին հարուստ ու որակով բնաիր դրապարան ունէր): Բայց աւելի սիրում էր հատաքել, ունենալ, պարսել պահարաններում, քան կարդալ:

Քիչ էր կարդացել, նոյնիսկ պետական դրականութիւնից:

Տարուած էր Շեքսպիրով, բայց Շեքսպիրից լաւ պիտէր «Համլէտ»ը միայն: Ծանօթով Շեքսպիրի մասին, առատ ցիտատներ էր բերում, բայց միշտ ու միմիայն «Համլէտ»ից: Չէր կարդացել ո՛չ միայն քրոնիկոններն ու կոմեդիաները, այլեւ մեծ արագելիաներից մի քանիսը հազիւ թերթել էր, աչքի անցկացրել:

Չէր կարդացել նոյնիսկ ամրողջական Գուչկինը, թէեւ շատ բարձր էր գտնում ուսումնական դրանաստեղծին: «Ժամանակ չէր ունեցել» կարդալու, օրինակ, Գուչկինի արձակ դրուածքները (բացի «Kanhtahckar Aoyka»ից, որքան յիշում եմ):

Լաւ հասկանում էր (գոնէ հատուն հասկանում), որ իրեն պակասում է դիտութիւն, լայն կարդացում, մշակոյթ: Հաս-

կանում էր ու հատաքում պրքեր... մի օր կարտոֆան համար: Բայց մշակույթի խոչոր պակասը իրօք լրացնելու համար հարկավոր էր յարատեւ, յամառ ու կանոնաւոր աչխատանք. իսկ այդ բանին Օհաննէսը նէսլ ընդունակ չէր, ուսաի եւ նրա բարի ցանկութիւնները բարի ցանկութիւն լինելուց դէնր չէին անցնում:

Ուժեղ էր մի բանում միայն. յոյն փիլիսոփայութեան եւ ձեռքն ընկածը ապահովելը, հաւաքում էր ֆոլկլորային հին ու նոր նիւթեր եւ ձեռքն ընկածը ապահովելը, իրացնում: Աւանդութիւններ, հնքիաթներ, ժողովրդական երգեր, առակներ ու առածներ պարունակող պրքերը թևրևս միակն էին, որ պարապ տեղը չէին պարպարում նրա պահարաններըը:

Եւ այսաեղ էր, որ Թումանեանը առանձնապէս յայտարերում էր իր պայծառութիւնը գեղեցիկի հանդէպ, գեղարուեստական իր բարձր ու նուրբ ճաշակը:

●

Ցիչում եմ, ինչպէս մի օր՝ 16 թէ 17 թուականին, Օհաննէսի տանը, ճաչից յետոյ, Անդրանիկը պատմեց սատուցող «Մոծակն ու մրջիւնը» առակը: Անդրանիկը ընդհանրապէս շատ լաւ պատմող էր, ունէր ճոխ, դուռեղ լեզու՝ վարպետօրէն համեմուած ժողովրդական չեչատկի խօսքերով եւ պատկերաւոր դարձուածքներով, իսկ այդ օրը առանձնապէս Opin B ynape (պէ՞տք էր արդեօք աւելացնել, որ ճաչի վրայ պինին առատ էր ու կոնեակը թուղղ):

Անդրանիկը պատմում էր՝ կարեւոր խօսքերի վրայ չեչտեր դնելով, արտայայտչական պատկաններով, դէմքի կոմիկական խաղերով, իսկ Օհաննէսը խնդքացել էր ուրախութիւնից ու հիացմունքից: Անդադար բացականչութիւններ էր անում, ձեռքը ծնկին խփում, հրճւում, ծիծաղում...

— Տօ՛, մի մտիկ արա, թէ ի՛նչ է ասում... Վա՛հ, սա չատ աւելի լաւ է, քան կռիլովի «Crpekoma»ն... Լսո՞ւմ եա. թուխ-թուխ, հատատոլուխ—սա մրջիւնն է: Իսկ մոծա՞կը. ատները թևլ, ինքը մի պէլ... իր կնիկը՝ չատ ուիկ-մատ ուիկը, ատրան ատքին ատղ է ածում, ինքը սրա — նրա թուչը պաչում մ... Չատկանո՞ւմ եա, ինչ համով բաներ են սրանք... Էպէտ էր ամառը, խոկ հիմա պաժան ձմեռն է մօտենում. ցուրտ, բուք, անձրեւ... Անհոգ, խեղճ ու խեխտ մոծակը էլ չի պատմի՝ աքիլ, կուչ է եկել մի պատ քարի տակին... Իսկ հետատեւ, տնարար մրջիւնը: Սա տուն-տեղ է պրել՝ մրջոմէջ ու տնվերջ, կոկիկ ու տատուկ, ամրար է չինել. պաչար հատաքել ու վրէն պինդ նատել... Աստուած վկայ, եա թումանեանը չեմ լինի, եթէ էս պոհարը չպկեմ ու մի ոսկէ մատանու մէջ չդնեմ...

Եւ յղեց ու պրեց, ինչպէս պիտէք:

●

Ա՛ի ժամանակ չատ էր տարուած Գրիմ եղբայրների պերմանական հնքիաթներով, ուզում էր ամբողջը թարգմանել (ոտսեբէնից, ի հարկէ, պերմաներէն չգիտէր):

Առանձնապէս պրաել էր ուչադրութիւնը «Xpaoppih nopthrta» առակը:

— Գիտե՞ս, որ սրանից լաւը մենք ունենք...: — Եւ պատմեց Քաջ Նազարի սխրագործութիւնները:

Մինչ այդ եա լսել էի Նազարի անունը, բայց՝ անուն միայն: Երբ իմացայ պործերի պատմութիւնը, համաձայնեցի, որ պերմանական առակը մի անմեղ կատակ է սրա հոյակապ սատիրայի համեմատութեամբ:

— Ատում են, թէ մինչեւ էսօր էլ ողջ ու երջանիկ է Քաջ Նազարը:

Այսպէս վերջացրեց Թումանեանը:

Չարցրի՝

— Եղբայրնակման այդ խօսքը դու քո՞ղ ես աւելացնում, թէ ժողովուրդն էլ այդպէս է ասում: Գլխի բնկնո՞ւմ եա, թէ ի՛նչ դատն չեչտ, ի՛նչ մեծ յոռեատատութիւն կայ այդ մի կարճ ու պարզ նախադասութեան մէջ:

— Չատ չե՞մ հասկանում... Չէ՛, չէ՛, իմ մոզոնածը չէ, հենց այդպէս էլ վերջացնում են հնքիաթը պատմողները:

●

Իրեւ իսկական բանատեղծ, երե-

ոլիմներն ըմբռնում էր ու մատծում պատկիններով:

Մի անգամ ուսս պրոյ Տանի՞ (Բոպրոյ) հետ պտում ենք երեքով Ռոպմա-ույի-բական ճանապարհով Թիֆլիսից Վլադիկաւկաս: Ամառուայ սաք եւ պայծառ օրեր էին: Գնում էինք պիտամար պանպաոլն, կայարաններում երկար կանգ առնելով, պիչերելով, չրջակաները պիաելով ու բնութեան պնպեցկութիւնները վայելելով:

Օհաննէսը ուսուչին անգամն էր տեսնում Մեծ Կովկասը: Ցանկարծակիի էր ենկել ու մի քիչ չուարել: Մինչ այդ նա տեսել էր միայն Լոռուայ լեռները եւ բսա այնմ կարմել իր պատփարը սարի ու ձորի մասին: Այժմ Կովկասի վիթխարի, ահարկու դանգուածները սակնուվրայ էին արել իր հասկացողութիւնները, անրնական ու անհնթնթ էին թուում:

Երբ Կազբնկ կայարանից իջնում էինք Դարիալի կիրճը, յանկարծ գիմեց ինձ.

— Գիտե՞ս ինչ: Ասում եմ, էս երկիրը Աստուած սաեղծել է ուսչին օրերում, երբ նիւթն ուոաս է եղել ու ինքն էլ գեռ անփորձ, չի իմացել չափն ու սահմանը... Թէ չէ՝ էս բարձրութեան սա՞ր կը լինի, էս խորութեան ձո՞ր կը լինի:

Ես Թարդմանեցի Բոզորապին Թումանեանի ուսածը:

Սա լիաբերան ծիծաղեց:

— Ուոաս նիւթն ու անփորձ Աստուածը... Լա՛ւ է ասուած:

— Չէ, ճիչաս չէ՞,— վրայ բերեց Օհաննէսը իր համարեա՛ ռուսերէնով: Եթէ անփորձ չլինէր, էապէս բան կ'անէ՞ր... Լինում են երիտասարդ անհաչիւ սանահկիններ, որ ճաչը հիւթերին բաժանելիս՝ լիքը կաթսան ձեռան տակ՝ ուսչին պնակները լցնում են լեփ-լեցուն, իսկ վերջիններին ոչինչ չի մնում՝ ոչ սար, ոչ ձոր, մի հարթ ուարածութիւն միայն...

●

Տեղին կը լինի նչել այստեղ, որ Թումանեանը զարմանալիօրէն քիչ էր ճամբորդել, մնում էր պինգ կատչած իր հին Թիֆլիսին: Թիֆլիս-Լոռի, Թիֆլիս-Բորժոմ-Ախալցըխա-Ուուաել-Ախալքալաք, ապա՝ Թիֆլիս-Երեւան-Էջմիածին՝ ահա նրա ամբողջ «մանպիլը», եւուած ամբողջ աչխարհը, իհաա սահմանափակ հորիզոնը նոյնիսկ հասուն ուարիքում: Վերջիչծա ճամբորդութիւնն արել ենք 906 թէ 907 թուականին, երբ Օհաննէսն արդէն 37-38 ուարեկան մարդ էր եւ մինչեւ այդ ուարիքը չէր եւել ո՛չ կովկասեան չղթան, ո՛չ ծովը (չէր եղել ո՛չ Բաթում, ո՛չ Բաքու): Այդ անգամն էլ զօռով եմ պոկել եեղից, հասցրել Վլադիկաւկաս ու այնեեղից էլ քաչել-ուարել Բաքու, որ գոնէ եեռնի ծովը, նաւթահանքերը, գործարանները... Նաւթահանքերն ու գործարանները նրան չհետաքրքրեցին, ծովը ապաւորութիւն չարաւ, իսկ Բաքուն չհաւանեց ամենեւին. եթէ իրօք ուա նման է ամերիկեան քաղաքի ու կենցաղի, ուում էր, ուրեմն չաւչիմար մարդիկ են զո ամերիկացիները, չեն հասկացել կեանքի յագաթը...

Թումանեանը չհաւեց այն ամէնը, ինչ որ կարող էր ուալ ու պէաք է ուար: Նրա կարողութիւնը չաա աւելին էր, քան եղաւ ղործը՝ թէ՛ քանակով, թէ՛ որակով:

Ինքը մեծ արժէք չէր ուալիս արուեստին.

— Զեռաց ղրած, ծոպի-պոպի բաներ են,— ասում էր:

Պէաք է նկաուեմ, որ այս իուսքի մէջ կար որոչ չափի «կոկեաութիւն». այնքան էլ «ձեռաց» չէին ղրածները... Գե՛հ, բանաուեղծները կարծում են, թէ աչխաաանքը նսեմացնում է տաղանդի մեծութիւնը եւ սիրում են հաւաստիացնել, թէ սաեղծաղործում եւ ձեւաւորում են իրենց երկերը ուանց քրաինք թափելու, «ձեռաց» խաղ ու պար անելով, այնպէս՝ ինչպէս երգում է դաչտի արուուսը (լիչեցէք՝ «Moh Cthx heopexhbih»... «pykoh paccerhhon opruan»...)

Սա ինքնըուոինքեան:

Միւս կողմից, խաաապահանջ էր իր վերաբերմամբ, ուզում էր ասլ բաա ամենայնի կաաարեալ ղործեր եւ հասեչանում էր արուեստների թերութիւնները: Ինաապահանջ էր ու յաճախ անարգար, քերականահաաում էր իր սեփական գրուածք-

նները: Ինձ մի քանի անգամ պատահել է խուզարկել նրա պրասեղանի արկղները, քրքրել թղթերը եւ լոյս աչխարհ հանել պնեցիկ կատներ, որ ինքը՝ հեղինակը, արժանի չէր համարում հրատարակմանը: Թևրևս չատ զարմանաք, եթէ ասեմ, որ սրանց Թումէր այնպիսի պահար, ինչպիսին է «Հայոց լեռնեդուամ»ը:

Իսկ ամենից կլխաւորն այն էր, որ պիտակում էր իր մեծ, գեռևս չայտնաբերուած, բայց ահակայ պոետնցիայի խակաև չափերը, պում էր, պիտէր, որ կարող է պրել այնպիսի բաներ, որոնց հետ համեմատած, Թևրևս իրօք «ծոպի-պրոպի» են արդէն պրածները:

Հասկանում էր, պիտէր, մտապրում էր, պատրաստում էր, բայց...

Ցիչեցէք.

Ինչֆա՜ն ծաղիկ պիտի բուսնէր,
որ չբուսաւ էս հողին...
Ապա՝
Նրանք չերգած իմ երգերն են,
որ սրտում եմ տարայ...
Եւ մի ուրիշ աեղ՝
Բայց ո՞նց անեմ,
Որ իմ դարդը իմանամ.
Սիրտս խորն է, թէ բաց անեմ,
Սիրտս խորն է, լեզուս փակ...

Կարող էք ասել, թէ այս կարգի պատճառները բուսականին սովորական, յաճախակի կրկնուող մոտիւ է լիրիկայի մէջ, եւ Թումանեանը ներչնչուել է պրանի տպրիւրներով, պարզապէս կրկնել է ուրիչների երգած երգը: Անժխտելի է, որ այդ էլ եղել է (մանաւանդ սկզբնական չրջանում): Բայց ես, տարիներ չարունակ չատ մօտ լինելով Թումանեանին, դիտեմ ու կարող եմ վկայել, որ նա իրօք ու խորապէս զգում էր իր կարողութեան եւ գործի անհամապատասխանութիւնը, որ վերում բերածս տողերը սին խօսքեր, բանաստեղծական հնարքներ չէին ոստանորը պարզարելու համար, այլ ճչմարիտ արտայայտում էին Թումանեանի ներքին ապրումները եւ արձանագրում էին մի չատ տխուր իրականութիւն:

Հարց է ծագում. ինչո՞ւ մնացին չբուսած ծաղիկներ կենսատու հիւթերով այնքան հարուստ այդ հողի վրայ, ինչո՞ւ մնացին չերգած երգեր, ի՞նչն էր փակել բանաստեղծի լեզուն:

Ինքը՝ Թումանեանը պատճառը էր բերում իր նիւթապէս վիճակի ծանրութիւնը, բազմազարդ բնաւորութեան—մանր-մունր հոգսերը, որ հնարաւորութիւն չէին տալիս կենտրոնացնելու մխրճուելու աչխատանքը, խորացնելու եւ մչակելու երկերը:

Շատ անգամ լսել եմ Թումանեանից այս կարգի բացատրութիւններ, բայց որոնց անբաւարար թիւնը միչտ էլ ստիպել է եղել ինձ համար:

Անչուչտ, նիւթապէս երբէք ապահովուած չի եղել Թումանեանը, յաճախ նեղուել է, ապրել է պժուարին օրեր: Բայց չի կարելի ասել, թէ բնդհանուր առմամբ չարքաչ կեանք է վարել, չարունակ կամ երկարատեւ զրկուած է մնացել: Չի կարելի ասել նաեւ, թէ բնաւորութիւնը իրօք բազմանգամ մեծ բեռ է եղել իր ուսերին: Փաստն այն է, որ, չնայած միջոցների պատահական Թերանն ու անբաւարութիւնը, չնայած ժամանակաւոր պժուարութիւններին, Թումանեանը ունեցել է մի ապրուստ, որին կարող էին նախանձել այն ժամանակուայ մեր մտաւորականների չատ-չատերը (մանաւորապէս պրական աչխատաւորները): Բաւական է յիչատակել նրա ստացած հիւրընկալութիւնը, այն կերպով, որ երբէք չէր պակասել Թումանեանի անից. չէ՞ որ սա, վերջիվերջոյ, մի նիւթական հիմք պէտք է ունենար իր տակին...

Ո՛չ, արտաքին աննպաստ պայմանները չէին, որ արգելք եղան Թումանեանի ստեղծագործական լիակատար ծաղկմանը, նրա ստացած բերքատուութեան: Գրականութեան պատմութիւնից բազմաթիւ օրինակներ գիտենք, երբ մարդիկ չատ աւելի վատ պայմաններում են տանեակ հատորներով բնաիր գործեր:

Իսկական պատճառը ներքին էր:

Կարճ խօսքով կարելի է ասել, որ իրենց ծոյլ մարդ էր Թումանեանը, օրգանապէս անընդունակ կանոնաւոր ու յարատեւ աչխատանքի: Բայց սա էլ բաւարար բացատրութիւն չի լինի, եթէ չաւելացնեմ, որ ծուլութիւնը յաղթահարելու համար Թումանեանը չուներ ստեղծագործելու այն հրամայական պահանջը, առանց որի ամենամեծ տաղանդներն անգամ կարող են մնալ անպատուղ:

— Դուն հայտ ապահ,— պատասխանում էր իմ հարցու փորձին եւ խորհրդաւոր կերպով աչս անում:

Գաղտնիքը այդպէս էլ տարաւ հետը, քանի որ իր թոյլերում, որքան յայտնի է ինձ, ոչ մի հետք չի պահուել այդ տրտմելի պիսից:

●

Ահա իմ յուշերը «անկապ» անուանելիս վերնագրում եւ այժմ՝ աւարտելով աշխատանքս եւ քննական աչքերով վերանայելով այն, տեսնում եմ, որ լիովին արդարացրել եմ վերնագիրը, թեեւս խոստացածիս մի բան էլ աւելի եմ աւել՝ անկապութեան կողմից... Բայց յուսով եմ, որ ընթերցողը ներողամիտ կը լինի, հաշուի կ՝առնի, որ իմ նպատակը չի եղել «կապել» ամբողջացնել, ամբողջական մի պատկեր տալ (այդպիսի պատասխանատու գործ ոչ ոք չի էլ յանձնարարել ինձ), այլ պարզապէս նշել մի քանի անջատ գծեր՝ թումանեանի անձնաւորութիւնը այս կամ այն կողմից բնութագրելու համար:

Ցուշերիցս գրի եմ առել այն, ինչ որ բնորոշ եմ համարել եւ աշխատել եմ ճշմարտութեան պատմիչ լինել: Շատ էլ հնչեղ բան չէ գա, երբ խօսում ես սեփական մարդու մասին: Ցամենայնդէպս, կարող եմ հաւատացնել ընթերցողին, որ գոնէ գիտակցօրէն չեմ խեղաթիւրել իրականութիւնը՝ գրել եմ այն եւ այնպէս, ինչ եւ ինչպէս մնացել է իմ յիշողութեան ծալքերում: Թումանեանի յիշատակը շատ թանկ է ինձ համար եւ, ի հարկէ, կը ցանկանայի, որ նոյնքան թանկ պատնար նաեւ այս էջերը կարդացողի համար: Բայց անարգած կը լինէի նոյն այդ յիշատակը, ապա եւ արժէքի ծաւալութիւն մատուցած, եթէ փորձ անէի «գեղեցկացնել» նրա դէմքը՝ մի բան սուտերի տակ թաքցնել, մի ուրիշ բան ինձանից աւելացնել կամ էութիւնը ծաղկեցնել... Թումանեանը գեղեցիկ էր ու վսեմի հենց այնպէս, ինչպէս էր՝ իր թերութիւններով ու թուլութիւններով հանդերձ, եւ ոչ մի սրբապրիչի բարեկամական ուղղումների կարիքը չունէր: Եւ եթէ վերեւում տուած իմ դիմագիծը այդ

Զատկի առաջադրանքներին պատասխանելիս կարծիքով հանելուկի բան չկայ՝ ամեն մարդ իր կարծիքով հանելուկի բանին:

Զատիկը ուշադրաւ է այս հանգամանքով:

Ամէն կամակատից վեր է, որ Թումանեանը իսկական բնածին ու ստեղծագործ բանաստեղծ էր: Բայց նրան պակասում էր առեղծագործելու իր բանաստեղծական ոգեշնչման ու յուզումներն ու յուզումները գրականութեան ներքին սահմուլը՝ այն հրամայական խմպուլսը, այն խթանը, այն աւնդը, որ կրծում է գեղարուեստագէտին, հարկադրում է նրան ստեղծագործել quand même (ինչ էլ որ լինի, ֆրանս.— *խմբ.*) յամենայնդէպս, ինչ էլ լինի, ամէն պարագայում, չնայելով ոչ մի արգելքի... Թումանեանը պակաս էր այդ թանկագին պահանջից, եւ դա էր նրա ու մեր դժբախտութիւնը: Փոխանակ ստեղծագործելու, մարմնացնելու, ձեւ տալու եւ ամբողջացնելու թղթի վրայ, սպասում էր իր ներսը նրանով, որ խօսում էր, երազում, ծրագրում...

Ախ, որ մեծ արժէք չէր տալիս իր գրածներին, բայց համոզուած էր, որ երբ գրի այն, ինչ պահած ունի մաքուր ու պատրաստուում է գրելու՝

— Ա՛յ, դու էն ժամանակը տես...

Տարիներով երազում էր ու խօսում «Հազարաց բլրուլ»ի մասին. իր ասելով, սա իր ստեղծագործութիւնների գլուխգործոցը պիտի լինէր: Այժմ այդ չմարմնացած պատկերների հազարաւոր ձեր ձեռքին են եւ ինքներդ կարող էք դատել, թէ որքան իրաւացի էին հեղինակի յոյսերն ու խոստումները:

Համոզուած էր, որ իր իսկական կոչումը... դրամատուրգիան է: Գիտէք, որ այդ ասպարէզում ոչինչ չի ստեղծել՝ փորձ էլ չի արել մի բան ասելու, մի երկարող պիեսով անդամ չի գրել[3]: Բայց եւ այնպէս համոզուած էր, որ իր տպաւորիչ բնոյթին ամենից աւելի սազում է դրամայի ձեւը. այստեղ է, որ նա պէտք է ցոյց տայ իր կարողութիւնների ամբողջ չափը... Ծրագրում էր եւ պատրաստում գրելու ինչ որ արտերպիա՝ «Ցովհաննէս թագաւոր» վերնագրով: Թէ ո՞վ էր այդ ստեղծուածային թագաւորը եւ ինչումն էր կեանքում նրա տրագեդիան՝ չէր ասում:

*չի աստւմ, ընթերցողը յաւ կ'անի, որ պա-
կասը վերագրի ոչ թէ մոռնալին, այլ՝ պար-
զապէս նկարչի ապիկարութեանը:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱՍՄԱՃԵԱՆԻ

Սեպտեմբեր, 1935 թ.

1· Յուշագրի վկայութիւնը կարօտ է ճշտման· Թումանեանը ո՛չ միայն մեծահարուստ գրադարանի տէրն էր, այլեւ՝ դրա անյագ ընթերցողը: 1987ին լոյս տեսաւ «*Յովհաննէս Թումանեանի անձնական գրադարանը Երեւանում· մատենագիտական նկարագրութիւն*» խոշոր հատորը (կազմել է բանասէր Ա· Հայրապետեանը)· Գիրքը վկայում է, որ Թումանեանը հարիւրաւոր գրքեր (ստոյգ թիւը՝ 550) ո՛չ միայն կարդացել է, այլեւ ուսումնասիրել, որի մասին կարելի է դատել ըստ լուսանցքներում արուած բազմաթիւ ճշումների ու գրառումների: Այդ գրքերի թուրն են պատկանում Չեխովիրի «*Արքայ Լիր*», «*Համլէտ*», «*Մակբէթ*», «*Ռոմիո եւ Ջուլիէտ*» ողբերգութիւնները եւս:

2· Վ· Գ· Բոգորազ-Տանը (1865 – ստոյգ չէ) պահպանուել եւ տպագրուե՞լ է գէթ: Նարոդնիկ, «*Նարոդնայա վոլյա*» Հարաւ-ռուսական կազմակերպութեան հիմնադիրներից մէկը:

3· Յուշագրի վկայութիւնը ստոյգ չէ· պահպանուել եւ տպագրուել են Թումանեանի դրամատիկական փորձերից մի քանիսը («*Խաւարի մէջ*», «*Ընկոյզից յետոյ*», «*Յովհաննէս Մագաւոր*»): Բայց Թումանեանի՝ «Իմն էն է՝ դրաման» աշխատասիրած հատուածների հիմքը ոչ թէ այդ փորձերն են, այլ իր բովանդակ ստեղծագործութեան, մասնավորապէս պոեմների ու լեգենդների իրօք ու խորապէս դրամատիկական բնոյթը: Եւ առհասարակ, պէտք է ընդունել, որ Թումանեանի բարդ էութիւնը յուշագրութիւնների շատերի, նոյնիսկ մտերիմների համար անընդունելի է անմատչելի: Երեւոյթն ամէնից լաւ բնութագրել է Աւետիք Իսահակեանը· «*Յովհաննէսին դժուար էր հասկանալ· իր՝ հայ գիւղացու կեցուածքի (խօսքի), ձեւի սակ թաքնուած էր մի կծիկ, հոգեբանական մի սֆինքս*»:

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՈՂ ԱՐԳԵԼՈՒԱԾ ԷՋԵՐ

1983ին կր կամ 84ին: Անդրանիկ Ծառուկեանի ծննդեան 70ամեակի առթիւ հարկ համարուեց լոյս ընծայել նրա լաւագոյն գրքերից երկուսը՝ *«Մանկութիւն չաւնոցով մարդիկ»* եւ *«Երազային Հայկը»*: Ես, իբրեւ գրքի խմբագիրը, կամեցայ, որ դրանք լոյս աեսնեն այնպէս՝ ինչպէս գրուել են, առանց «գաղափարական» կրճատումների եւ խեղումների (Կոստան Զարեանի *«Նայր լերան վրայ»* վէպի վերահրատարակութեան փորձը յայտնի էր):

Զյաջողուեց: Այդ պատմութիւնն եմ ասում երկու խօսքով:

Նամակ գրեցի հեղինակին, որ ուղարկի առաջին գրքի աշեղծ օրինակը (երկրորդն ունէի արդէն): Պատասխանեց, թէ կարող եմ վերցնել Ստեփան Ալաջաջեանից: Վերցրի գիրքը, «Կրտսեր եղբօրս՝ Ստեփանին» ընծայագրով: Երկու գիրքն էլ, մեքենագրուած, յանձնեցի «Խորհրդային գրող» հրատարակչութիւն:

Ամէն ինչ կարգին էր, միայն որ բանը հասաւ մամուլի պետական կոմիտէին: Այստեղ խոփը դէմ առաւ քարին: Նախագահի տեղակալը դէմ չէր տպագրութեանը՝ պայմանով, որ գրքից դուրս թողնուեն այն էջերը (ընդամէնը 3 մեքենագիր էջ), որ իրենց դրամատիկական մեծախօսութեան բնոյթով շատ ուժեղ շեշտ էին տալիս գրքին: Ի հարկէ, ջանքեր թափեցի պահպանելու համար: Ապարդի՛ւն: Բանը հասաւ այնտեղ, որ գիրքը կա՛մ չպէտք է լոյս տեսնէր, կա՛մ լոյս տեսնէր առանց այդ էջերի: Գերադասելին, ի հարկէ, երկրորդն էր: Եւ հրատարակուեց այդ էջերը զոհելու, իսկ միւս գրքից *«Ընկերս՝ Նչանը»* գլուխը դուրս թողելու գնով (այդ գլխի հերոսը դաշնակցական մի երիտասարդ է):

Հիմա, գիրքը վերստին վերցնելով Ստեփան Ալաջաջեանից, արտագրեցի այդ էջերը եւ վերադարձնում եմ ընթերցողին:

Արգելման պատճառն ընթերցողը գլխի կ'ընկնի առանց դժուարութեան. հարկաւոր է միայն մի բանի ծանօթութիւն: Այս էջերը շարունակութիւնն են 1985ի հրատարակութեան *«Ծաղկոց»* գլխի (էջ 70): Ծաղկոց կոչուել է Հալէպի այն շինութիւնը, որ «փոխանցման կայան մըն էր մանկապարտէզին եւ մեծ տղոց բաժինների միջեւ»: Գլուխն աւարտում է հեղինակի եւ նրա որբանոցային մտերիմ ընկեր Յարութիւն Կալենցի հրաժեշտի տեսարանով: Յարութիւնը, ապագայ հոչակաւոր նկարիչը, հայրենադարձւում է Հայաստան. հեղինակը մնում է. «Երբ բաժնուեցանք համբուրուելէ ետք, ստուերները կ'իջնէին արդէն: Վերջին խօսքս եղաւ իրեն.

— Տար պզտիկ Արամդ Մեծ Արամին երկիրը եւ Աստուած հետդ ըլլայ…

Չհասկցաւ բառախաղին իմաստը: Պատմութիւն չէր գիտեր Յարութիւնը, գիտէր միայն նկարել: Կախեց գլուխը ու գնաց տուն, բեռները կապելու…»:

Սրան յաջորդում են այն արգելուած էջերը, որոնք, յուսով եմ, ընթերցողը եւս նշանաւոր գրողի գրչի տակից դուրս եկած լաւագոյն էջերի շարքը կր դասի (*«Գրական թերթ»*. 1991. թիւ 11):

ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Յարութիւնին կրասեր եղբայրը՝ Հայկը պիտի մնկնէր իրեն-հետ, միեւնոյն նաւով: Վատվուռն ու գաղափարական աղայ մըն էր Հայկը, հասատաւոր կուսակցական մը (դաշնակցական— Լ. Հ.):

Պայման չլինի, որ մեկնելէ առաջ առաքյալ հրաժարեցնէր Հայկն ու պահեց պայմանը, չանձն առաւ հրաժարիլ, բայց առանց նահատակուելու իր պաշտած գործէ, մեռնելիներէ, եւ, իր կարգին՝ պայման դրաւ, որ հրաժարականը երկնք չյանձնուի մինչեւ իմանայ:

Ձորեքշաբթի մը նաւ մտան: Խարխափ պիտի վերնար յաջորդ օրը: Բայց նաւը չմեկնեցաւ: Երկու օրով յապաղեցաւ մեկնումը, նոր հասնելիք ճամբորդներու պատճառով: Վերջին պահուն, նաւ բերուած անգլիական թերթի մէջ Հայկ տեսաւ իր հրաժարականը: Զայրոյթէն դողահար առաւ գրիչը եւ ինչ-որ...

Երկու եղբայրներէն մէկը մեկնեցաւ ու միւսը մնաց: Մէկը գնաց, սեղմած իր Աթամը կուրծքին վրայ, ու միւսը մնաց, փայփայելով ի՛ր Աթամը կուրծքին տակ...

Ուշ գիշեր է հիմա, երբ այս տողերը կը գրեմ: Գրասեղանիս կէմ, պատին վրայ, կայ Յարութիւնին նկարը, տրտում ու անժպիտ: Կը վերակոչեմ հին ու մօսիկ անցեալը ու սիրտս կը ճմլուի: Այս քաղաքին այսպէս աւաք գիշերներէն մէկն էր Ծաղկոցի այն հետաւոր գիշերը, երբ Յարութիւն ցաւէն կը հոնդար ու կը ճանկէր գետնին խորը: Կարծես երկու եղբայրները նորէկայ են աննեակիս մէջ, ու սեռական պատրանքով մը կը փորձեմ մխացնել բաժնուած անոնց ճակատագիրները, քով քովի բերել Յարութիւնը, որ հոն է եւ Հայկը, որ հոն չէ: Հարցում մը կը դողայ գրչիս ծայրը ու չեմ կրնար յաղթել փորձութեան, չնչալու ես ինձի.

— Յարութիւն, դո՞ւն լաւ երեր մեկնելով այնտեղ, թէ լաւ երաւ Հայկը, որ մնաց այստեղ...

Հարցում մը, որ ինձի հետ պիտեմ թէ կրնան ընել հիմա հարիւր հազար հայեր, աշխարհի բոլոր անկիւններէն, բայց քիչեր կրնան պոռնել ճիչդ ու արդար պատասխան մը, առանց ծամծմելու բառերը, նեղնելու, խեղաթիւրելու:

Բայց այսպէս ուշ գիշերներ կան եւ այսպէս խորունկ պահեր, երբ Ծաղկոցի հին տղան կ'արթննայ մէջս ու կը թօթուէ իր ամբարած իմաստութիւններուն, իմաստակութիւններուն եւ նախապաշարումներուն ծանր բեռը, ինչպէս երբեմն կը թօթուէր թութի ծառերը, ինչպէս վար կ'առնէր թաղին լապտերները, կը փշրէր ապակիները, Ծաղկոցի Թշուառ այն մաքուր տղեկը, որ ես էի ու չեմ հիմա, կրնայ տալ հարցումին պատասխանը այնպէ՛ս՝ ինչպէս գիտեն տալ բանահին մէջ հայր մը թաղող եւ աւազներուն մէջ քոյր մը կորսնցնող տղաքը միայն: Պիտի ուզէի, Ծաղկոցի բոլոր ընկերներուս անունով, մեռածներուն անունով, ինձի դաղափարակից եւ ինձի Թշնամի բոլոր հայ մարդոց համար, կրկնել յաւիտենական ճշմարտութիւնը, որ պատասխանն է բոլոր անցաւոր հարցումներուն.

«*Գրական թևրթ*»ի ընթերցողներին ենք ներկայացնում Մուշեղ Գալշոյեանի տարիներ առաջ թղթին յանձնած մտորումները հայոց պատմութեան վերջին շրջանի մասին:

Ա. ՂԱՓԼԱՆԵԱՆ

Փոխուել են ժամանակները, եւ չաս լաւ է սացուում: Եղել է մեր պատմութիւնը, որին պէաք է անդրադառնանք, չպէաք է մոռանանք մեր անցեալը, լաւ թէ վատ մեր սեփականն է: Հիմա լաւ է, որ մենք ուզում ենք չմոռանալ, չմոռանալը հիմա հերոսութիւն է, այսինքն՝ այն ժողովրդի բնապղային պործողութիւնը, որը եղել է մոռանա՛լ, մոռանա՛լ, մոռանալ վախի՛ց, անզօրութիւնի՛ց, անճարութիւնի՛ց: Չմոռանալը արդէն կռիւ է, այսօրուայ չմոռացկոտութիւնը, յիշելը այսօրուայ կռիւն է, այսինքն՝ ուրիչ բան չենք կարող անել: Միայն թէ ընդունենք մեր պարաւթիւնը, ընդունենք մեր ցաւը, ընդունենք մեր կորուսաը: Նրանից յետոյ ինչ որ կայ, ժամանակը կ'անի, եթէ մենք ընդունում ենք: Եւ, քանի որ մենք պարտուած ենք, ուրեմն մենք մեր մէջ չենք հաչաւում պարաւթեան հետ, ամէն ինչ ՆՈՐՄԱԼ է, կամաց-կամաց մեզ նախապարասաւում ենք, լիցքաւորում ենք ընդդիմադիր կանգնելու, յաղթելու: Հիմա ընդունում ենք մենք, յիշելով ընդունում ենք, որ պարաւել ենք, իսկ եթէ չենք ընդունում, որ պարաւել ենք՝ աւելի քան պարաւած ենք:

Սուա առասպելները չսահեղծենք մեզ համար, թէ մենք հերոս ժողովուրդ ենք, ապրում ենք· ամօ՛թ է, լոզունգ ենք դարձրել: Փիւնիկի պէս զարթնում ենք, կանգնում ենք, վերածնուում ենք, եւ այլն, եւ այլն: Իսկ պա խնդճութիւն է, ընդունենք, որ կորցրել ենք, ընդունենք, որ պարաւել ենք, ընդունենք, որ խլել են մեղանից, ընդունենք եւ ոխով ընդունենք, վրէժով ընդունենք, ցաւով ընդունենք մեր կորուսաը եւ կամ ինչ նորմալ է, լաւ է, այսօր գա պէտք է լինի, այսօր ուրիչ բան չունենք անելու:

Մեր դաղափարախօսութեան սկիզրն էր սխալ: Մեը ղեկավարները չհասկացան, թէ ինչ է հարկաւոր անել ժողովրդին փրկելու համար: Ամէնից կարեւորը ժողովրդին ոդի էր հարկաւոր, իր երդը սալն էր հարկաւոր, իր պատմութիւնը սալն էր հարկաւոր, իր հերոսականութիւնն էր հարկաւոր: Հարկաւոր էր կազմել մեր ժողովրդի պատմութեան ընաիր երկեր, հատուա-

ծարաւ եւ բոլորը հերոսական, այն հերոսական պրուպոնէրը, որ մեր պատմութեան մէջ փայլատակում են: Նման պարագայում կը չոյուէր ժողովրդի ինքնատիրապետութիւնը, այն, որ ժողովրդի մէջ ամրապնդում է ինքնավստահութիւնը, որ ինքը հերոսական անցեալ է ունեցել...

Վարդանանց պատերազմը պայծառ էջերից մէկն է մեր պատմութեան: Նման ճակատամարտ է եղել Սարդարապատում: Այդ պիտիները կարելի է իմանալ բերել իրար յետեւից եւ ներկայացնել որպէս ժողովրդի պատմութիւն:

Սրանով ժողովուրդը կ'ստանայ ինքնավստահութիւն ձեռք չի բերի, որ ինքը հպարտ պատմութիւն ունի:

Մեր պատմութիւնը այն չէ, ինչ որ ներկայացնում են մեր դպրոցները: Մեր դպրոցներում չկայ հայ ժողովրդի պատմութիւն: Ողբալի վիճակ:

Կը գայ ժամանակը, եւ ինքը ժողովուրդը դէմքը կը յատնի իր պատմութեան վերջին չորեքի մի լուսաւոր շարժմանը՝ ֆիդայական շարժմանը: Սա մի ոգեղէն շարժում էր, ուր տասը յաղթել է հարիւր հարիւրների: Ինչո՞ւ: Որովհետեւ ծարաւի են եղել ազատութեան եւ անկախութեան եւ, ամէնից կարեւորը, ոգի են ունեցել ճշմարիտ ու արդարացի պայքարի:

Մեր գաղափարախօսութեան սխիզբն էր սխալ: Եթէ ֆիդայի է եղել, ուրեմն՝ գաղնակցական է եղել ու աքսորել են, եթէ գաղնակցական է եղել, ուրեմն ֆիդայի է եղել ու աքսորել են:

Հերոսական պատմութիւն ունեցող հայ ժողովուրդը իր հերոսական պատմութեան գրուագներին է կարօտ, որովհետեւ խօսք եղած բաները մենք ուզում ենք ապացուցել գործով, որ մենք հերոս ժողովուրդ ենք:

Ահա Ապրիլի 24ին գնում ենք Մխիթարեանները: Գլուխներս կախ գնում ենք, չենք կարող պարծենալ: Այդ ժամանակ եթէ մեզ ասեն գոյդ արէք, մենք ինչ պիտի անենք, մենք պիտի ասենք՝ մեր հոդերը ուռէք... Տխո՜ւր բան է. մխիթարեան հոգի այդ օրը գնում է, ու ոչ մէկը չի կարող ուրախանալ: Խրատչիները ճնշուած, ախուր ու պարտուած է գնում, գնում են գլխիկոր, քահծոտ. մէկ ուրիշ մխիթարեան հայ են ջնջել... Ահաւո՜ր ախուր, պարտութեան օր է:

Սարդարապատը, Սարդարապա՜տը աւելի մեծ արժէք ունի, մանաւանդ, այդ համալիրը: Այդ օրը ժողովուրդը ուրիշ է, ժողովուրդը գլուխը բարձր պահած գնում է. մի տեղ երգում են, մի տեղ պարում, յաղթութեան օր է:

Բայց գնալով, ինձ թւում է, մի օր պիտի երգելով գնալ Մխիթարեանները: Եթէ մենք դրան պիտի չհասնենք, ամէն տարի պիտի խանարհած գնանք, սա մեզ կը տապացնի, սա մեր հերը կ'անիծի: Ինձ թւում է այդպէս է. Սարդարապատը աւելի մեծ կառոյց է՝ պատմութեամբ: Աւելի մեծ կառոյց է:

Դաշնակցական կուսակցութեան հարցում եղել են սխալներ, եղել են քննադատութիւններ: Կուսակցութիւնները նրա համար են ստեղծում, որ իրար դէմ կռուեն եւ կռուեն ոչ թէ կռուելու համար, այլ ճշմարտութիւնը բացելու համար, ճշմարտութիւնը հասնելու համար: Կռիւը եղել է ճշմարտութիւնը հասնելու համար եւ չեն հասել, չեն հասել, դառ օրը պրոխ: Եղաւ պահ, դա յեղափոխութենից յետոյ էր, որ Թուրատեանում յաղթեց յեղափոխութիւնը. այս բոլոր կուսակցութիւնները պիտի միանային իրար եւ ասէին՝ մենք Թուրատեանի անդրաժանելի մասն ենք: Էրզիրը պրատուած էր, Ալեւ մասնան Հայաստանը ամբողջը վերցուած էր, միացնէին, նրանից յետոյ Առուած իրենց հետ, պտում են թող տատանձնացնեն, ուզում են թող միանայ: Վա՜ղ կը լինէր, որ այսօր ամբողջ Հայաստանը մի մեծ հզօր հանրապետութիւն լինէր, հզօր հանրապետութիւն, 300 հազար քառակուսի կիլոմետր՝ 30 հազարի փոխարէն: Այդ ժամանակ, ինչպէս Լինինը ասաջարկեց, միանային իրար: Դու անապետութիւն չես նենք մենք: Թուրքիային մենք ասում ենք, քանի Թուրքիի պետանապետու-

քին ան ենթայինք մի օր, մի ժամ, էրկիրը փրկուած կր: Չարեցինք այդ բանը: Ալինքն՝ այդ կախում ճշմարտութեանը չրերից մեկ, գոնէ օր սրսի, բնականը կախ նայ կատի համար:

Եկու մի լուր բան: Եթէ յանկարծ Դաշնակցական կուսակցութիւնը չկարողանար մի փոքրիկ հանրապետութիւն ստեղծէր, պետութիւն, անկախ մի պետութիւն, որ գոյութիւն ունենար երկու տարի կամ աւելի պակաս՝ մենք ստանձին հանրապետութիւն կոչելու իրաւունք չէինք ունենայ, մենք կրլինէինք մարդ, առանձին հանրապետութիւն: Սահմանադրութեամբ միլիոնից պակաս ժողովուրդ ունեցողը առանձին հանրապետութիւն կոչելու իրաւունք չէր ունենայ, եթէ նա պետութիւն չէր: Իսկ քանի որ կար այդ պետականութիւնը, մենք դարձանք առանձին հանրապետութիւն: Ահա այն մեծ բանը, այն, ինչ որ կատարեց Դաշնակցական կուսակցութիւնը եւ իրաւ պետութիւն ստեղծեց, այն էլ՝ 600 տարի յետոյ: Յուդի՛չ մի պետութիւն, որ Սիմոն Վրացեանը փէչը րոնած մանէր պալիս հայ դպրութիններում, Ռուսաստանի տարածքներում, Նախիջեւանում, եւ րիւջէ էր հաւաքում, ոսկի, նուիրատուութիւններ, որ բիւջէ լինի:

Բայց դրանից լաւը կարող էր լինէր, եթէ նրանք լսէին Շահումեանին: Այն ժամանակ դաշնակցականներն էլ միատարր չէին: Կար դաշնակցական Արեւելահայ բիւրօ, կար Արեւմտահայ բիւրօ, կար Վանի բիւրոն՝ Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ, որը ոչ մէկին էլ չէր ենթարկում, այսինքն՝ ոչ մէկի հետ չէր:


Ահա ինչ կատարուեց, Արեւելահայ դաշնակցական բիւրոն Շահումեանին չընդունեց, Արեւմտահայ դաշնակցական բիւրոն ընդունեց. յայտարարեց, որ Ռուսաստանի մի մասն է, գրաւուած էր արդէն, ռուսական բանակը կարինում էր: Միացնել էր պէտք, ձսեցին, ՄԻՆ չդարձան:

Վատ ու խառն ժամանակներ էին, մենք չգիտեմ ի՞նչ կ՚անէինք այն ժամանակ, ես էլ չդիտեմ, ի՞նչ կ՚անէինք: Կարող է, երբեմն դառնում ես ֆաւալիսա, ասում ես՝ ճակատագիր կայ, կարող է՝ այս էր մեր ճակատագիրը, այսպէս պիտի լինէր («Գրական թերթ», 1989, թիւ 22):

Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ



Կարէն Դալլաֆեան



Վարդգէս Պետրոսեան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1980 Թուականի Սեպտեմբերի վերջերին Ռազմիկ Դաւոյեանի միջնորդութեամբ մեզ այցելեց կանատահայ լուսանկարիչ ու մտաւորական Գ. Պապեանը: Մի չարք լուսանկարներ անելուց յետոյ, գրողի ու նրա միջեւ կայացաւ անմիջական զրոյց: Պապեանն իրեն յուզող հարցերի պատասխաններն Գալշոյեանից ստանալով, կատարել էր ձայնագրութիւն, որից կարելի է շնորհակալ լինել, քանի որ պահպանուել եւ մեզ են հասել այդ ձայնագրի ձայնը, նրա խոհուն ու սթափ պատասխանները, որոնք 1981 թուականին զետեղուեցին Բէյրութում լոյս ընծայուող դաշնակցական «Բագին» ամսագրի առաջին համարում:

Նոյն թուականին Գալշոյեանի «Մարութքայ սարի ամպերը» ներկայացուած էր ՀԽՍՀ պետական մրցանակի: Ահա կենտրոնական կոմիտէի քարտուղար Կ. Դալլաքեանը ահազանգում է Վ. Պետրոսեանին «Բագին»ում լոյս տեսած երկխօսութեան մասին (ողջ ամսագիրը գրողին է նուիրուած)՝ եւ պատճառաբանում, որ վերը նշուած ժողովածուն մրցանակ չահել չի կարող, որովհետեւ Գալշոյեանը «սահմանները» անցել է, չպահելով խորհրդային կուսակցական գրողի վարքագիծը:


Մնում էր դիմել սրան-նրան, որ պատմուածաշարը չահի մրցանակը: Ու, Ստեփան Պօղոսեանի միջամտութեամբ, Վահագն Դաւթեանը «Խորհրդային Հայաստան» օրաթերթում լոյս ընծայեց «Ներկայացուած է ՀԽՍՀ պետական մրցանակի» յօդուածը «Մարութքայ սարի ամպերը» ժողովածուի մասին: Ոտնձգութիւնները հարթելով ժողովածուն միայն ետմահու արժանացաւ ՀԽՍՀ պետական մրցանակը:

Ահա ընթերցողին ենք յանձնում այն զրոյցը, որը վարել է քաղաքացի, գրող ու հրապարակախօս Մուշեղ Գալշոյեանը («Գարուն», 1990, *թիւ* 6):

ԱԳՆԵՍ ՂԱՓԼԱՆԵԱՆ



Ստեփան Պօղոսեան



Վահագն Դաւթեան

«ՍԱՀՄԱՆՆԵՐԸ» ԱՆՑԵԼ Է…

Գիմացի էջին արտագրուած Մուշեղ Գալչոյեանի նշանաւոր «Զրոյց»ին պատմութիւնը իր սկիզբէն մինչեւ տպագրութիւնը ծանօթ էր մեզի, բայց տպագրութենէն ու տպագրեալ ձեւով Հայաստան մուտք գործելէ ետք տարտամ լուրեր միայն հասան հոս անոր արձագանգներուն ու հոն խոժոռած որոչ պաշտօնեաներուն մասին, որոնք, կ՚ըսէին լուրերը, սկսած են արգէն չարչարել ողբացեալ գրագէտին յիշատակը ու մտահոգիչ կացութիւններու մատնել իր պարագաները:

Ագնես Ղափլանեանի ստորագրութիւնը կրող նչմարը կու գայ հաստատելու, որ տարաձայնութիւնները իրական հիմք մը ունէին եւ առ այգ այս կողմերը բարձրացած վիվուկը այն կոզմէն հրահրուած էր նորէն, թէ՝ Մուշեղ Գալչոյեանը «սահմանները» անցել է:

Ի՞նչ էր պատահած եւ Գալչոյեան ո՞ւր անցած էր սահմանները: Պատահած էր ա՛յն, որ գրագէտը ընդունած էր Սարգարապատեան օրերու պատմական ճչմարտութիւնը ու յայտարարած անկէ բխած իր ճչմարտութիւնը, ըստ որուն՝ «Եթէ դաշնակցական կուսակցութիւնը չկարողացար մի փոքրիկ հանրապետութիւն ստեղծել, պետութիւն, անկախ մի պետութիւն, որ գոյութիւն ունեցաւ երկու տարի կամ աւելի պակաս՝ մենք առանձին հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէինք ունենայ, մենք կը լինէինք մարզ, աւտոնոմ հանրապետութիւն: … Ահա՛ այն մեծ բանը, այն, ինչը որ կատարեց Դաշնակցական կուսակցութիւնը եւ իրաւ պետութիւն ստեղծեց, այն էլ՝ 600 տարի յետոյ», *եւայլն:*

Ամբողջ պատմութիւնը այս էր, ու հետեւանքը այն՝ որ ուրուագծուած է Ագնես Ղափլանեանի համառօտագրած անըմբռնելի իրարանցումին մէջ…

Լ. ԿԱՄՈՒԱՐ

Յարգելի «Գրական թերթ»ի խմբագրութիւն, հօրս՝ Լեւ Կամսարի մահուան 25-ամեակի կապակցութեամբ ձեզ եմ ներկայացնում մի ֆելիետոն, որը բախտաւորչ է նկել երկիւարանի ամբողջ կեանքի համար (ընդհանրական իմաստով, ի հարկէ):

Ես սատանում էի թոշնել իմ յաղթանակից յետոյ, Լեւ Կամսարը լինելի մասին մի ֆելիետոն տպագրեց «Հորիզոն» թերթի 1918 թ.ի Մարտի 11ին համարում: Այդ չարաբաստիկ ֆելիետոնի արձագանգը հետապնդեց եւ հալածեց տարաբախտ երկիւարանին մինչեւ իր կեանքի վերջը: 20 տարի բանտ եւ աքսոր, զրկանքներ, հալածանք, բռնութիւն, երկու անգամ գրական արխիւի բռնագրաւում Զեկայի կողմից (ի դէպ՝ մինչեւ օրս չի վերադարձուած):

Ստալինի մահից յետոյ ռեաբիլիտացուեց, սակայն «Հորիզոն»ում լոյս տեսած ֆելիետոնի ուրուականը չարունակում էր հալածել նրան: Զէին տպագրում նրա գործերը, կենսաթոշակ չէին նշանակում, աշխատանք, բնակարան չէին տալիս՝ պատճառաբանելով այն «մեղքը», որ նա գործել էր Լենինի հանդէպ:

Ֆելիետոնի հետ ձեզ եմ ներկայացնում նաեւ մի քանի գործեր, որոնք ամբողջացնում են նրա վերաբերմունքը խորհրդային տոտալիտար վարչակարգի հանդէպ («Գրական թերթ», 1990, թիւ 45):

ԱՇՈՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ՅԱՐԻՆ ՆԱՄԱԿԸ ՈՒԼԵԱՆՈՎ — ԼԵՆԻՆԻՆ

Աֆսորական ցարը ընդարձակ նամակ մըն է ուղղեր Լենինին, որմէ հաղուագիւտ կը բերենք հետեւեալը.

Սիրելի Լենին, գաղափարակից ընկեր իմ,

Սրտի անհուն բերկրութեամբ օրը օրին կը լսեմ գործերուդ մասին: Իմ կալանաւորուելէս ի վեր միշտ այն մտահոգութիւնն ունեցած եմ, թէ ինծի յաջորդ մը կրնա՞յ աքսոր երթալէս առաջ. հիմա ուրախ եմ, որ դուն իմ տեղս ան-

ցած պրծա կը չտեսնակս ամենայն հարատարս խնամք: Աւանձնապէս հաճոյք պատճառեց ինձ Ռուբցեւ ի ձերբակալութենդ: Ամուր բռնէ առար, առ խստրկին, որս ամրողջ պրծը եղած է մխապետական պատանիքներր անքաղաքավարօրէն հրատարակելուն մէջ: Եթէ յաջողի քեզի կերենակին բռնել, յուր առ ինձի. սիրտս բառական պիտի թեթեւի իմ ախոյեանին կալանաւորման ի աես: Անոր կախէ անպատճառ:

Ներիր ոս հարցմանս. դուն եթէ այդքան մօտիկ էիը իմ պատասխանութս, ինչո՞ւ իմ իշխանութենս օրօք քեզի հետս կը պահէիր ինձմէ ու չէիր պրծակցեր ինձի: Եթէ իմ պահպնկէցութենս օրը դուն Ռուսաստան ըլլայիր, պիտի ար այս փորձանքը չպիտի պար պլխուս: Ինչեւէ, ես հիմա երջանիկ եմ անով, որ իմ վրէժիս հատուցումը քո վստահելի ձեռներուն է յանձնուած: Դուն լիապէս կրնաս օգտուել իմ կազմած պատանի ոստիկանական կազմէն, որք պուցէ քայքայուած ըլլան քիչ մը, բայց եթէ վերակազմելու ըլլաս՝ քեզի անպնահատելի ցուցմունքներ կրնան ընել:

Պուրիչկեւիչը ո՞ւր է հիմա, անոր կամ Մարկով 2ին պտիր, անոնց հետ կրնաս սրատարած ըլլալ; անոնք իմ եւ, հետեւաբար, քո բարեկամներն են:

Լսածովս դուն յանցաւորները կը պնդակահարես. ես կը կախէի սովրարար: Միայն սա կէտին մէջ ես ու դուն կը տարբերուենք իրարմէ, բայց ատիկա մանր ատքաբնական խնդիրը մըն է, որ չի կրնար մեզի իրարմէ բաժանել: Մեր երկուսիս ալ նպատակն էյեղափոխականները ջնջել, ըլլայ կախաղանով կամ պնդակով — սա միեւնոյն է:

Դուն քեզի կոմիսարներու նախադահ անունը առած ես: Պէտք է ըսել, որ այնքան ալ յարմար անուն մը չէ ատիկա, ցար կոչուել աւելի լաւ է, քան կոմիսար: Թէեւ, ըսենք, քանի որ պաշտօնները միեւնոյն են, անունը ինչ կ'ուզէ թող ըլլայ, միայն ըսել կ'ուզեմ, որ ինձի ցար ախազոսը աւելի ախորժելի կուգայ, քան կոմիսար:

Կարդացի Գվոզդեւին նամակը: Որպէս թէ իմ սանն եօթն անգամ ձերբակալուեր է ու իմ պատճառած տանջանքները քոնի հետ համեմատած անմեղ կատակները են եղեր...: Ա՛ս այս կու գամ յայտնելու, որ ատիկա անպատկառութիւն է, որը կու գայ իմ պատիւս արատաւորելու: Ես ամէն անգամ քաջարար պատժած եմ յանցաւորները եւ նոյնքան խիստ, որքան դուն. միայն սա կայ, որ իրաւ է, ես բանտին մէջ մարդիկ չէի մերկացներ, բայց ատոր փոխարէն ես ալ անանկ բաներ կ'ընէի, որ դուն չես ըներ: Գվոզդեւ եւ նմանները կ'ուզեն ցուցնել, որ մենք որպէս թէ տարբեր ուղղութեամբ ենք գործեր, բայց կու գամ յայտարարելու, որ մեր երկուսիս գործունէութենց մէջ մազաչափ տարբերութիւն անգամ չկայ: Ես Շմիթը գնդակահարեցի, դուն Եունկէրները, ես Սպիրիդոնաւան բռնաբարեցի, դուն՝ կանանց բատալիոնը: Ես ալ կամեցայ հաշտուել գերմանացոց հետ, դուն ալ կ'ուզես նոյնը ընել... Ա՛հ, ա՛հ... սիրելի Ուլեանով, սիրտս լեցուած է անհուն կսկիծով, կ'ուզեմ բանալ տոչեւդ, բայց գրիչս չի պօրեր...

Ուրիշ ինտո՞ր ես: Տիկինդ ինչպէ՞ս է: Եթէ Ռասպուտինը ողջ ըլլար, անշուշտ կ'ուրախացնէր տիկնոջդ. ինչպէս ժամանակին ուրախացուց կնկաս:

Սլատապին բարեւներով՝ քո ՆԻԿՈԼԱՅ:

Յ.Գ.— Իրաւ մոռցայ ըսելու. չէ՞ր կարելի հրամայէիր, որ Պետրոպրատ գայի ես, կարծեմ այլեւս անձիս համար վտանգ մը չկայ, քանի որ բոլոր յեղափոխականները բանտն են լեցուած: Յամենայնդէպս՝ այս կէսը քո ուշադրութեանը կը յանձնեմ: Եթէ դա վազաժամ կը գտնես՝ հոգ չէ, քանի մը օր ալ կը սպասեմ:

ԼԵՒ ԿԱՄՍԱՐ



ԹՈԹՈՎԵՆՑ
ՎԱՀԱՆ

★ 1936 թուականի վերջերից Վահանը Հայպետհրատի յանձնարարութեամբ թարգմանում էր Շեքսպիրի ողբերգութիւններից երկուսը՝ «Ութելլոյ Մորը» եւ եթէ չեմ սխալւում՝ «Անտոնիոս ու Կլէոպատրա»ն: Աշխատանքն աւարտելուց յետոյ, զանազան գբիլների վայրահաչոցին տեղիք չտալու համար, ընդդեմ՝ որ իր աշխատանքները մի անգամ էլ համեմատենք ֆրանսերէն թարգմանութիւնների հետ: Հաճութեամբ համաձայնեցի, եւ գրեթէ ամէն օր Վահանը գալիս էր իմ բնակարանը, որ նախկինը չէր, ոչ էլ արդիական, բայց չատ աւելի ընդարձակ էր: «Ութելլոյ»ի մէնք աւ արանցինք եւ պատրաստւում էինք ձեռնամուխ լինել միւս պիեսին, երբ պատահեց սոսկալի աղէտը...: Վահանին ձերբակալեցին: Ձեռագրերն ու ֆրանսերէնը մնացել էին ինձ մօտ: Կարծեմ երկու չաբաթ անց փողոցում հանդիպեցի Վահանի որդուն՝ Լեւիկին, տարայ նրան մեր տուն ու յանձնեցի թարգմանութիւնները՝ խորհուրդ տալով ներկայացնել Պետհրատին: Այդպէս էլ կարծեմ արել էին, բայց 1937ին, երբ Պետհրատի արխիւից վանդալաբար հանւում ու ոչնչացւում էին ձերբակալուած հեղինակների երկերն ու ձեռագրերը, կարծում եմ, որ Վահանի այդ թարգմանութիւնները նոյն տխուր բախտին էին արժանացել («Նորք», 1990, թիւ 10):

ՎԱՀԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԹՈԹՈՎԵՆՑԵԱՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹՒՆ

Համայնավարութեան ոչնչացուցած կարկառուն անհատներուն հետ, նոյն բռնութեան կողմէ ֆիզիքապէս ու բարոյապէս ոչնչացուեցան նաեւ անոնց հետ անմիջական կապ ունեցող էակներէն չատերը, հայր, որդի, կին, եղբայր: Յաճախ չխնայուեցաւ նոյնիսկ անոնց հեռաւոր տոհմակիցներուն ու մտաւորական բարեկամներուն:

Այդ դժբախտ զոհերուն ամէնէն դժբախտ ընտանիքներէն մէկը եղաւ Վահան Թոթովենցի ընտանիքը, «Նրա գեղեցկուհի կինը՝ Լուսիկը» եւ միամօրիկ զաւակը, Լեւոն: «Բագին»ի հին թիւերէն մէկուն մէջ մենք ներկայացուցած ենք վկայութիւն մը այն մասին, թէ ինչպէս մահասարսուռ մուրճ ու մանգաղին տակ մայր եւ որդի Թոթովենցները գացին ու բանտի տոմարներուն մէջ արձանագրեցին իրենց հրաժարումները, մէկը՝ «ժողովուրդի թշնամի» իր ամուսինէն, միւսը՝ «հայրենիքի դաւաճան» հօրմէն:

Դեռ մինչեւ երէկ, նման արարքները գաղափարական հակառակորդներու յերիւրանք կը թուէին հեռուէ հեռու ճորտացած չատերուն, բայց այսօր արդէն հայրենի մամուլին մէջ գիրար կը հրմշտկեն նման փաստերը, որոնցմէ մէկը արտագրուած է քիչ անգին, Գէորգ Էմինի նչմարին մէջ, Թադեւոս Ավդալբեկեանի եւ անոր որդւոյն կապուած...

Լուսիկ եւ Լեւոն Թոթովենցներու կենսագրութեան վերջին էջերը հայրենի լայն հասարակութեան յայտնի դարձան միայն վերջերս, իսկ ծանօթ պաշճառներուն հետեւանքով արտասահմանի ընթերցողներէն քիչերը միայն ծանօթ են անոնց եւ ճիշդ այդ պատճառով յարմար դատեցինք Թոթովենցի կորսուած ձեռագիրներուն հետ հաղորդել նաեւ որդւոյն կորուստը եւ հրաշքով վերապրած սգակիր նահատակին կենսագրութիւնը...



ԼԵՒՈՆ ԹՈԹՈՎԵՆՑ

■

...Այստեղ յուշատախտակին փորագրուած Լ. Վ. Թոթովենց ազգանուան հետքերով գտնում ենք Լեւոնի մօրը՝ աիկին Լուսիային: Բորբոքում է հին վէրքը, եւ վաստակաչատ մանկավարժը մեզ է տրամադրում Լեւոն Վահան Թոթովենցի անձնական արխիւը: Դեղնած, եռանկիւնի այդ նամակներում տրոփում է պատանեկան ռոմանտիկայով հարուստ, հայրենանուէր եւ նուրբ մի սիրտ:

Թղթապանակը բացւում է Վահան Թոթովենցի՝ որդուն նուիրուած քառեակով.

Նստիր իմ ծնկին, մանուկ ոսկեթել,
Նստիր ու շողա՛, ծաղիկ ոսկեթել,
Իմ սրտից արդէն արիւն է կաթում,
Դու բարձր նչա՛, մանուկ ոսկեթել:

Մի ուրիշ թղթի վրայ հազիւ ընթեռնելի քառեակներից մէկը եւս նուիրուած է միակ տղային եւ սկսում է «Երգիր, իմ մանուկ, իմ կապուտաչեայ» տողով: Ապա՝ նամակների «հեղեղ», ամէն մի նամակ իսկական մի ակնարկ է, մի նովել, մի բանաստեղծութիւն, որը գրուել է 18րդ բանակի 318րդ գիվիզիայի մարտիկ Լեւոնը Նովոռոսիյսկից՝ Մալայա Զեմլեայից, Գելենջիկից, Կերչից, Սոխումից, Տուապսէից...

Լեւոն Թոթովենցը (ծն. 1924 թ.) սովորել է Երեւանի Կրուպսկայայի անուան ցուցադրական դպրոցում, 8րդ դասարանից տեղափոխուել Գեղարդ տեխնիկում, սիրում էր կլարինետ նուագել ու նկարել, մասնակցում էր աչակերտական նկարչական ցուցահանդէսներին:

— Սիրուն Լեւոն էինք ասում, — պատմում է Մեծ հայրենականի մասնակից, Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Սուրէն Սաֆարեանն ու աւելացնում: — Նատուրմորտներ, դիմանկարներ եւ գրաֆիկական աշխատանքներ նկարելիս Լեւոնն անմրցելի էր...

Ձեռքիս տակ են մի քանի էսքիզներ, եւ բոլորն էլ Լեւոնի ուսուցիչներ Մ. Աբեղեանի եւ Բ. Քոլոզեանի ստորագրութեամբ գնահատած՝ «Գերազանց»: «Բնանկար», «Դիմանկար», «Նատուրմորտ» եւ պահպանուած մի քանի այլ աշխատանքներ վկայում են, որ մենք այսօր կ'ունենայինք տաղանդաւոր մի նկարիչ, եթէ կերչում դեսանտայինների համար մակոյկով դեղորայք տեղափոխելիս, թշնամու արձակած արկի բեկորից կոնտուզիա չստանար եւ 19 տարեկան հասակում, 1943ի Նոյեմբերին չզոհուէր Լեւոն Թոթովենցը («Սովետական արուեստ», 1978, *թիւ* 12):

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԼՈՒՍԻԿ ԹՈԹՈՎԵՆՑ

Աբովեան փողոցի ներկայիս N° 32 չէնքը՝ (որը երեւանաբնակների մէջ աւելի յայտնի էր «Նուպար փաշայի չէնք» անունով) կառուցման նիւթական հովանաւորի ցանկութեամբ 1935 թ. բնակեցուեց հիմնականում Երեւանում ապրող գիտութեան, արուեստի, դրականութեան աչքի ընկնող երախտաւորներով: Նրանցից մէկն էլ վահան Թոթովենցի ընտանիքն էր:

Ի տարբերութիւն խանդավառ, մէկէն բռնկուող, աղմկոտ Թոթովենցի, նրա գեղեցկուհի կինը՝ Լուսիկը, որն այդ տարիներին Երեւանի երաժշտական անդրանիկ դպրոցի տնօրէնուհին էր, եւ որի աւանդած խազերգութեան եւ երաժշտութեան տարրական տեսութիւն առարկաների ունկնդիրն էի նաեւ ես, լռակեաց էր եւ խստաշունչ:

Այնքան գեղեցկատես էր, որ շատ շուտով դարձաւ յիշատակուած չէնքի առաւել ուշարժան վկայութիւններից մէկը: «Էն սիրուն Լուսիկի չէնքը» մատնացոյց էին անում Պօղոս Նուպարի չինութեան գրկից՝ Աբովեան փողոցի միւս բնակիչները:

Կովկասցի կանանց բնորոշ՝ թուխ ու սեւաչեայ հայուհու հակապատկերն էր Լուսիկը, սպիտակամաշկ, բաց չագանակագոյն մազերով: Մի փոքր խստադէմ, թաւ, կանանց մէջ սակաւ հանդիպող ալտ թաւշէ ձայնով:

Լուսիկ Թոթովենցի Երեւանում ծաւալած երաժշտա-հասարակական բուռն գործունէութեան վերաբերեալ որոշ պատկերացում ունենալու համար բաւական է բերել երկու փաստ:

Իր տնօրինած՝ Ալ. Սպենդիարեանի անուան կրող դպրոցում նա հիմնեց (Հայ երաժշտարուեստի պատմութեան ընթացքում առաջին դէպքը) ՄԱՆԿԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՈՒԱԳԱԽՄԲ: Ծորդորեց, պահանջեց եւ, ի վերջոյ, հասաւ այն բանին, որ 1935 թ. Երեւանում առաջին անգամ անցկացուեց չնորհալի պատանիների (երաժշտութիւն, ասմունք, նկարչութիւն, քանդակագործութիւն) հանրապետական մրցոյթ-ստուգատես:

* * *

1936 թ. «Ժողովրդի Թշնամի» ամուսնու ձերբակալուելուց շատ չանցած բանաարկուեց նաեւ այդ սքանչելի տիկինը: Նրա բազում քոյրերը պաասպարեցին Լուսիկի մխակ որդուն, գեղեցկութեան տիպար, բազմաչնորհ Լեւոնին, որը հինգ տարի անց, պատերազմի օրերին, խեղդուեց Կերչի ծովախորշում...

Ի զարմանս շատերի, բարեբախտաբար, տարիներ անց, Լուսիկ Թոթովենցը ազատ արձակուեց եւ կրկին ինքնամոռաց նուիրուեց երաժշտութեան մանկավարժութեան ընագաւառին:

Ամուսնացաւ դեռ երիտասարդ տարիներից իրմով գերուած ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղեանի հետ: Վերջինիս կողմից 1939 թ. «Սասունցի Դաւիթ» հազարամեակի օրերին էպոսի պատկերազարդ հրատարակութիւններում վրձնած Խանգութ խանումի կերպարում անչափ նշմարելի էին գեղեցկուհի Լուսիկի դիմագծերը...

Վախճանուեց խոր ծերութեան հասակում («Առագաստ», 1991, թիւ 9):

Ծ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ



Ծ. Համբարձումեանի ստորագրութիւնը կրող վերի կարճ գրութիւնը հաւանարար ընթերցողին մտքին մէջ կազմեց Լուսիկ Թոթովենցի դիմադիծը, միաժամանակ տեսանելի դարձնելով անոր արտաքին ու ներքին բարեմասնութիւններուն հետ նաեւ եոսխաւ տառապանքը:

Մտադրած էինք իր եւ երկրորդ ամուսնոյն պատկերները քով քովի դնել այս էջին վրայ, բայց հնարաւոր չեղաւ մեզի գտնել «այդ սքանչելի տիկինին» նկարը: Աւիկա պատճառ մը չեղաւ սակայն, որ մէկ կողմ դնենք երկրորդը, լուսապատճէնը անուանի նկարիչ Մհեր Աբեղեանի, որուն ազնուութեան ու արուեստին վրայ լոյսի պզտիկ շերտ մը չէ, որ կը նետէ՝ «Հայրենիքի Թշնամի» դրուագէտի մը կնոջ հետ ամուսնանալու «մեղքը» գործած, պիտ ըսէինք անոր աչք դառնալու յանդգնած ասպետական վարքին վրայ...

Բագին

ՆՈՅՆ ԽՈՒՑԻՆ ՄԷՋ ՈՒ ՎԱԽՃԱՆՈՎ ՆՈՅՆ

«Գարուն» ամսագրի ծանօթագրութեան մէջ յիշուած ու քիչ անգին արուած գրութիւնը ստորագրող այս անունը, Թադեւոս Ավգալբեկեան, մեզի ծանօթ գարձաւ այն օրէն, երբ Գուրգէն Մահարիի «Մաղկած փշալայր օր»ուն մէջ եղած ակնարկութենէ մը մեկնելով ստուգեցինք, թէ ինքն է Քարլ Մարքսի «Քափիթալ»ը հայերէն թարգմանած առաջին հայ մտաւորականը, ինք՝ որ Մահարիի հաւաստիացումով այնքան անողոք վերաբերումի մը ենթարկուած էր իր ուսանողներուն կողմէ: Այն ատեն մեզի համար դեռ անյայտ կը մնար իր ճակատագրին վախճանական փուլը, որ պարզբւեցաւ Երեւանի մէջ լոյս տեսած «Մեր աւուանի դասախօսները» անուն կենսագրականներու հաւաքածոյին մէջ. թէ «Պրոֆեսոր Թադեւոս Ավդալբեկեանի կեանքը ընդհատուեց 1937ին»:

Մարքսիստ մտաւորական Թադեւոս Ավգալբեկեանէն քիչ անդին արտագրուած գրութիւնը, որ լոյս տեսաւ 1990ին, գրուած է Թիֆլիս, 20 Նոյեմբեր 1917ին:

Այս փաստը ինքնին կը բաւէ՝ հաստատելու համար, որ ան, Թադեւոս Աւդալբեկեան, ո՛չ միայն Մարքսի «Քափիթալ»ը հայերէն թարգմանած առաջին մտաւորականը եղաւ մեր մէջ, այլեւ Մարքսի անունով երդում ընող համայնավարութեան էութեան թափանցած առաջին խորամիտներէն մէկը, այն համայնավարութեան, որուն բռնակալական վարքագիծը մեր մտաւորականութեան ու քաղաքական գործիչներու ջախջախիչ մեծամասնութեան, ինչպէս նաեւ պարզ աշխատաւորներուն ու պարզամիտ գիւղացիներուն տեսանելի դարձաւ 1920 Գեկտեմբերէն 1921 Փետրուարի կէսերուն միջեւ ինկած ժամանակահատուածին, իսկ անկէ ետք հեռուները ազդող կամաւոր կոյրերը միայն չտեսան անոր ճիւաղային դէմքը ու վարձկաններ միայն ժպրհեցան արդարացնել գործած ոճիրները:

Համայնավար կուսակցութեան յաղթանակին արիւնոտ հետեւանքները առաջին օրէն կռահելու չափ արթնամիտ ուժ՝ Թադեւոս Ավդալբեկեան ինք եւս ենթարկուեցաւ կարմիր բռնակալութենէն առաջ կազմաւորուած մտաւորականներուն դժնդակ ճակատագրին, գուռ բանալով չարունակուող ողբերգութեան մը, որուն մէկ երեսին ընթերցողը հանդիպեցաւ դեռ վերջերս, «Գարուն» ամսագրին մէջ, Գէորգ Էմինի գրիչով.

«Քանի՛-քանի՛ երիտասարդներ եւ նոյնիսկ պատանիներ՝ ուսանողներ, աշակերտներ ու երիտասարդ մասնագէտներ են ստիպողաբար, գրաւոր կամ բանաւոր երաժարուե՛լ իրենց բանտարկուած հօրից կամ մօրից, եղբօրից կամ քրոջից, մօտիկ ընկերոջից ու բարեկամ-ազգականից, դատապարտել նրանց որպէս «ժողովրդի թշնամի» եւ երդուե՛լ, որ նրանց հետ կապ ու նամակագրութիւն չունենն, *որպէսզի փրկուեն բանտի կամ աքսորի վտանգից կամ հնարաւորութիւն ունենան շարունակել իրենց ուսումն ու աշխատանքը...*

«Թէեւ լինում էին նաեւ դէպքեր (ճիշտ է՝ հազարի՛ց մէկ), երբ նրանք ազնուութիւն ու քաջութիւն էին ունենում ընդդիմանալ իրենց հարազատին մեղադրելու կամ նրան ուրանալու այդ ստո՛ր եւ անբարոյակա՛ն հրապարակային ծէսերին, *ինչպէս այդ արեց, օրինակ, պոլիտեխնիկական ինստիտուտի մեր ուսանող-գասընկեր* Մարտիկ Ավդալբեկեանը՝ *այն* [redacted] *րիններին բանտարկուած եւ «ժողովրդի թշնամի» համարուող յայտնի մարքսիստ եւ Մարքսի «Կապիտալ»ի թարգմանիչ* Թադեւոս Ավդալբեկեանի *տղան, որը ժողովում նոյնիսկ յանդգնութիւն էր ունեցել յայտարարել, թէ* «սրիկա ո՛չ թէ իմ հայրն է, այլ նրա՛նից, ովքեր ստիպում են ինձ իմ հարազատ հօրն ուրանա՛լ»: (*Նրան, երեւի ի՛նչ-ի՛նչ պատճառներով «չհասցրի՛ն բանտարկել», եւ նա հետագայում հերոսի մահով զոհուեց Հայրենական պատերազմում...*» («Գարուն», 1989, *թիւ* 8):

Թադեւոս Ավգալբեկեանի կենսագրութեան դժբախտ գիծերուն մեզի ծանօթ բաժինը ամբողջացնելու համար կարդանք նաեւ Ալազանի յուշերէն քանի մը պարբերութիւն, արտագրուած դարձեալ «Գարուն» ամսագրէն.

«Ամիսն ու օրը չեմ յիշում, մեր խուցը եկաւ բարձրահասակ, թիկնեղ, խիտ ու վեր ոլորուած բեղերով մի մարդ:

«— Վա՛յ, դո՞ւն ալ եկար,— բացականչեց Գրիգոր Վարդանեանը:

«Նորեկը Զարեհցի էպիկական հերոս խըմբապետ Շաւարշն էր (Շաւարշ Բասենցեան):

. . . . . .

«Յուլիսի կէսերին էր, խցի դուռը բացուեց

եւ ներս մտաւ Թադեւոս Ավդալբեկեանը, մի մեծ կապոց գրկած, շրեպապաճիֆ դրած: Նա, որ երկար տարիներ տճնաջան աշխատանճով, գերմաներէն բնագրից հայերէն թարգմանեց Մարքսի «*Կապիտալ*»ը:

«Խմբապետ Շաւարշը նրան մօտենալով՝ ասաց.

«Ա, Թադեւոս, ճեզ էլ բերեցինք, շատ լաւ արեցինք, շաա ուրախ եմ, որ ճեզ իմ կողմից եմ տեսնում: Մի ճանի տաճկահայ երիտասարդներ էինք մնացել, որոնք ռուսերէն չիմանալով «*Կապիտալ*»ը չէինք կարող կարդալ: Նստեցիր, չարչարուեցիր, թարգմանեցիր, որ էդ անմեղ երիտասարդների մտքերն էլ պղտորես... Էս էլ ճո վարձատրութիւնը: Դէ, ճո Մարքսին ու Էնգելսին կանչիր, որ գան ճեզ ազատեն: Յիշում ես՝ մեր կառավարութեան ժամանակ ինչ ճան մեզ ճնճադատեցիր, ոչ ոք չասեց, թէ աչքիդ վերեւը ունճ կայ, հիմա տեսնենճ՝ ճո մարքսիստները ո՞նց կը վերաբերուեն ճեզ...

.....

«Գիշերուայ ուշ ժամ էր, խցից տարան Թադեւոս Ավդալբեկեանին ու խմբապետ Շաւարշին: Նրանճ այլեւս չվերադարձան:

«Պարզ էր, թէ այդ ժամին ուր տարան, ցաւալի էր, բայց ինչ արած» (1989, *թիւ* 2):

«Նոյն խուցին մէջ եւ ճայնատախտակով նոյն» ըսինք:

Նոյն, անշուշտ, համայնավարութեան կամայականութեամբ, մանաւանդ նոյն խուցը թխմուելէ եաք, վախճանական իրենց ողբերգութեամբ: Անկէ առաջ, գաղափարական իրենց արեւելումով թէ գործքով նմանութեան



ոչ մէկ եզր ունէին անոնք, չէին կրնար նմանութեան եզրեր ունենալ, տրուած ըլլալով, որ մէկը մարքսիստ էր, միւսը՝... մաուզէրիստ: Բայց տուեալ պահուն, նոր մարդ ստեղծելու ցնորքին անճնատուր համայնավարութիւնը, որ տարբերութիւն չէր դներ մարքսիստին ու մաուզէրիստին միջեւ, նոյն մեղքով խարանեց վասն հայրենեաց ու ժողովուրդին ճգնած ու արիւնած բոլոր երախտաւորները ու նետեց իր «մսաղացին» մէջ...



ԽՄԲԱՊԵՏ ՇԱՒԱՐՇ

Հայոց ազգային պայքարի գործիչներից էր Շաւարշ Բասէնցեանը (Զարէնցի «Խմբապետ Շաւարշը» վիպերգի հերոսը, 1874–1937): Կրթուել է Գէորգեան ճեմարանում եւ Շուշուայ թեմական դպրոցում: Աստիճանաբար ներգրաւուելով հայ քաղաքական կեանքի մէջ, 27 տարեկանում արդէն Հ.Յ.Դաշնակցութեան Կարսի կենտրոնական բիւրոյի անդամ էր:

1912–13 ԹԹ. Շաւարշ Բասէնցեանը սովորում է Բուլղարիայի Թագաւորական ռազմական ճաճոում եւ մնծանուն հայդուկապետ Քեռու կամաւորական ջոկատի կազմում, իբրեւ հարիւրապետ մասնակցել է Բալկանեան պատերազմին: Յետոյ Հայաստանում իբրեւ խմբապետ մասնակցել է 1915–1918 ԹԹ. կռիւներին («Լուսաւորիչ», 1990, թիւ 7):

Ա. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Թ. ԱՎԴԱԼԲԵԿԵԱՆ

ՎՐԴՈՎՈՒԵԼՈՒ ԱԻԵԼԻ ՄԵԾ ԱՌԻԹ ԿԱՅ

Հայ ժողովրդի ինքնորոշման խնդիրն ու ընդհանրապես Հայոց Դաշը իսկապես «մի հին պատմութիւն է, որ մշտապես նոր է մնում»: Մեծ ակրութիւնների եւ Ռուսաստանի դիւանագիտական խաղերը, հայերի այս կամ այն կողմնորոշման հարցը, ինչպես նաեւ բոլշեւիկների կողմից «յեղափոխութիւնն արագացնելու» վտանգը, որոնք այսօր բուռն քննադատութեան են ենթարկում, չաների կողմից են գիտակցուել ժամանակին, ոմանք էլ ահազանգել եւ զգուշացրել են:

Որպէս դրա վկայութիւն ներկայացնում ենք Թադեւոս Ավգալբեկեանի անձնական հարուստ արխիւից ընտրուած երկու յօդուած, որոնք կարծես այսօր գրուած լինեն:

Թ. Աւգալբեկեանը հայ առաջին մարքսիստներից էր, «Կապիտալ»ի հայերէն առաջին թարգմանիչը, խոշոր տնտեսագէտ, զնդակահարուել է 1937 թ.-ին («Գարուն», 1990, թիւ 5):

20 Նոյեմբեր 1917, Թիֆլիս

Շատերը վրդովւում են, կարդալով այն բռնութեան մասին, որ բոլշեւիկ զինուորները կատարել են հիւանդ պառկած Պլեխանովի վերաբերմամբ Ցարսկոյէ–Սելոյում: Այս զայրոյթն, ի հարկէ, արդար է: Ո՞ր սոցիալ–դեմոկրատը, ո՞ր սոցիալիստը կամ նոյնիսկ ո՞ր ազնիւ դեմոկրատը չի յուզուի, տեսնելով, թէ ինչպէս ծերացած առիւծն ենթարկւում է առակի միւս հերոսների սմրակի հարուածներին, հերոսներ, որոնք նրան նախատել են եւ միմեանց հետ ստորութեան մէջ մրցելով բացականչել· (ռուսերէն նայնպէս է):

Բոլշեւիկ զինուորներն իրենց համար են սմբակակոծ արել Պլեխանովին, թէ իրանց թաղուած մեծերի հրամանով — այս դեռեւս յայտնի չէ, բայց եւ այնպէս կարծում եմ, որ որքան էլ մեծ լինի մեր յարգանքը դէպի մեր մեծ ուսուցիչը, այնուամենայնիւ չպէտք է մոռանանք, որ այժմ վրդովուելու աւելի մեծ առիթներ կան, ուստի եւ՝ պայքար պէտք է մղենք ոչ թէ անձնաւորութիւնների եւ մանր դէպքերի չուրջը, այլ հասարակական ընդհանուր բնոյթ ունեցող երեւոյթների ու մանաւանդ աշխարհահայացքների չուրջը:

Ինքը՝ Պլեխանովը, բանուորական եւ զինուորական համառուսական առաջին համագումարում, այս տարուայ Յունիսի 9ին արտասանուած ճառի մէջ՝ կարծես թէ նախազգալով ապագան ու խրատելով վրդովւողներին ասում է·

«Իմ այն հայեացքների պատճառով, որ ես ունեմ յեղափոխութեան ու պատերազմի ընթացքում յեղափոխութեան խնդիրների մասին, ինձ վրայ շատ են տեղացել մեղադրանքներ, որ երբ յիշում եմ, ամաչում եմ ոչ թէ իմ, այլ նրանց աեղ, որոնք այն մեղադրանքներով իմ դէմ են դուրս գալիս: Սակայն, ընկերներ, պէտք է ասեմ, որ ես երբեք չեմ վրդովուել այն մեղադրանքներից: Նոյնիսկ իմ մօտիկ բարեկամներս երբեմն գալիս էին ինձ մօտ եւ ասում, որ յեղափոխական բանակի հակառակորդներս աշխատում են ինձ համար վատ համբաւ ստեղծել: Այս առթիւ ես Դանտոնին եմ յիշում: Մի անգամ ֆրանսիացի մեծ տրիբունի մօտ եկան նրա բարեկամներն եւ ասացին· «Ձեր թշնամիներն ուզում են Ձեր անունն արատաւորել»: Այս խօսքերին նա այսպէս պատասխանեց· «Ինչի՞ս է պէտք իմ անունը· թող արատաւորեն այն, միայն թէ Ֆրանսիան ազատ լինի»: Ես էլ, ընկերներ, ճիշտ նոյնպէս կ'ասեմ· «Թող արատաւորեն իմ անունը, միայն թէ յաղթանակի ռուսական յեղափոխութիւնը»:

Այժմ հենց այս յեղափոխութիւնն են արատաւորել ոմանք: Եւ մենք, հաւատարիմ մնալով մեծ յեղափոխականի խրատին, պէտք է պրպտենք ո՛չ թէ նրա անձով, այլ՝ նրա իղէալով, ռուսական յեղափոխութեան յաղթանակներով, որին ամենամեծ վաստակն է սպատնում:

Բոլշեւիկների պատրիարքը, որ մինչեւ այժմ իր վրայ բռնած ծանրածանր մեղադրանքներից ազատուելու համար խուսափում էր հանրապետութեան ազատ դատարանից եւ նկուղներում էր թաքնւում, այժմ յենուած ճորտութիւնից նոր ազատուած միամիտ, թշուառ ու մոլորուած մի որշ լսարմութեան վրայ՝ արդէն ախրացել է հրապարակին: Զախակոզմեան այս մատաղուց օգտուելով, եռանդուն գործի են կպել ցարի գազազած հաւատարիմները ու կայզերի խորամանկ Արգուսները, որոնք, խառնուելով ամբոխին, առն են աալիս սրա արամադրութիւններին եւ ի խորոց սրտի ցնծութեամբ ազազակում. «Կորչե՛ն հին յեղափոխականներն ու Մարսի յեղափոխութիւնը, կորչե՛ն ազատութիւնները ու կեցցէ՛ դիկտատուրան»: Հաստատուել է երազած դիկտատուրան, որը ո՛չ թէ աջնոզ բազմութեան դիկտատուրան է, այլ՝ մի քանի-բոնակալների, որոնք կոյր երկրպագուներին՝ օրօր, իսկ զգօն հակառակորդներին աեռոր կարդալով, լոյս են ընծայում չտապելով իրենց անարժէք դեկրետները: Դեմոկրատական ամօթխածութեան ամենափոքրիկ նշոյլ ունեցող բոլշեւիկներն էլ արդէն հեռացել են գործից՝ ռուսական հանրապետութեան սայլը թողնելով խոր ու ադմոս փոսի մէջ, որից այն հանել չեն կարողանում անանկացած հոսանքի զուգանուն եռապետները — Ուլեանով Լենինը, Բրոնշտէյն Տրոցկին ու Զուդաշվիլի Սաալինը:

Եւ ահա այս եռապետութիւնը, մոռանալով դեմոկրատիզմի ամենատարրական սկզբունքները՝ կատարում են ամենազազրելի մի գործ — ձգտում են արգելելու դեմոկրատիայի կամքի ազատ արտայայտութիւնները: Շատ են փաստերը. մտաբերեցէք մի քանիսը միայն: Յիշեցէք, որ նրանք ծրագրում են համուլի բացառիկ օրէնքներ՝ յայտարարելով, թէ համուլի ազատութիւնը մանր-բուրժուական մոլութիւն է: Յիշեցէք, որ Նոյեմբեր 6-ին նրանք թոյլ չտուին, որ գումարուի Մոսկուայի քաղաքային Դուման, որ ընտրուել է յեղափոխութեան օրերում եւ այն էլ աշխարհիս երեսին գտնուած ընտրողական սիստեմներից ամենադեմոկրատ միջոցով: Եւ վերջապէս յիշեցէք ամենապըլխաւորը, այն, թէ որքան մօտ էր Սահմանադիր ժողովի գումարումը, երբ հանրապետութեան պառլամենտի անդամները պէտք է յայտնէին ժողովրդի կամքը բոլոր կենսական խնդիրների մասին, սակայն եւ այնպէս այս դեմոկրատ ձեւացողները երկիւղ կրելով, թէ Դեմոսի ձայնը կարող է յօդուտ իրանց ցնորքների չլինել, սկսեցին վաղաժամ ու ապարդիւն քաղաքացիական կռիւը: Նրանք չսպասեցին մի երկու շարաթ էլ, մտածելով, որ առանց ժողովրդի հաւանութեան էլ կարող են ինքնակոչ բարերարներ հանդիսանալ եւ մոզական դաւաղանի մի հարուածով բանուորութեան ու գիւղացիութեան առաջ փռել կախարդական սփռոցը, որի վրայ չարուած կը լինեն թէ՛ հոգ ու աղատութիւն, թէ՛ հաց ու խաղաղութիւն, թէ՛ սոցիալիզմ ու երջանկութիւն եւ թէ մա՛նաւանդ՝ ժողովրդի միակ ու միակ բարեկամների անթառամ պսակներ...

Հին խմաստուն ու մարդարէական խօսք է, թէ ամէն հայհոյանք կը ներուի, բացի հոգու հայհոյութիւնից: Բոլշեւիկական մոնարխո-կոմունիզմն այժմ զբաղուած է հոգու հայհոյութեամբ. նա ուզում է բռնաբարել դեմոկրատիան, ազատ կամքը...

Այո, վրդովուելու աւելի մեծ աոիթ կայ, որովհետեւ առայժմ ոչ մէյն մի անհատ, մի ղեկանով, այլ ամբողջ ժողովուրդը, ամբողջ դեմոկրատական Ռուսաստանն իրաւունք ունի աղաղակելու Պուշկինի խօսքերով:

ԹԱԴԷՈՍ ԱՎԴԱԼԲԵԿԵԱՆ

Վ. ԴԱՒԹԵԱՆ

ՄԵԼՊՈՄԵՆԷԻ ՍԻՐԱՀԱՐԸ

●

*Գուրգէն Մահարու մահուան տարելիցն էր, յուլիսեան չոգ մի օր Պան-
թէոնից վերադառնալիս ասաց.*

*— Հայաստանի սովետականացման 50ամեակն է, ու ես ոչ մի պիես չու-
նեմ: Այ ազայ, նստիր մի պիես գրիր:*

— Ե՞ս...

— Հա, հենց դու...

— Կատա՞կ էք անում...

— Ինչ կատակ...

— Ախր, ես ոչ բեմը դիտեմ, ոչ...

— Ինչ բեմ, ինչ բան... «Թոնդրակեցիներ» ես գրել, չէ՞, «Յատակում» ես թարգմանել, չէ՞...

— Չէ, Վարդան Նիկիտիչ, էդ մէկը չեմ կարող...

— Կարո՛ղ ես, կարո՛ղ ես... գրի՛ր...

— Չէ, Վարդան Նիկիտիչ...

*Տուն վերադարձայ, Մահարու դիրքն առա, սկսեցի սիրածս բանաստեղ-
ծութիւնները կարդալ: Չարենցի մասին յուշերը թերթեցի, յետոյ Չարենցի
առաջին հատորը առայ... «Գալանա երգեր»՝ Արմենուհի Տիգրանեանին...*

*Եւ այսպէս. Արմենուհի Տիգրանեան, աէրեանական դպրոցի բանաս-
տեղծուհի, գաչնակցական կառավարութեան անդամներից մէկի՝ Աւետիս
Ահարոնեանի հարսը, գաչնակցական վարդապետ Ահարոնեանի կինը... Չա-
րենց՝ կոմունիստ բանաստեղծ... Եւ սէր... 20 թուական, թուրքական արշա-
ւանքներ, գաղթականներ, որբեր... Եւ սէր... Ինչո՞վ դրամա չէ:*

Երեկոյեան զանգահարեցի Աճեմեանին.

— Մի բան եկաւ գլուխս...

Ու պատմեցի:

*— Աստւմ էի, չէ՞... Հենց հիմա նստիր ու սկսիր գրել: Սեպտեմբերի մէ-
կին պատրաստ լինի:*

— Մի ամսո՞ւմ...

— Մի ամսում...

— Ախր, նիւթեր պիտի ուսումնասիրուեն...

— Ի՞նչ նիւթեր.. Չգիտե՞ս... Նստիր ու գրիր...

Ճարս ինչ:

Նաեցի մի քանի օրում ղրեցի առաջին գործադուխիւնը եւ սարսայ մօտը՝ կարդալու:

Ինքն էր ու Լեւոն Հախվերդեանը:

Երբ աւարտեցի ընթերցումը, ինքը լուռ էր, Լեւոնը խօսեց.

— Պիես կայ, կերպարներն ուրուագծուում են, դիալոգներն էլ ոնց որ թէ ստացուում են...

Աճեմեանը մի խօսք ասաց միայն.

— Շարունակի՛ր... Սեպաեմբերի մէկին պատրաստ լինի:

Շարունակեցի: Սեպաեմբերի մէկին պատրաստ էր: Բայց գոհ չէի դրածիցս (դրա համար էլ մինչեւ օրս չեմ ապագրել: Զգում էի, դրամա կայ, բայց չի բացուած, մակերես է: Կերպարները հոգեբանօրէն աղօտ են: Մի խօսքով՝ պիեսը պիտի նորից գրուի, բայց ե՞րբ, ինչպէ՞ս...

Այդ բոլորից բացի ժամանակներն այնպիսին էին, որ անհնար էր ամբողջ ճշմարտութիւնն ասել հայ ժողովրդի պատմութեան այդ ամենաողբերգական հատուածներից մէկի մասին: Հրապարակի վրայ եղած նիւթերը միակողմանի էին, չատ փաստաթղթեր չէին հրապարակուած ու մինչեւ օրս էլ չեն հրապարակուել: Մինչդեռ պէտք էր ցոյց տալ նաեւ ողբերգութիւնն այն մարդկանց, ովքեր խաբուած թուրքական կարմիր դրօշակով, հայ ղինուորներին ու հայ ժողովրդին կոչ էին անում չդիմադրել, քանի որ, գիտէ՞ք ինչ, այս թուրքերը 15 թուի թուրքերը չեն, ուրիշ թուրքեր են սրանք, նոր գաղափարի թուրքեր: Արեւելեան Հայաստանում չարունակուեց 15ին սկսուած եղեռնը... Այո, բարդ, չատ ողբերգական չրջան էր դա, մինչդեռ պիեսն այդ ողբերգութեան թոյլ արձագանքն էր միայն...

Ինչ որ է: Աճեմեանը գերերը բաչխեց ու սկսեց փորձերը:

Փորձերից մի քանիսին ներկայ եղայ ու յետոյ այլեւս չգնացի: Զգացի, որ պիեսի հետ վարուում է այնպէս՝ ինչպէս ինքն է ուզում: Չէ, նեղացած չէի, պիեսը թանկ չէր ինձ համար... Բայց մի կերպար կար, որ իմ կարծիքով, ամենայայտնին էր, ու զգում էի, որ ինքն էլ է հաւանում այդ կերպարը, բայց ուզում է հանել: Դաչնակցական կառավարութեան պարագլուխներից մէկի մօր կերպարն էր դա: Ըսա պիեսի՝ ոաից գլուխ սեւեր հագած, պիտի անցնէր բեմի մի ծայրից միւսը, անցնէր համարեա՛ անխօս եւ մերթ ընդ մերթ միայն յանդիմանանքի խօսքեր նետէր որդուն, անէծքի խօսքեր նետէր Աստծուն ու ճակատագրին, իսկ երբ դաչնակցականները պիտի հեռանային երկրից, նա պիտի ապստամբէր որդու դէմ, ոչ մի կերպ չհամաձայնէր հայրենի հողը լքելու մտքին ու պիտի չհեռանար:

Ամալեա Արազեանն էր փորձում այդ դերը, եւ արդէն իսկ ստեղծել էր ուժեղ, յամառ, կամային ու ողբերգական մի կերպար:

— Այ տղայ, արի այս կերպարը հանենք...

— Ինչո՞ւ Վարդան Նիկիտիչ...

— Ինչու... ինչու... ես ի՞նչ իմանամ, ինչու...

— Ախր, լաւ է ստացուում, ուժեղ է...

— Հենց բանն էլ էդ է, որ ուժեղ է... Հազար ու մի բան կ'ասեն...

Ու յիշեցի Մահարու խօսքը. «Մեր Վարդանի աչքը չատ է վախեցած»:

Այս դրուագը պատմեցի, ցոյց տալու, թէ հոգեբանական, քաղաքական ինչպիսի մթնոլորտում, ինչպիսի կաչկանդումների մէջ էր Աճեմեանը ստեղծում իր արուեստը: Եւ ոչ միայն նա, այդ ժամանակներում արուեստի մէջ որեւէ լուրջ բան ստեղծելու համար տաղանդ ունենալը քիչ էր, հարկաւոր էր նաեւ դիւանագէտ լինել, հարկաւոր էր նաեւ հմտօրէն տիրապետել եղոպոսեան լեզուին, հարկաւոր էր ճկուելու բոլոր գաղտիքներն իմանալ... Եւ այդ բոլոր հարկաւորների մէջ ինքնաբերաբար գոհւում էր արուեստի փխրուն հո-

վին Պոտար էր յատկապէս բանաստեղծութեան, արուեստներից թերեւս ամենաանմիջականի վիճակը... Մտածում եմ. եթէ այդ պայմաններում Աճեմեանն այնու ամենայնիւ կարողացաւ հաստատել իր ինքնութիւնը, ստեղծել իր սեփական մակարդակը, ապա ինչո՞ւ կ'ասէր, եթէ նրա արուեստի հզօր թոքերը լայն ու ազատ շնչառութեան հնարաւորութիւն ունենային:

Այս կապակցութեամբ միտքս եկաւ նաեւ մի դէպք, որ թէեւ արուեստի հետ կապ չունի, բայց կարծես արձագանգում է վերեւում ասածիս: Ամնից հայրենիք էր եկել նշանաւոր ոսկրաբոյժ Համբարձում Քեքլիքեանը: Մեր հիւանդանոցներում չրջապատելուց յետոյ, ասաց ինձ.

— Ձեր բժիշկները հանճարներ են...

— Իսկապէ՞ս...

— Այո, եթէ սառնակ պործիքներով, սառնակ միջոցներով կրցած են սառնակ արդիւնքներու հասնիլ, ուրեմն հանճարներ են...

Մի փոքր վերափոխելով Քեքլիքեանի խօսքը, կարելի է ասել. եթէ այդպիսի կաշկանդումների, այդպիսի մթնոլորտի մէջ Աճեմեանը կարողանում էր այդպիսի արդիւնքների հասնել, ուրեմն, յիրաւի, հանճար էր...

Ինչ որ է: Պիեսը բեմադրուեց: Աճեմեանի հետ օթեակից պիտում էի առաջին բեմադրութիւնը:

Տհաճ անակնկալները յաջորդում էին իրար:

— Այսաեղ մի լաւ երկխօսութիւն կար, ինչո՞ւ էք հանել...

— Ես չեմ հանել,— ու տալիս էր ինչ-որ ղեկավարի անուն...

— Այսաեղ էլ նոյնը...

— Ես չեմ հանել,— ու մի ուրիշ անուն էր տալիս:

Եւ այդպէս անվերջ:

Երբ իմաւ վարագոյրը, լռեցին ծափերն ու առաջին բեմադրութեան հետ կապուած միւս անխուսափելի արարողութիւնները, բեմից յետեւ եկաւ մի այլ, այս անգամ մի աւելի բարձրաստիճան ղեկավար ու ասաց.

— Շնորհաւորում եմ, լաւ է, բայց այսինչ, այսինչ, այսինչ տեղերը պէտք է հանել:

Ես փորձեցի առարկել, բայց Աճեմեանը աչքով արեց, որ լռեմ: Թէ ինչու լռեմ, չհասկացայ:

Ծետոյ բացատրեց.

— Այ տղայ, էս մեր դերասանները մի բան որ սովորեցին, մէկ է, պիտի ասեն, էլ յետ սովորեցնել չես կարող: Էնպէս որ՝ հոդ մի անի, էդ խօսքերդ չեն կորչի...

Այլեւս ներկայ չեղայ բեմադրութիւններին. չհմացայ, իսկապէս այդպէս եղաւ... («Ի սկզբանէ էր բան...», Երեւան, 1989 — հայերէն):

ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ

Բագին «ԱՅՍԻՆՉ, ԱՅՍԻՆՉ, ԱՅՍԻՆՉ ՄԱՍԵՐԸ»...

Մեր ներկայ համարին մէջ մատնանշուած գրութիւններուն հետ համեմատած, կանխող էջերուն երեւցող բանաստեղծ Վահագն Դաւթեանի «Մելպոմենէի սիրահարը» թէեւ բոլորովին տարբեր վերաբերումի մը մասին կը վկայէ, բայց խորքին մէջ նեղմըտութեան նոյն հէնքին վրայ ձեւուած է եւ տարբեր հետեւանքի մը չի յանգիր:

Մարզոց մաքին ու գրիչին վրայ բոնացող այդ դաժան վերաբերումը չէ՞ր արդէն պատճառը, որ այնքան երկարատեւ երկունքներէ, յոգնութիւններէ եւ մեծն ու պզտիկը յոգնեցնելէ ետք, բեմադրուած թատերգութիւններէն գրեթէ ամէնքը կաթուածահար եղան տեղւոյն վրայ կամ անոնց բեմադրութեան վաղորդայնին:

Ստեղծագործական աշխարհին վրայ տարհամանուած էր այնպիսի գրութիւն մը, որ գրողի հոգիին մէջ բոնաւորէն տուն-տեղ եղած ու գործող գրաքննիչը առաջին հերթին ի՛նք կը զգուշանար գրի առնել իր մասայացումները կամ ղողահար ձեռքով կը ջնջէր «այսինչ, այսինչ, այսինչ մասերը», ապա նոյնը կ'ընէր բեմադրիչը, առանց կը յաջորդէր «այսինչ, այսինչ, այսինչ մասերը» ջնջելու լուռ կամ բարձրաձայն սպառնալիքով հանդէս եկած եւ գրականօրէն յամենայնի ոչինչ մը, եւ արգէն ինչ չէր մնար գրական կալուածի գանձարանին մէջ...

Ընթերցողը առաջին անգամ Վահագն Դաւթեանի գրչին տակ չէ, որ կը հանդիպի թատերական այս ողբերգութեան: Դերասաններն ու թատերագիրները յաճախ իրենք եւս զանգատած են ամէն ինչ պրոկրուստեան կարմիր մահիճներու մէջ լկող վերաբերումին դէմ, արհամարհելով երբեմն իրենց ասպարէզին ու ճակատագիրին սպառնացող ստոյգ վտանգները:

«Իմ կարծիքով,— *կ'ըսէր գրոյցի մը ընթացքին գերասանուհի Վարդուհի Վարդեսեան,*— Հրաչ Նիկիտիչ, երբ մենք մեր հեղինակների գործերը կը բեմադրում, իրաւունք չունենք կրճատելու, առաջ ու ետ տանելու տողեր եւ պաուզաներ անոնց իմաստը: Այսպիսի փորձ արուեց ոչ միայն *«Կենդանի դիակ»*ի, այլեւ *«Ֆալջ նագար»*ի հետ («Սովետական արուեստ» *1979, թիւ 5*):

Յօդուածներու մէջ, գրոյցներու ընթացքին կամ պաշտօնական բեմերէն ան երգիծանքով, զուսպ ընդվզումներով թէ մեղմ թախիծով դրսեւորուած նման արտայայտները չատ են թիւով, բայց վերջացնենք՝ բանաստեղծին ու ղերասանուհիին ցաւագին փորձառութիւններուն վրայ աւելցնելով երկրորդ նմոյշ մը, գայն քաղելով անգամ թատերագիր Գրիգոր Տէր-Գրիգորեանի տեսութենէն, զոր պարզեց մահկանացուի կարճ ժամանակ մը առաջ, Հայաստանի գրողներու 8րդ համագումարին.

«Այս վերջին *«Միջնաբերդ»* դրամայում ես, իմ կարծիքով, արամաբանօրէն ու հոգեբանօրէն նախապատրաստել էի հերոսիս անխուսափելի մահը· եւ որքան մեծ եղաւ զարմանքս, երբ պրեմիերիտայի ժամանակ տեսայ, որ իմ դժբախտ հերոսը փրկուում ո՛չ միայն մեռնելու միտք չունի, այլեւ՝ մի կենսահաստատ մեծախոսութեամբ դիմում է դահիճին ու առոյգ բայերով հեռանում բեմից: Դէ, ինչ, մտածեցի, երեւի Ժորա Յարութիւնեանի *«Նաչմերուկ»*ի հերոս վարդան Ադամեանի մահով արդէն սպառուել է սովետական մարդուն բեմում մեռցնելու լիմիտը» («Սովետական գրականութիւն», *1981, թիւ 7*):

Մէկուն գործին մէջ՝ յապաւում, միւսին գործին մէջ՝ յաւելում, երբեմն գործին մէջ տողերը ետ ու առաջ տանելու առնձարձակութիւն: «Սովետական ազատ աշխարհ Հայաստանի»ի մէջ հրատարակուող այս ջլատիչ պայմաններուն պովքն էր, որ կէս դար ու աւելի ժամանակ հիւսեցին մեզ ազատ աշխարհի մէջ ապրած կամակոր ճորտերը, ա՛յս պայմաններուն...